



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2617
2618

2619

2620

52
. - 84

2010

ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ
ՈՒ
ԲՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ ԱԶԳ. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՑ

ԳՐԵՑ

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԻՇՈԽԱՆ

1910

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գործիս Ա. տպագրութիւնն՝ որ բառահատոր բնական պատմութեանս Ա. հատորի համառօսութիւնն էր՝ տպագրեալ 1888ին, արդէն սպառած ըլլալով՝ զայն փոքր ինչ փոփոխութեան ենթարկելով՝ իբր լոկ մարդկային կազմախօսութիւն եւ բնախօսութիւն կը հրատարակեմ, կենդանային նիւսուածաբանական ծանօթութեանց յատուկ նախընթաց մասով մը :

Ներկայս ազգային նախակրթարանաց համար պատրաստուած է, եւ հակառակ իր փոքր ծաւալին՝ բաւական հմտութիւն խսացուած է անդ. ուսուցչին կը մնայ զայն ընդլայնել կամ յապատել ըստ իւր աշակերտաց զարգացման մակարդակին եւ ըմբռնողութեան, որով կարելի է զայս ընդհանուր նախակրթարանաց յատուկ դասագիրք մը համարել :

Ապրիլ 1910


ՏՕՔ. Ն. ՏԱՊԱԽԱՐԵԱՆ

Բերա

320 Կ1-Կ. հ. (2629)
41
15855-58




բեմն կորիգն իւր մէջ ուրիշ մ'եւս կը պարունակէ զոր կորիզակի կ'անուանեն :



Հե 1.—ՏԵՍԱԿՈՆ ԲԼ- ԳԻՑ մր

բ. բջարապանը, ա. և ուրիշ բջիջներու, հետեւարար ա-
արարչակիւր, կ. կո- մէն կենդանային հիւսուածոց ու կեն-
րիզ, կ'. կորիզակ դանեաց, որուն համար արարչակիւր
անուանեալ է։ Այս քառասարբեան հեղուկն ընդհան-
րապէս սպիտակ է և անգոյն, իր մէջ կը պարունակէ
լուծեալ թէ անլոյժ շատ մը մարմիններ որոնք այս



Զե 2. — Բազմապատկութիւն բջջաց՝ արտաքին բաժանմամբ:


Հեղուկի հետ շարունակ կը շրջին և թջիջը կը սնուցանեն : Կորիզն արարչահւթի բաղադրութիւնն ունի, անկէ կ'արտադրի, և միշտ թափանցիկ է . Նոյն է և կորիզակն : Բջջակին պատեանն ընդհանրապէս խիստ նուռու է :

Բջջաց յատկութիւնները . — Բջջներն իրարմէ կը
ծնանին և կը բազմապատկին . բջջաց բազմապատկու-
թեան երկու գլխաւոր ձեւերը կը գուցնեն ձեւ 2 և 3 :

Բջիջներն իրենց մնունդն զիրենք պատող հեղուկ-ներու մէջէ կը քաղեն, որոնք բջջային թաղանթէն թա-փանցելով՝ արարչահիւթի հետ կը խառնուին, և բջջաց

աճման կը ծառայեն . իսկ բջջաց մաշած մասերն անոնց -
մէ դուրս կ'ենեն :

Բջիջներն ապրող մարմարոց նման կը չնէին, այսինքն
օդի թթուածինը ծծելով՝ բնածխային թթու կ'արտա-
շնէն :



24. 3. — Բազմապատկութիւն բջջաց ներքին բաժանմամբ

Բջջաց արարչահիւթն երիտասարդութեան ատեն շարժման մէջ է, և այս շարժման երագութիւնն զերմութեան համեմատական է. կան բջիջներ որոց արարչահիւթի շարժումն կը պատճառէ իրենց ամբողջ մարմնոց շարժումը, երբեմն կծկումն, և երբեմն ալ թրթուումն որպէս թարթշարժենական բջիջներն :

Վերջապէս բջիջները մահ մ'ունին, վախճան մը՝
ուրկից անդին իրենց կեանքը կը դադարի:


Կարծեմ այլ եւս որեւէ կասկած չմնար թիջներն
ապրող էակներ անուանելու . ամէն մէկն առանձինն
կեանք ունին և ամէնն ի միասին նաեւ միեւնոյն նպա-
տակի , այսինքն իրենց խմբմամբ կազմուած կենդանոյն
կենաց կ'աշխատին , նման վեթակի մը որոյ ամէն մէկ
մեղուներն իրենց յատուկ կեանքն ունին , բայց ամէնն
ի միասին ընդհանրութեան՝ այսինքն իրենց խումբին
շահուն կ'աշխատին :

Բջջաց մասին տուած ծանօթութիւններս կնքելու համար անգամ մ'ալ կրկնեմ թէ կենդանիք ի սկզբան բջիջէ մը կը բաղկանան, որ բաղմապատկութեամբ և

ձեւափոխութեամբ կը կազմեն կենդանային հիւսուած-ներն որոց միութեամբ կազմեալ են կենդանիներն : Հիւսուածաբանութիւնը կ'ուսուցանէ այդ ձեւափոխութիւններն :

Կենդանային հիւսուածները կարծր են կամ հեղուկ . կարծրներն են վերնամաշկային, շարակցական, աճառային, ոսկրային, մկնային և ջղային հիւսուածներն . իսկ հեղուկներն են արիւնն և աւիշն :

Վերնամաշկային հիի ՍՈՒԱԾԻՆ. — Այս հիւսուածը կը բաղկանայ քիչ կամ բնաւ այլակերպեալ բջիջներէ՝ որք մի կամ բազմաթիւ խաւերով կը պատեն կենդանիաց ներքին ու արտաքին մակերեւոյթներն որպէս մորթն, թաղանթներն, գործարանաց և խողովակաց ներքին երեսներն : Վերնամաշկային հիւսուածն հինգ կարգի կը բաժնուի :




Զե 4. — Միախաւեան վերնամաշկ


1. Միախաւեան վերնամաշկ. Իրարու քով շարուած տափարակ և ընդհանրապէս վեցանկիւն բջիջներէ կազմեալ է (ձեւ 4) : Այս հիւսուածն կը պատէ բերնի հողաթաղանթն, թոքային բլթակներու ներքին մակերեւոյթն, արեան խողովակաց ներքին երեսներն, շաղանթներն, եւն :

2. Բազմախաւեան վերնամաշկ. — Ինչպէս իր ա-

նունն ալ կը յայտնէ՝ բջջային բազմաթիւ խաւերու իրարու վրայ դիզուելով կազմուած է (ձեւ 5) . ստորին խաւի բջիջները գնդածեւ են, յաջորդ խաւերունը՝ ձուածեւ, և քանի վեր ելնենք՝ այնչափ կը տափակնան : Այս հիւսուածն կը պատէ մորթի ամբողջ մակերեւոյթն, կոկորդի և ստուգնի հողաթաղանթներն, մզային փամ-



Զե 5. — Բազմախաւեան վերնամաշկ



Զե 6. — Վերնամաշկ զլանաձեւ բջջաց


փուչտի ներքին կողմն եւն : Մազերն, եղունգներն և եղինակներն բազմախաւեան վերնամաշկային արտադրութիւններ են :

3. Վերնամաշկ զլանաձեւ բջջաց . — Այս վերնամաշկն որ մասնաւորապէս որկորի և աղեաց հողաթաղանթից մակերեւոյթներն կը պատէ, ուղղահայեցաբար և կարգաւ իրարու քով շարուած գլանաձեւ բջիջներէ կազմեալ է (ձեւ 6) :

4. Վերնամաշկ բարբարժենի բջջաց . — Ասոնց բըջիջներն առաջիններու նման են և անոնց պէս իրարու քով շարուած . միայն ամէն մէկ բջիջի վերին աղատ մակերեւոյթն 10-13ի չափ թարթչանման մազեր ունի (ձեւ 7)՝ որք միշտ կը թրթռան : Այս վերնամաշկը չնչառեւտրական գործարանի ներքին մակերեւոյթն և ծննդական գործարանաց մասնաւոր գործիները ներքնաբար կը ծածկէ :


5. Գեղձային վերնամաշկ . — Ամէն կարգի գեղձեր ներքնաբար գնտածեւ բջիջներու խաւով մը ծածկուած են (ձեւ 8) :

ՇԱՐԱԿՑԱԿԱՆ ՀԻՒՍՈՒԱԾՔ.—Շարակցական կ'անուանին այն ամէն հիւսուածներն՝ որք մարմնոյ զանա-



Ձև 7.—Վերնամաշկ թալթշարժենի բջջաց


զան հիւսուածները, դրութիւններն և գործիներն իրարու կը կցեն, որպէս ենթամորթեան շարակից խաւն որ



Ձև 8.—Խողովակային պարզ զեղձիկ մը

Ձև 9.—Շարակցական հիւսուածոց երեք տարրական մասերը ա. շարակցական թշից, բ. առաձիկ թելեր, գ. շարակցական տրցակներ, դ. գունաւորիչ թշիցներ

մորթային դրութիւնը մկնային դրութեան կը կցէ, լարերն որք մկներն ոսկերաց հետ կը կապեն. մարմնոյ զազան թաղանթներն և խողովակներն եւս շարակցական տարրերէ բաղկացեալ են և այս հիւսուածոց կարգը կը դասուին :



Ձև 10.—Աճառի մը հաստածն (350 անգամ մեծցած)

Շարակցական հիւսուածներն երեք տարրական մասերէ կը բաղկանան (ձեւ 9): 1. Շարակցական թշիցներն որք ընդհանրապէս տափարակ և բազմակողմեան թշիցներ են, շատ անգամ աստղաձեւ. Եթէ ճարպային նիւթեր պարունակեն՝ ճարպային թշիցներ կ'ըսուին, իսկ եթէ գունաւորիչ նիւթեր պարունակեն՝ գունաւորիչ թշիցներ կ'անուանին: 2. Առաձիկ թելերն որք խիստ երկարցած թելանման թշիցներ են: 3. Շարակցական տրցակներն որք երկար ու տափարակ թշիցներ են՝ և ըստ երկարութեան շատ մը բաժանումներ ունին:

Ամէն շարակցական հիւսուածներ, թաղանթներ և խողովակներ այս երեք տարրական մասերէ կազմնալ են. կան որ անսոնց երկուքն և այլք միայն մին կը պարունակեն: Ենթամորթեան շարակցական խաւն այս երեքէն միանգամայն կազմուած է. բջջային մասն երբեմն խիստ առատ լինելով առանձին ճարպային խաւ մը կը ներկայացնէ: Լարերն գրեթէ ամբողջովին շարակցական տրցակներէ բաղկացեալ են, թէպէտ ունին առաձիկ թելեր և շարակցական թշիցներ: Մաշկը շարակցական տափարակ տրցակներէ և առաձիկ թելերէ կազ-


մուած է, շարակցական բջիջներ ալ կը պարունակէ . թաղանթները, պատեաններն և արեան խողովակներն այս երեք տարրական մասերէ բաղկացեալ շարակցական հիւսուածներէ կազմեալ են :

Ա. ՃԱՐԱԿՑՈՒՅԹԻՆ ՀԻՒՍՈՒՅԹԸ. — Աճառային հիւսուածն սաղմնային վիճակի մէջ ներքին բաժանմամբ աճող բջջաց խումբեր կը ներկայացնէ (ձեւ 3). այս բջջաց պատեաններն հետզհետէ անառիջ անուանեալ մարմնոյ մը կը վերածուին . աճառի մը կարուածքն մեզ պիտի ներկայացնէ աճառի մէջ թաղուած ծուածեւ բջիջներ՝ որոց աճման զանազան անցքերն իսկ անդ կրնանք նշմարել (ձեւ 10): Աճառային հիւսուածն երբեմն շարակցական տարերց հետ խառն է, և որ ատեն կ'անուանի նեարդային աճառ, առաջիգ աճառ:

ՈՍԿՐԱԿՑՈՒՅԹԻՆ ՀԻՒՍՈՒՅԹԸ. — Ոսկրերն երեք մասերէ կը բաղկանան . բուն ոսկրն, զայն պատող թաղանթն կամ ոսկրամիզն և ծուծն:

Ոսկրային նուրբ թիթեղներու մանրացուցական քըն-նութեամբ կրնանք հաստատել անդ՝ ընդ երկարութիւն ձգեալ և իրարու հետ հաղորդակցող խողովակներ, որք ծիւղերու կը բաժնուին և կը հաղորդակցին թէ՛ իրենց դրացի նոյնասեռ խողովակաց և թէ՛ կեդրոնական ծուծային լայն խողովակին հետ, և կը վերջանան ոսկերաց մակերեւոյթի վերայ, հետեւաբար ոսկրամիզ թաղանթն ծուծին հետ յարաբերութեան կը դնեն . այս խողովակներն առաջին անգամ նշմարողին անուամբ Հաւեռային խողովակներ կ'անուանին . ասոնց շուրջը շրջանակաձեւ շարուած են խորչեր (ձեւ 11) որք ոսկրային հերափողիկոներով իրարու հետ կը հաղորդակցին . այս խոռոչներն ոսկրային բջիջներ կ'անուանին զի ասոնք ի սկզբան բջիջներ եղած են ու ապա իրենց պատեաններն ոսկրացած են :

Սաղմնային սկզբնական վիճակի մէջ ոսկրային և աճառային հիւսուածներն իրարմէ երբե՛ք տարբերութիւն չունին, երկուքն ալ ներքին բաժանմամբ աճող բջիջներէ բաղկացեալ են, իրենց պատեաններն աճառիտ կը



Ձեւ 11.—Բնդ լայնութիւն կտրուած ոսկր մը 350 անգամ մեծցած, ուր կը տեսնուին Հավեռային խողովակներն և զայն շրջապատող ոսկրային բջիջներն և իրենց հաղորդակցութեան ոսկրային հերափողիկներն

Ձեւ 12.—Բարձոսկրի մը ոսկրակազմութեան երեք կեղուններն

Ձեւ 13.—Հարթ մկանի մը բջիջն (350 անգամ մեծցած)

կազմին, որոց մէջ բջիջք կը շարունակեն իրենց աճումն . արդ՝ այս հիւսուածոց մի մասը կրային աղեր ստանալով աճառիտը կը կարծրանայ և կը կազմէ ոսկրը . ուրեմն ոսկրն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ կրային աղերով կարծ-

րացեալ աճառ մը : Ոսկերաց գործարանաւոր տարրն ու-
կրիս կ'անուանի , որ մանկանց ոսկերաց մեծ մասն կը
կազմէ . այս պատճառաւ անոնց ոսկերեն կակուղ են և
դիւրաւ կը փոխեն իրենց ձեւն , հետեւարար զգուշութիւն
ընելու է մինչեւ որ հանքային աղերով կարծրանան :

Ոսկերաց ամէն մէկ մասերն ի միամին չեն ոսկերա-
նար . նախ մի կամ բազմաթիւ ոսկրակազմութեան կեղ-
րոն անուանեալ կէտերն կը կարծրանան (ձեւ 12) , ապա
այս կեղրոններու շուրջերը շարունակաբար կարծրանա-
լով՝ կազմութեան շրջանակներն իրարու կը մօտենան և
վերջապէս իրարու կցուելով կազմութիւնը կը լրանայ :
Մարդոց կմախքն 20-24 տարեկանին միայն արողջովին
կ'ոսկրանայ :

Ոսկերաց հանքային մարմնոյ 9/10 85ը կրային լուսած-
նատ է , 10ը կրային բնածխատ և մնացեալն կրածնային
և մագնիտային աղեր :

Ոսկերամիզն շարակցական հիւսուածէ կազմեալ թա-
զանթ մ'է , ոսկերաց մննդեան յատուկ հիւթ մը կը
պատրաստէ , և Հաւեւսային խողովակաց միջոցաւ ոս-
կերաց կը մատակարարէ :


Ծուծն երկար ոսկերաց կեղրոնական խողովակը կը
լեցնէ , երեք կարգի թղիջներէ (ճարպալին , ծուծային
և հակայական) բաղկացեալ է . ծուծի գոյնը կը փոխուի ըստ
տից և որ ճարպային թղջաց աւելնալուն կը վերագրուի :

ՄԿՆԱՅԻՆ ՀԻՒՍՈՒԱԾՈՒԾ. — Մկանունք՝ զորս հասա-
րակօրէն միս կ'անուանեն , կենդանեաց մարմնոց մեծ
մասն կը կազմնն և որոց կծկման պարտինք կենդանային
շարժումներն : Մկանունք երկու տեսակ են . հարթ և
խաւացեալ :

Հարթ մկներն երկարեալ տափարակ թղիջներէ բաղ-
կացեալ են (ձեւ 13) . հարթ մկնանց կծկման ատեն
թղիջները կը կարճնան և կը թանձրանան . ասոնց վրայ

խաւային մկանանց նման շերտեր չտեսնուելուն՝ հարթ
մկանունք կ'անուանին :

Խաւային մկանունի՛ մեր բուն միս անուանածներն
են : Այսպիսի մկան մը ընդլայնութեան հաստածն եթէ
խոշորացոյցով քննենք՝ պիտի հաստատենք որ մկնային
նեարդեցու արցակներէ բաղեցացեալ է (ձեւ 14) , և այս
ամէն մէկ արցակները շարակցական հիւսուածով մը




Ձեւ 14.—Մկնն մը ընդ լայնութիւն հաստում 150 անգամ մեծցած

Ձեւ 15.—Երկու մկնային նեարդեր (350 անգամ մեծցած) որոց մին կորու ըլլալով մկնանեարդամիզն թաղանթն կը տեսնուի

պատեալ և իրարու միացած են : Խաշած մսին վրայ
ամէն ոք այս նուրբ նեարդերն նշմարած է . այս մկնա-
յին նեարդերն մանրացոյցով եթէ քննենք՝ պիտի հաս-
տատենք այս թելերուն լայնութեամբ կարմիր և սպի-
տակ խաւեր , իրարու վրայ շարուած (ձեւ 15) , որոց կը
պարտին իրենց խաւացեալ անունն :

Հաստատուած է արդէն թէ մկնային նեարդերը սաղմային վիճակին մէջ բջիջներ կը ներկայացնեն, որք երկարելով և կրկին ու կրկին մազմզուկներու բաժնուելով՝ նեարդերու արցակաց կը վերածուին. բջջային պատեանն նուրբ թաղանթի մը կը վերածուի որով պատեալ է իւրաքանչիւր մկնային նեարդ. երեխն ասոնց մէջ կորիզներ և կամ ասոնց հետքերն կը տեսնուին:

ԶՂԱՅԻՆ. ՀԻՒՍՈՒՄԾ. — Զղային հիւսուածն որ կենդանեաց զղային դրութիւնը կը կազմէ, երկու տարրա-



ԶԿ 16.— Զղային բջիջներ (100 անգամ մեծած)

կան մասերէ կը բաղկանայ. զղային բջիջներ և զղային խողովակներ:

Զղային բջիջներն մասսամբ ճարպային բջջաց կը նմանին, զղիս անուանեալ հեղուկ մը կը պարունակին (ձեւ 16). ասոնց խմբմամբ կազմուած են զղային դրութեան կեղրաններն. այս բջիջները բազմաթիւ ճիւղերով իւրարու և զղային խողովակաց հետ կը հաղորդակցին:

Զղային խողովակները խիստ նուրբ խողովակներ են, երեք որոշ մասերէ կը բաղկանան. պատեան մը, կեղ-


րոնական առանցք մը և զղիս անուանեալ ջղային հեղուկ մը՝ որ այս խողովակները կը լեցնէ (ձեւ 17): Ջղային խողովակներն իրենց երկարութեամբ քննելով՝ պիտի հաստատենք որ, “ջղափողն հաւասար հեռաւորութեամբ խեղդումներ ունի, ուստի զիւրին է հետեւցնել թէ՝ այս խողովակները բջջաց միացմամբ կազմուած են, ասոր իր մի երկրորդ փաստ՝ գրեթէ ամէն հատուածի մէջ կորիզ մը կայ. կը կարծուի որ կեղրոնական առանցքն այս բջջաց կարծրացեալ և միացեալ արարչահիւթը կը ներկայացնէ: Զղերն այս ջղային խողովակաց արցակներն են:

ԱՐԵԽՆ. — Արեխնը կենդանեաց կենսատու հեղուկն է: Արեխն հեղուկ մասը բնականէն գեղնագոյն է, իր մէջ պարունակեալ գնդակներն են անոր գոյն տուողները, ընդհանուր առմամբ արեխն կէսը գնդակ և կէսն հեղուկ կրնանք ենթադրել:

Գնդակներ. — Արեխն գնդակներն երկու տեսակ են. կարմիր և սպիտակ. սպիտակ գնդակաց քանակութիւնն խիստ նուազ է և կարմիր գնդակաց այնպէս կը համեմատի՝ որպէս 1 առ 300-500: Արեխն գնդակներն կարմիր թէ սպիտակ՝ բջիջներ կը ներկայացնեն (ձեւ 18):

Կարմիր գնդակաց ձեւը կը տարբերի ըստ կենդանային դասուց. Սանաւորացն տապալոյ քարերու նման կլոր, տափարակ. և կեղրոնը դէպի ներս քաշուած է. այս դասէն միայն ուղտի և ՁԿ 17. — Զղային այծուղտի արեխն գնդակները ձուածեւ խողովակները, մին խիստ մեծած են. խիլ թռչնոց, սողնոց, գորտաղ-գեաց և ձուկերու արեխն գնդակները միշտ ձուածեւ են:


Արեխն գնդակաց մեծութիւնն ըստ կենդանային դասուց, կարգաց և տեսակաց կը տարբերի, մարդոց արեխն



գնդակաց տրամագիծն է 0,007 չվմ, հաստութիւնը
0,002 չվմ:

Մէկ խորանարդ հազարամէթր արևան մէջ պարու-
նակեալ գնդակաց քանակութիւնն ըստ կենդանեաց տե-
սակին կը տարբերի, մարդոցը 5 միլիոնի կը համնի:

Արեան կարմիր գնդակներն իրենց ներկը զնդաներ-
կիս անուանեալ բիւրեղանալի քառաստարբեան մարմնոյ
մը կը պարափն:



Զե. 18. — Արեան կամիլ մը մանրացոյցով դիտուած, ուր կը տեսնուին իւր
կարմիր և սպիտակ գնդակներն ։ Քառակուսոյ իւրաքանչիւր կողմը $\frac{1}{3}$
հազարերորդ հազարորդամէթր է

Սպիտակ գնդակները՝ գնդաճեւ բջիջներ են. մար-
դոցն 0,009 չվմ տրամագիծ ունի. կը կարծուի որ սպի-
տակ գնդակները կարմիրներու կը վերածուին:

Արեան հեղուկն. — Արեան հեղուկն երկու մասերէ
կը բաղկանայ. 1° Նիարդիս որ արևան $\frac{3}{1000}$ մասը կը ներ-
կայացնէ և հեղուկ մասի մէջ լուծեալ կը մնայ, բայց

օդի թթուածնի աղդեցութեամբ կարծրանալով թելերու
կը վերածուի և արեան գնդակներն իւր մէջ առնելով
կը մածնանայ և ամբողջ արիւնը գնդողի մը կը վերա-
ծէ: Արիւնն աւելի հարուածով ծեծելով՝ նեարդիտն
աւելի ճիւղերուն վրայ կ'ելնէ և այլ եւս արիւնը չի մած-
նանար: 2° Շիմ կ'անուանի արեան հեղուկի նեարդիտէ
զուրկ մասն որ լուծեալ կը պարունակէ իր մէջ սպիտա-
յին մարմիններ, միզիտ, միզիտային թթու, ճարպային
ու շաքարային նիւթեր, զանազան աղեր, ևայն:

Ա.Ի.Ի.Շ. — Աւիչն արեան բաղադրութիւնն ունի.
կը բաղկանայ սպիտակ գնդակներէ որք մեղ ծանօթ են,
և հեղուկ մասէ մը որ արեան հեղուկին շատ կը մերձե-
նայ: Աւիչն արեան նման կը մածնանայ չնորհիւ լուծեալ
նեարդիտի:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ե

Բ Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ւ Ն

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

Մարդկային կազմախօսութիւնն կ'ուսուցանէ մարդուն մարմնոյն գործեաց, դրութեանց և գործարանաց կաղմն, իսկ բնախօսութիւնն կը բացատրէ անոնց պաշտօններն և յառաջ բերած երեւոյթներն, զորս գործառութիւններ կ'անուանեն :

Հիւսուած մը և կամ մի քանի հիւսուածոց խառնութ մը երբ յատուկ ձեւ մը կ'առնու և որոշ պաշտօն մ'ունի՝ զործի կ'անուանի, որպէս ոսկոր, մկան, ջլո՛ մէկ հիւսուածով, իսկ որկոր, թոք, սիրտ և այլն՝ մի քանի հիւսուածոց խառնուրդով կազմուած գործիներ են :

Միեւնոյն հիւսուածէ կազմեալ գործեաց միութիւն մը՝ որ մի ընդհանուր պաշտօն ունի, դրութիւն կ'անուանի, որպէս ոսկրային, մկնային, ջլային, չնչերակային և մորթային դրութիւնները։ Տարբեր պաշտօններ և սակայն միեւնոյն նպատակ ունեցող գործեաց միութիւն մը՝ զործարան կ'ըսուի, որպէս բերան, կոկորդ, սառուգն, որկոր, նրբաղի և ստուարաղի, որք յատուկ պաշտօններ ունեցող գործիներ են, բայց ամէնն ալ մարսողութեան կը ծառային, և ասոնց միութիւնն մարսողական գործարան կը կոչուի։

Կենդանային և մարդկային մարմնոյ դրութեանց և գործարանաց գործառնութիւնք երեք կարգի կը բաժնուին։

Ա. Սննդական գործառնութիւնն ասոնց նպատակն է կենդանային և մարդկային կենաց պահպանութիւնն ։

Հարունակութիւնն և չորս հատ են. մարտողութիւն, շնչառեւսրութիւն, արեան շրջան եւ զատուցմունք։ Եթէ այս երեւոյթներէն մին իսկ գործելէ դադրի՝ մարդու և կենդանեաց կեանքը կը վերջանայ։

Բ. Յարաբերական գործառնութիւնն պաշտօն ունին կենդանիներն և մարդիկ զիրենք շրջապատող էակաց հետ յարաբերութեան մէջ դնել, և որք երեք հատ են՝ զգայնականաւրիւն, կամաւոր շարժումն և ձայն, որոց դադարմամբ մարդիկ և կենդանիք կրնան ապրիլ։

Գ. Ծննդական գործառնութեանց միջոցաւ կենդանիք և մարդիկ իրենց նման ուրիշներուն ծնունդ կուտան։

Սննդական և ծննդական գործառնութիւններն ըռւսոց եւս վերաբերենուն՝ բուսային կենաց գործառնութիւնն ալ կ'անուանին. իսկ յարաբերականներն միայն կենդանեաց և մարդկանց յատուկ լինենուն՝ կենդանային կենաց գործառնութիւնն կը կոչուին։



ՄԱՍՆ

Ս Ն Ն Գ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ռ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք


ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Մարսողական գործարանն մարմնոյ իրանին երկարութեամբ ձգեալ և մարմնոյ հասակին 7-8 անգամին հաւասար երկարութեամբ խողովակ մ'է, որոյ վերին

անցքն է քերանն և ստորինը սրբանն: Այս խողովակի զանազան մասերն քերան, կոկորդ, սուլգն, որկոր, նրբաղի և սուլարաղի՝ մարսողական գործարանի գործի ներն են (ձեւ 18): Այս գործարանն ունի եւս օժանդակ




ՁԵՒ 18.—Մարսողական գործարան և իր գործիներն

ս. սուլգն, սր. որկորարերան, ո. որկոր, ս. սոր, մ. մասն, Փ. փայծաղ, Լ. լեռաղ, ՓԼ. կեռուական փամփուշ, Բա. նրբաղի, ՍԱ. սուլարաղի, Ո. ուղղաղի, Ա' սրբան:

գործիներ՝ գեղձեր՝ որք ներքին թաղանթին թանձրութեան մէջ զետեղուած կամ գործարանէն դուրս և մօտ հաստատուած են, որոց արտադրած հիւթերն խողովակին մէջ թափելով մննդոց մարսումն յառաջ կը բերեն:

Բերան.—Բերանն խոռոչ մ'է, որոյ սահմաններն են, վերէն՝ քիմքն, յետնակողմէն՝ քմաց վարագոյրն որ լեզուակով մը կը վերջանայ, վարէն՝ լեզուն և ստորին ծնուան, կողմնաբար՝ այտերն, առջեւէն և կողմնաբար՝ ատամանց աղեղներն:

Ատամանց աղեղներն ծամելեաց գործին կը ներկա-




ՁԵՒ 19.—Ընդերկարութիւն կտրուած լեմատամ մը
Փ. փղոսկր, Լ. կիսուած, Ը. Ը. Ը. շաղախ, Ա. ատամնամիս, Զ. ատամնաբիղ, Ալ. կեդրոնակամ պարապուրիւն

յացնեն: Ատամանց ծնութից եզերաց ատամնային կապիճ անուանեալ խորութեանց մէջ ցցուած մասն արմաս, իսկ վերին ծասքող մասն զագար կամ պասկ կ'անուանի:

Մարդոց ատամունք 4 նիւթերէ բազկացեալ են (ձեւ 19). փղոսկրն՝ որ անոնց մեծ մասը կը կազմէ, իր կազմութեամբ ու բազալրութեամբ ուկորի կը նմանի,

ասոր կեղրոնը կը գտնոի առամենամիս անուանեալ կակուղ մարմին մը՝ որ ջիղեր և արեան խողովակներ կ'ընդունի, որոյ միջոցաւ ատամունք զգայականութիւն և մնունդ կ'առնուն: Ատամանց պատկին պատեալ է ատամեակիտուած անուանեալ մի ամենակարծր մարմինէ, որ ակրաները կը պաշտպանէ լնդդէմ զիրենք մաշեցնող և կարծր մարմնոց: Շադախ անուանեալ մի ոսկրային մարմին կը ծեփէ ատամանց արժամաներն և զայս իրենց կապիճներուն մէջ կը հաստատէ:

Ատամանց թիւը չափահամներու համար 32 է, որք իրենց ձեւով ու պաշտօնով երեք կարգի կը բաժնուին (ձեւ 20): Հերձատամունից տափարակ ու սրածայր գա-



Հա 20.—Մարդկային զանանան ատամունք

հ. հերձատամունից, ց. շետամունից, փլ. փոյր լեսնատամունից, մլ. մած լեսնատամունից

գաթներ և պարզ ու կոնածեւ արժամաներ ունին. 8 հատ են, իրաքանչիւր ատամանային աղեղանց մէջ 4 ական, ուր միջին և առաջակողմեան մասը կը գրաւեն. վերին և ստորին ծամելեաց հերձատամունքներն իրարու զալով մկրատի նման սննդեան մարմիններն կը կտրեն: Շնատամունից, աւելի երկայն են, արժամանին կոնածեւ և գագաթնին սուր է, 4 հատ են, իրաքանչիւր աղեղանց մէջ երկուքական, մէկ հատ հերձատամանց աջ և մէկ

հատ ձախ կողմը զետեղեալ. ասոնց պաշտօնն է մնունդներն և մասնաւորաբար մսերը բզկտել: Լեսնատամանց զագաթի վերին մակերեւոյթն տափարակ է և խորտուբորտութիւններ կը կրէ, ասոնք 20 հատ են, 10 իրաքանչիւր ծամելեաց մէջ, և 5 ական ատամանային աղեղանց մէն մի ճայրերն՝ որոց 2 առաջիններն փոյր լեսնատամունից կ'անուանին զի պարզ ու կոնածեւ արժամաներ ունին, իսկ 3 վերջիններն մեծ լեսնատամունից կը կոչուին և որք երկու՝ երբեմն ալ երեք արժամաներ ունին, որոց միոյն ճայրը մերթ կեռի նման կոր է. ասոնց վերջիններն իմաստութեան ակրանեւը ալ կ'անուանին: Լեսնատամունք են ծասքողութեան բուն գործիններն՝ որք իրարու վրայ աղօրիքի քարերու նման կը շարժին և կը մանրեն սնունդներն, այս նմանութեան պատճառաւ աղօրիք ալ կը կոչուին ասոնք:

Մանկունք առանց ակռայի կը ծնին, իրենց ծննդեան 6րդ ամսուն առաջին հերձատամունք կը տեսնուին, ապա միւսներն և այսպէս մինչ երկրորդ լեսնատամունին՝ որք 2րդ տարւոյ վերջերն միայն ծնունդ կ'առնուն: Այս 20 հատն կարնային ատամունից կ'անուանին՝ որք մինչ 7 տարեկանին միակ ծամելիքն կը ներկայացնին, և այն ատեն տակէն ուրիշներ ծնունդ առնելով՝ առաջիններն կը թափին, այս փոփոխութիւնն կը տեւէ մինչ 12 տարեկանն: Երկրորդական ատամանքն աւելի հաստատապէս արժատացած են, ասոնց վրայ կը բարդուին նաև մեծ լեսնատամունք, որոց վերջիններն 20-24 տարեկանին կը բունին:

Մարսողական գործարանի զեղձերն պարզ են կամ ողկուզային. պարզերն այս խողովակի հուզաթաղանթից մէջ թաղուած փոքրիկ խորութիւններ են՝ լի գեղձային բջիջներով (ձեւ 8) որոց ամէն մէկ բջիջն հոյզ կ'արտադրէ, որ կը հաւաքուի այդ գեղձին մէջ՝ որոյ բերնէն դուրս կը ծորի. իսկ ողկուզայիններն խաղողի ողկոյզի

կը նմանին՝ որոց ամէն մէկ գնդակներն առաջնոց նման գեղձային բջիջներով լի են, որոց հոյզերն՝ իրենց երրորդական և երկրորդական խողովակներու միջոցաւ վերջապէս ընդհանուր խողովակի մը մէջ կը համինին, որ ողկոյզի կոթունն կը ներկայացնէ և որոյ միջոցաւ մարտողական խողովակի մէջ կը թափին:

Լորձնային գեղձերու ոմանք պարզ են և այլք ողկուզաձեւ: Պարզերը բազմաթիւ ու ցիրուցան են և բերնի հուզաթաղանթի մէջ թաղուած. իսկ ողկուզաձեւերն երեք դոյգ են, յարականցային, ենթակալային և ենթակեզուեան որոց անուններն կը բացատրեն իրենց դրաւած դիրքերն:

Կոկորդ. — Կոկորդ կ'անուանի քմաց վարագոյքն անդին գտնուած միջոցն՝ որ մարտողական և չնչառեւատրական գործարանաց միանգամայն գործի մ'է. սահմաններն են, առջեւէն՝ քմաց վարագոյքն, վերէն՝ գանկի ուղրեայ տուփն, ետեւէն՝ ողնայարի սիւնակի վերին մասն, վարէն՝ ստուգն որ մինչ որկորն կ'իջայ, և խըռչափողն՝ որ թոքերը կը տանի:

ՍՏՈՒԳԻ. — Ստուգն սննդոց ճանապարհն է որ կոկորդն ուղղահայեացարար կ'իջնայ մինչ ցատոծանին, զոր ճեղքելով որկորի մէջ կը բացուի, որոյ մուտքն որկորաբերան կ'անուանի:

ՈՐԿՈՐ. — Որկորն զոր հասարակօրէն ստամու կ'անուաննեն, ստուգնի և նրբաղեաց միջանկեալ մարտողական խողովակի մը ընդլայնեալ մասն է, որ որովայնի վերին կողմը հորիզոնաբար պառկած է 25 հ'մ երկարութեամբ և 8 հ'մ լայնութեամբ նուագատիկի մը կը նմանի, որոյ մի ծայրն որկորաբերանով ստուգնի հետ կը յարաբերի, իսկ միւսն նրբաղեաց հետ՝ որ կ'անուանի: Որկորի սահմաններն են վերէն՝ ստոծանին, վարէն՝ աղիքներն, աջէն՝ լեարդն, իսկ ձախէն՝ փերէն՝ ստոծանին:

ՈՐԿՈՐԸ շորս խաւերէ կը բաղկանայ. ներքին խաւը հուզարաղաներ մ'է, իր թանձրութեան մէջ թաղուած ունի պարզ ու ողկուզաձեւ գեղձեր. հուզաթաղանթին կը յաջորդէ շարակցական խաւ մը՝ որ զայն մինային խաւին կը կցէ. մկնային խաւն հարթ է և խիստ կարեւոր, որ կծկմամբ որկորն ամէն կողմէն կը ճմէ՝ որ կորային հոյզն սննդոց հետ խառնելու համար և իրեն առաձգականութեամբ շատ կրնայ ընդլայնիլ. վերջապէս մի չորրորդ՝ շնային խաւ կը պատէ որկորն, որ որովայնի բոլոր գործիներն ընդգրկող շաթաղանթի մը մասն է:


ՈՐԿՈՎԱՅՆԻ շնարադանքն բերանը գոց պարկ մ'է, որոյ մի երեսը կը պատէ որովայնի ներքին մակերեւոյթն և միւսն կ'ընդգրկէ ուրոյն ուրոյն՝ որկորն, փայծաղն, աղիքներն, երկամունքն, ծննդական գործարաններն և վերջապէս որովայնի բալոր գործիներն:

Փայծաղն որկորի ձախակողմն կը գտնուի, մարտողական գործառնութեան հետ երեք վերաբերութիւն չունի:

Լեարդն որկորի աջակողմն կը գտնուի. սա կրկնակ գեղձ մ'է, կը պատրաստէ շաբար և լեղի. առաջինն արեան մէջ կ'անցնի, իսկ երկրորդը նրբաղեաց առաջին մասին մէջ կը թափի. պիտի խօսինք առ այս զատուցման առթիւ:

ՆՐԲԱՂԻ. — Նրբաղին որկորի շարունակութեամբ 8 մէթր երկարութիւն ունեցող խողովակ մ'է (ձեւ 22) որ երեք մասի կը բաժնուի. առաջնայի կ'անուանի անոր առաջին անշարժ մասն՝ որ 12 մատնաչափ երկարութիւն ունենալուն երկուամեամբ աղիք ալ կ'անուանի. նրբաղեաց մնացեալ մասն շարժուն է և որոյ առաջին կէմն դատարկայի կ'անուանի զի ընդհանրապէս դատարկ է, և վերջին մասն գալարայի կը կոչուի՝ զի միշտ զալարման մէջ է. նրբաղին 4 խաւերէ բաղկացեալ է որք են, ներսէն ի դուրս.

1. Հուզաբաղանքին որ գեպի վար դարձած ծալքեր ունի, մազանման անթիւ մասերով ծածկուած է (Ձև 21) որոց խրաքանչիւրն չնչերակային, երակային և աւշային խողովակաց ճիւղեր կը պարունակէ : Հուզաթաղանթն իր մէջ թաղուած բազմաթիւ պարզ ու բաղադրեալ փոքր գեղձեր ունի : 2. Շարակցական բջջային խաւ մը



Ձև 21 . — Նրբաղեաց հուզաթաղանթի մանրացուցով տեսքն


1. և 2. հուզաբաղերի մազանեւ ցցուած մասերն, 3. լիպկրիւնի գ'ողձերու բերանեերն, 4. 5. փամփշային գեղձերն

որ հուզաթաղանթն մկնային թաղանթի հետ կը կցէ : 3. Մկնային խաւն, որոյ ստորին մասի նեարդերն շրջանակային են, իսկ արտաքիններն ընդերկարութիւն ձգեալ : 4. Շնային խաւն որ որովայնի շնաթաղանթն է :

Մասնն, որ առաջնազեաց ծալքին մէջ զետեղեալ է, ողկուզային գեղձ մ'է և երկու խողովակներով առաջնազեաց մէջ կը թափէ իր արտադրած հիւթն :

Սօւարաղի . — Նրբաղին ստուարազեաց ծայրէն մի քիչ վեր ուղղանայեացաբար անոր մէջ կը բացուի : Ստուարաղին երեք մասի կը բաժնուի (Ձև 22), կուրաղի, յամրաղի և ուղղաղի :

Կուրաղի կ'անուանի ստուարազեաց ծայրէն մինչ նրբաղեաց հետ հաղորդակցութեան տեղն : Կուրաղեաց յաջորդող և այս (Π) ձեւն ունեցող մասն յամրաղի



Ձև 22 . — Աղիքներն և իրենց զանազան մասերն ա. ա. առաջնային, դ. դ. դատարկային, գ. գ. գալարայի, զս. գալարալոյ յամրաղեաց մէջ բափած տեղին, կ. կուրաղի, յ. յաւելուած կուրաղեաց, վյ. վերեկակ յամրաղի, հյ. հորիզոնական յամրաղի, վյ. վայրիչակ յամրաղի, այ. օիլունամեւ յամրաղի, ուղղաղի, ս. սրբան :

կ'անուանի և որոյ շարունակութեամբ ուղիղ մասն ուղղաղի կը կոչուի :

Ստուարաղին նրբաղեաց չորս խաւերէն կաղմեալ է . հուզաբաղերն ո՛չ ծալք, ո՛չ մազանման մասեր և ո՛չ գեղձ ունի . մկնային շրջանակաձև նեարդերն՝ սրբան

հասնելով կծկական զօրաւոր օղակ մը կը կազմեն, իսկ արտաքին ընդերկարութիւն ձգեալ նեարդերն հաւասարապէս տարածուած չեն, այլ երեք ժապաւէններ կը կազմեն՝ որք արտաքին երեք կորութեանց ծնունդ կուտան. ուղղաղւոյ երկարութեամբ ձգուած մկներն հաւասարապէս տարածուած են:

Բ Ն Ա Խ Ս Ո Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մարսողական գործարանի նպատակն է մարսել մնունդներն. ասոնց մարսուած մասն, մաւացն, արեան կը վերածուի, որ կը ծառայէ մեր աճման, մարմնոյ մաշած մասերու վերանորոգութեան, կենդանային մեքենայի ջերմութեան, շարժման, և ի մի բան կենաց շարունակութեան:

Մարդիկ ամենակեր են, կենդանային ու բռւսային մնունդոք միանդամայն կը մնանին, որք 14 պարզ տարրերէ բաղկացեալ են. 10ը հանդային մարմիններ անուանեալներն մնունդոց հազիւ 0/0 5ը կը ներկայացնեն, իսկ 4ը ցրածին, բրուածին, բնածուխ և բռրակածին գրեթէ մնունդոց ամբողջութիւնը կը կազմեն: Այս չորս պարզ տարրեր խառնուրդներ չեն կազմեր՝ այլ բաղկացութիւններ, որք երեք կարգի կը բաժնուին: Քառատարեան կամ բռրակածնային կ'անուանին այս 4 տարրերոք միանդամայն բաղկացեալներն, որք կենդանային մնունդոց մէջ աւելի առատ են, և առ այս կենդանային մարմիններ ալ կ'անուանին: Եռատարեան կ'անուանին առաջին երեք տարրերօք կազմեալներն, որք երկու մեծ դասի կը բաժնուին, ցրածիայիններ որոց 0/0 40ը բնածուխ է, որպէս նշայ, շաքար, ցքի խէժ ևայն, որք աւելի բռւսոց մէջ գտնուենուն բռւսային մարմիններ ալ կ'անուանին, և նարպայիններ որոց 0/0 77ը բնածուխ է,

որպէս են ամէն կարգի ճարպերն. եթէ ներուի երկտարեան պիտի կոչեմ ջուրն՝ որ ջրածնէ և թթուածնէ բաղկացեալ է, որ շատ մը մնունդոց մեծ մասը կը կազմէ, Ասոնց վրայ աւելցնելով հանդային մարմիններն, որոց երբ մնունդ գլխաւորներն են լուսածին, կիր և երկաթ, կ'ունենանք բոլոր գործարանաւոր մարմիններն:

Քառատարրեան մարմիններն աւելի մեր մարմնոց անման և մաշած մասերու վերանորոգութեան կը ծառային, եռատարրեաններն այրելով մարմնոյ ջերմութիւն կուտան, աւելորդն ճարպի կը վերածուի, հանքայիններն մեր ամէն հիւսուածոց մէջ կը գտնուին և նա մանաւանդ կմախքն կը կազմնան:

Համեմ կ'անուանենք կարգ մը կարծր և հեղուկ մարմիններ՝ որք աւելի մարսողական գեղձերը գրգռելով անոնց արտադրութիւնը կ'աւելցնեն, քան թէ սնընդեան կը ծառային, որպէս են աղ, պղպեղ, մանանեխ, սոխ, խստոր, քացախ, զինի, և լի:

ՄՆԴՈՑ ԶԵՒԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՆ. — Սնունդներն մարսողական գործառնութեան համար 8 կարգի երեւոյթներու կ'ենթարկուին, ունենալուին, ծախողորիխին, շրջանացումն, կղումն, խախացումն, մամացումն, ծընդումն, արտախումն:

Ունենալու ԱՅՍ. — Այս երեւոյթը կը կայանայ մնունդները բերանը տանելու ձեւին մէջ. մարդիկ այս երեւոյթը ձեռքով կը կատարեն, կարծր մարմինները շրթանց և ատամանց կը յանձնեն, իսկ հեղուկներն բերանի մէջ դատարկութիւն գոյացնելով ջրհանի նման կը ծծեն. հեղուկներն ուղղապէս մինչ որկոր կ'երթան, բայց կարծրերը պարտին բերնի մէջ ծամուիլ և լորձունքով շաղուուիլ:

Ծախողորիխ. — Հերձատամունք մնունդները կը կարեն, չնատամունք՝ կը պատռեն, իսկ լիսնատամունք՝

կը մանրեն. լեզուն և այտերն եւս ծասքողութեան կը նպաստեն :

Ծասքողութիւնն ոչ միայն մննդոց կլումն կը դիւրացնէ, այլև մարսողական գեղձահիւթից ազդեցութիւնն կ'աւելցնէ :

Լորձնացումն. — Ծասքողութեան պահուն լորձնային գեղձերն առատապէս կ'ողողեն մնունդներն : Լորձունքն ունի իր մէջ լորձնիս անուանեալ մարմին մը, որ ալիւ բային մարմիններն քաղցրանիւթի վերածելով մարսելի կ'ընէ, որոց այս ձեւափոխութիւնն կը կատարելագործէ մսանային հոյզն . լորձն կը նպաստէ նաև մննդոց դիւրաւ կլման :

Կլումն. — Կլումն կ'անուանենք՝ մննդոց բերնէն մինչ ցորկորն համիլը. երբ մննդոց ծասքողութիւնը բաւական համարենք՝ զայն լեզուի յետնավողմիան մասին վրայ հաւաքելով գնդակ մը կը ձեւացնենք, ապա լեզուին կորութիւն մը տալով և մննդական գնդակն լեզուի և քմաց միջեւ սեղմելով դէպ ի կոկորդն կը մղենք. նոյն պահուն քթին՝ կոկորդի հետ ունեցած հաղորդակցութեան անցքը կը նեղնայ և լեզուակն զայն կը փակէ, միւս կողմանէ խոչափողին վերև գտնուող մակարադանքն խոնարհելով՝ խոչափողի անցքը կը փակէ, մնընդական գնդակն որ լեզուի մղմամբ կոկորդն հասած էք՝ անդ չգտնելով ուրիշ անցք մը բաց ի ստուգնի անցքէն, անտի վար կ'իջնայ:

Խախացումն. — Մնունդն որկորի մէջ համնելով՝ որկորի մկներն կը սկսին կծկուիլ և մնունդն անոր կողերուն մէջ թաղուած գեղձերու հիւթից ազդեցութեան կ'ենթարկի, քառաստարեան մարմինք խախացային գեղձից խախացիս անուանեալ մի մարմնոյ միջոցաւ մարսելի վիճակի կը վերածուին: Մնունդներն որկորին մէջ խախաց անուանեալ կէս հեղուկ վիճակ մը կ'առնեն, այս երեւոյթը կատարուելուն՝ սորը կը բացուի՝ խախացն

աղեաց մէջ կ'անցնի և որկորի կծկումները կը դադրին: Փախումն ստոծանուոյ և որովայնային մկաններուն՝ զորկորն ճնշելով՝ անդ պարունակելոց ստուգնէն դէպ ի կոկորդ և ի բերան հասցնելն է :

Զգայուուրիխնեն ոչ այլ ինչ է բայց եթէ որկորի մէջ գոյացեալ կազերու կամայ, ակամայ ստուգնէն դէպ ի վեր ցնդումն :


Մամացումն. — Մնունդք երբ աղեաց մէջ հասնին՝ անոնց մկնային դրութիւնը կը սկսի գալարիլ շարունակ՝ աղեաց գեղձահիւթն օննդոց հետ խառնելու համար. այս երեւոյթն մամացումն և ասով յառաջ եկած աննդոց մարսեալ հեղուկն մամաց կ'անուանի: Մսանային հոյզն մասին անուանեալ մի խմօրանիւթ ունի՝ որոյ միջոցաւ կը կատարելագործէ լորձնիսի, խախացիսի պաշտօններն և նաև ձարպային մարմնոց վրայ ազդելով՝ զայնս փոքր գնդակներու կը վերածէ :

Լեզիի պաշտօնը լաւ ծանօթ չէ, կը կարծուի որ մանիստի նման ձարպային մարմնոց վրայ կ'ազդէ և աղեաց մաքրութեան ու հականեխման կը ծառայէ:

Ծծումն. — Ծծումն կ'անուանենք մննդոց մարսեալ մասանց՝ մամացի՝ աղիքներն ներքնաբար ծածկող մազանման ցցուածքներու խողովակաց մէջ անցնիլն, որք և կը տանին այս ծծած հիւթերնին խառնել արեան հետ (ձև 23):

Այս ծծման երեւոյթը ֆիզիզի ներինամիլման և արտամիլման օրինաց միջոցաւ կը կատարուի: Այսինքն երբ երկու տարբեր տեսակաբար ծանրութիւն ունեցող հետուկներ կենդանային կամ բուսային նուրբ թալանթով մը իրարմէ զատուած են՝ աւելի տեսակաբար ծանրութիւն ունեցողը դէպ նուազ ծանրն կ'ընթանայ. աղեաց մէջ ալ միեւնոյն երեւոյթն տեղի կ'ունենայ. մէկ կողման մամացն աւելի ծանր է քան միւս կողման աւելին ու արիւնն, և միջանկեալ մաշկն խիստ նուրբ է: Բիւրեղակերպ

անուանեալ բիւրեղանալի մարմիններն միայն կրնան
անցնիլ ըստ այս օրինաց, և արդէն մարսողութեան



Ձև 23.—Նրբաղեաց միջընդերքն ծծման պահուն

6. Արքայի, **մ'**. միջնեկրէ, **հ.** աւշային հերափողիկներ, **լ.** հերափողիկային կծիկներ, **ա.** աւշերակ, **ր.** շանչաց խողովակ, **մ.** մայր շնչերակ

Նպատակն է զանազան գեղձահիթից միջոցաւ սննդական տարրերն ընթացքակիրափի վերածել :

Արտաքումն. — Մննդոց կարեւոր մասն ծծուելով մնացեալ անպէտ մասն ստուարաղեաց մէջ կ'անցնի, ուր ուէ ձեւափոխութիւն չկրեր, զի՞ նա պարզ ամբարանց մ'է. կուրաղեաց մէջ կը թանձրանայ, յամբաղեաց մէջ կ'ամբարի, և անկէ պարբերաբար գուրս կ'արտաքսուի:

Ստուարաղեաց մէջ կազեր յառաջ կուգան, որք քիչ
կամ շատ զօրութեամբ դուրս կը ցնդին վուրի ձեւի տակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ծնչառեւտրական գործարանը կը բաղկանայ զքիթէ լանջաց ամբողջ ծաւալը գրաւող երկու թոքերէն, և այս գործեաց ու ոնդաց միջեւ ձգեալ շնչառեւտրական խոզ զովակէն:

Լանջն ետեւի կողմէն՝ ողնայարի սիւնակի թիկնացին մասէն, և ասոր աջէն ու ձախէն մեկնող և աղեղաձեւ դէպ յառաջ բոլորող 12 զոյգ կողերէ, և առջեկի կողմէն՝ աճառաց միջոցաւ ասոնց հետ կցուած կրծոսկրէ կազմեալ՝ հատեալ կոնի ձեւով ոսկրային վանդակ մ'է (ձեւ 24): Ստոծանի անուանեալ մինային թաղանթն լսնջաց վանդակի ստորին շրջանակի վրայ հաստատուելով՝ որովայնի և լանջաց միջեւ լարուած է. ստոծանին իր բնական վիճակաւ դէպ ի վեր՝ լանջաց վանդակն գոգեալ է, և ի հարկին կծկմամբ հորիղոնական դիրք մը կ'առնու:


Այս վանդակի կողերն միջնակողեան անուանեալ
մկնային թաղանթով մը միմեանց հետ միացած են.
ունին նաև իրենց ծաւալն ընդլայնող մկներ, որոնց
գլխաւորներն են սկալինիաներն:

Ծնչառեւտրական խողովակի դանազան մասերն են.

Քիթն՝ որ միջավայրի օղը քաղելով դէպ կոկորդ կը տանի. այս խողովակը շարժմարթենի բջիջներէ կազմուած՝

վերնամաշկ կրող հուզաթաղանթով մը ծածկուած է, որոյ բորբռքումն հարբուխ յառաջ կը բերէ :

Կոկորդին՝ որպէս բերնի և ստուգնի՝ նոյնպէս և քթի ու խոչափողի միջանկեալ այս անջրպեսն՝ թէ՛ մարսողութեան և թէ՛ չնչառեւարութեան միանդամայն գործի մ'է :



Զե 24.—Լանջը մը որոյ աշակողմի միջնակողեան մկներն բարձուած են բայց ձախակողմիներն պահուած են. սառծանին իր բնական ձեւովն նկարուած է. ձախակողմեան մնակն և աշակողմեան Սկալինեան մկներն պահուած են

Զե 25.—Ծնչառեւարական գործարան

Խ. խոչափող, Ը. շնչափող, Գ. ցնցուղներ, Բա. աշակողմեան բոյ, Բա. ձախակողմեան բոյ՝ որոյ հիւսուածն բարձուած է եւ միայն օդային խողովակն եւ անոր բաժանումները կը տեսնուին

Խոչակն՝ կոկորդի ստորին յառաջակողմն երկու աճառային շրջանակներէ բաղկացեալ, 4,5 հր/մ երկարութեամբ և 4 հր/մ լայնութեամբ խողովակ մ'է (Ճե 25): Խողովակի յառաջակողմեան վերին եղբին վրայ հաս-

տատուող նեարդաճառային լեզուակն, որ մակաղեզու կ'անուանի, կլանելու պահուն խոնահելով՝ խոչափողն կը փակէ իրեւ կափարիչ :

Շնչափող կ'անուանի խոչակի յաջորդող աճառային օղակներէ բաղկացեալ 12-13 հր/մ երկարութեամբ խողովակն, որ ցնցուղ անուանեալ երկու նմանօրինակ խողովակաց կը բաժնուի :

Ցնցուղներն 3-5 հր/մ երկարութիւն ունին, որոց մին աջ իսկ միւսը՝ ձախ թոքի մէջ կը մտնէ :

Թոյներն՝ ծնչառեւարական գործարանի գլխաւոր գործիներն են: Այս երկու ձուածեւ մարմիններն լանջաց ամրող ծաւալը կը լեցնեն, իրենց միջեւ ունենաւով սիրան, որ մի քէն դէպ ի ձախս գտնուելուն՝ այն կողմի թոքն աւելի գոգեալ է: Սղակողմեան թոքն՝ երկու հորիզոնական շերտով երեք բլթի բաժնուած է, իսկ ձախակողմեանն մէկ շերտով երկու բլթի:

Ցնցուղներն թոքերու մէջ մտնելով նոյն կողմի բլթից թուոյն հաւասար գլխաւոր խողովակաց կը բաժնուին, իւրաքանչիւրը մէն մի բլթի մէջ յառաջանալով կը սկսի անդ յանհունս բաժնուիլ և ստորաբաժնուիլ նման ծառի մը ճիւղերուն. թոքի օդային խողովակաց տրամագիծն 0,1 հր/մի հասնելուն՝ անոնք բոյային բլթակ անուանեալ փոքրիկ պարկերու մէջ կը բացուին:

Ցնցղաց հետ իւրաքանչիւր թոքի մէջ կը թափանցեն մի թոքային շնչերակ և երկու թոքային երակ, որք ցնցուղներու զուգահեռաբար կ'ընթանան և ապա հերափողիկներու վերածուելով բլթակներու մակերեւոյթն կը ծածկեն:

Թոյնային տնաքաղանք. — Ենթադրէ՛ բերանը գոյ շճաթաղանթեայ երկու պարկեր, որոց մին իր արտաքին երեսովն լանջաց ներքին աշակողմն, իսկ միւս երեսովն՝ այն կողմի թոքն կ'ընդգրկէ. երկրորդ պարկն նմանա-

պէս կը պատէ լանջաց ձախակողմեան ներքին երեան և կ'ընդգրկէ ձախ թոքն և ահաւասիկ կ'ունենաս թոքային երկու շաբթաղանթներն։ Այս շային պարկաց ներքին մակերեւոյթն հեղուկ մը կ'արտադրէ՝ որ երկու մակերեւոյթներու շփումը կը դիւրացնէ. ասոր առաստ արտադրութեամբ հեղուկը կը հաւաքուի անդ և բոյային ցրգողուրիւն անուանեալ հիւանդութիւնն յառաջ կը բերէ։

Բ Ն Ա Խ Օ Ս Ս Ի Թ Ե Ւ Ն

Մարսողութեան նպատակն էր մնունդներն արեան վերածել, իսկ չնչառեւտրական երեւոյթից նպատակն է այդ արեան վրայ օդի թթուածինն բարդել։ Նախ պիտի ուսանինք աստ օդի յարտաքուստ ի թոքս հասնելու և անտի կրկին դուրս ենելու, և կամ որ նոյնն է ըսել՝ չնչառութեան և արտաշնչութեան երեւոյթներն, և ազա պիտի քննենք օդի թոքերու մէջ կատարած դերն և կրած ճեւափոխութիւններն։

Շնչառուրիւն եւ արտաշնչուրիւն. — Շնչառութիւնն լանջաց ծաւալի ընդլայնման՝ իսկ արտաշնչութիւնն կրկին իր նախորդ վիճակն առնելու արդիւնքն է։

Լանջաց ընդլայնումն գլխաւորապէս ստոծանոյթաղանթի և սկալինեան մկանաց պարտինք. որոց առաջինն ընականաբար դէպի վեր դոգեալ լինելուն՝ չնչառութեան պահուն կծկմամբ հորիզոնական դիրք կ'առնէ և որով լանջաց ծաւալն ընդերկարութիւն կը մեծնայ, և ասոր իրրև հետեւանք. որկորն ու աղիքներն դէպի վար մղուելով՝ որովայնի դէպի դուրս ցցուած կորութիւնն կ'աւելնայ. սկալինեան մկներն կծկմամբ կողերն դէպի վեր և յառաջ տանելով՝ լանջաց արամագիծը կը մեծցնեն. կան դեռ ուրիշ ընդլայնիչ մկներ

նա մանաւանդ մեծ չնչառութեանց համար։ Լանջքն այսպէս ընդլայնելով՝ թոքերն ալ կ'ընդլայնին և արտաքին օդը քթէն անցնելով մինչ թոքերը կը համարի, որ շնչառուրիւն կը կոչենք։ Ապա միեւնոյն մկանաց կծկումն դադարելով՝ լանջքն իւր բնական ծաւալը կը ստանայ, որպէս նաեւ թոքերն, ուստի և օդի մի մասը դուրս կ'ենէ դոր արտաշնչուրիւն կ'անուանենք։

Խնչելն, հազարն և հեծեծելն սաստիկ արտաշնչութիւններ են. իսկ հառաջն, յօրանցումն մեծ չնչառութիւններ. խնդարն արագ չնչառութեան և արտաշնչութեան արդիւնքն է. չնչեալ օդն չնչառական խողովակներու մէջէ անցնելով թէ՛ կը տաքնայ և թէ՛ հուզաթաղանթին հոյզին միջոցաւ խոնաւութիւն կը ստանայ. այս խողովակը ներքնաբար պատող շարժթարթենական արտեւանունք իրենց շարժմամբ՝ օդի մէջ պարունակեալ փոշիներն դէպի վեր կը մղեն և զայնս իրենց հոյզի միջոցաւ իրենց մէջ կ'առնեն, և զորս սաստիկ արտաշնչմանց՝ հազի և խնչելու միջոցաւ դուրս կը հանենք։

Վերջապէս չնչառութեամբ արտաքին օդը մինչ մեր թոքերու բլթակաց մէջ կը համարի. միեւնոյն ատեն երակային արիւնն թոքային չնչերակի միջոցաւ՝ կուգայ հերափողիկներով պատել այս օդային բլթակներն, որոց միջև տեղի ունեցած երեւոյթները պիտի քննենք աստ:

Շնչեալ օդի կատարած դիրն. — Օդի բազաղրութիւնն է $\frac{1}{0}$ 79 բորակածին, 21 թթուածին և փոքր քանակութեամբ բնածխային թթու և ջրի շոգի։ Շնչառութեամբ ըսինք՝ օդը թոքերու բլթակներու մէջ, իսկ երակային արիւնն անոնց շուրջը կը համնին. աւաստիկ օդ և արիւն նուրբ թաղանթով մը բաժնուած են իրարմէ, աստ տեղի կ'ունենայ չնչառեւտրութեան բուն երեւոյթն. երակային արեան բնածխային թթուն և ջրի շոգին թոքերու բլթակաց մէջ կ'անցնի, իսկ օդի թթուածինն բըլ-

թակներէն արեան մէջ կը թափանցէ, ուր գտնուող գնդակներն զայն ծծելով՝ կը կարմրին, և այսպէս երաշկային արիւնը կորսնցնելով՝ իր պարունակած բնածխային թթուոյ և ջրի չոգւոյ կարեւոր մասն ու ծծելով թթուածինն՝ չնչերակային արեան կը վերածուի և ի սիրտ կը վերադառնայ. յաջորդ գլուխներու մէջ պիտի տեսնենք իրենց կրած թթուածնի պաշտօնն։ Շնչեալ օդն իր թթուածնէն զրկուելով՝ և երակային արեան բնածխային թթուով և ջրի չոգիով բեռնաւորեալ՝ արտաշնչմամբ յօդս կը ցնդի։

Մէկ վայրկեանի մէջ 12-18 անգամ կը չնչնք և ամէն անգամին $\frac{1}{2}$ լիտր օդ կը քաղենք. արտաշնչութեամբ $\frac{1}{2}$ լիտր օդ դուրս կուտանք. բայց թոքերն չեն պարափի, դեռ $2\frac{1}{2}$ լիտր օդ կը պարունակեն. ըսելէ թոքերը սովորական չնչառութեան ատեն 3 լիտր օդ կը պարունակեն որոյ $\frac{1}{2}$ լիտրը միայն կը փոխուի. մեծ չնչառութեամբ 2 լիտր կը նաև քաղել. մեծ արտաշնչմամբ թոքերումէջ գոնէ մէկ լիտր օդ կը մնայ։

ԳԼՈՒԽԻ Գ.

ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Արեան յրջանի գործարանը կը բաղկանայ սիրտէն՝ որ անոր կեղբընական գործին է, և արեան խողովակներէ՝ որք արիւնն սրտէն կը տանին ու անդ կը դարձնեն։


Սիրտն լանջաց մէջ՝ երկու թոքերու միջեւ և աւելի դէպ ի ձախակողմն զետեղեալ գագաթն ի վար դարձած մինային կոնածե գործի մ'է (ձև. 26). Սիրտը 4 խոռոչներ ունի (ձև. 27). երկու վերիններն բլրակ և երկու ստորիններն վլորով կ'անուանին, զորս աջակողմեան և ձախակողմեան մակղիբներով իրարմէ կը զանազանեն. միեւնոյն կողմի խոռոչները դռնակներու միջոցաւ իրարու հետ կը հաղորդակցին։

Փորորիները սրտին մեծ մասը կը կազմեն, իւրաքանչիւրը մինային կոներ կը ներկայացնեն, որոց ձախակողմեանն մի քիչ երկար լինելուն՝ գրեթէ առանձինն սրտի սուր ծայրը կը կազմէ։ Զախակողմեան փորոքի կողին թանձրութիւնը 15, իսկ աջակողմեանինը 5 չորմէ։

Բլրակային խոռոչաց կողից թանձրութիւնն հազիւ 3-4 չորմի կը համնի, մինային և առաձիգ հիւսուածոց խառնուրդով կազմուած են։

Փորորիա - բլրակային բաժանումներն սրտի ներքնաթաղանթի ծալքերով կազմուած են, որք հաղորդակցութեան դռնակներ կը թողուն. աջակողմեանինն կորածեւ պատառուածք մ'է, զոր թագի մը նմանցնելով

թագածեւ դռնակ (Ճ. 28) կ'անուանեն, իսկ ձախակողմեանի հալորդակցութեան դռնակն միևնոյն կեղրանն հասնող երեք հերձուածներէ կազմուած է, որք երեւք եռամկիւ-



Զե 26. — Թոքերն, սիրտն և այս վերջնոյն հետ յարաբերող արեան խողովակները

ձփ. ձախակղումնաև փորդ, **ափ.** աշակղումնաև փորդ, **աբ.** աշակղումնաև բլբակ, **մ. մ.** մայր շնչերակ, **սպ.** ստրին զռերակ, **վգ.** վերին զռերակ, **թc.** բուսային շնչերակ, **թb.** բուսային երակ, **զc.** զc. զիսային շնչերակներ, **թc.** թc. բազկային շնչերակներ, **գb.** գb. գրիսային երակներ, **թb.** թb. բազկային երակներ, **շ.** շնչափող


24 27. — Սրտի մը հաստածն և իր հետ հաղորդակցող խողովակաց տեսական պատկերն

ՃՓ. ճախակողմեան փորդ, **տՓ.** աշակողմեան փորդ, **աՐ.** աշակողմեան բրակ, **ՃԲ.** ճախակողմեան բրակ, **ԱՌ.** միջնացանկ, **ԱՌ.** մայր շնչերակ, **ԲԸ.** բուժային շնչերակ, **ՔԵ.** քերին գոգերակ, **Ազ.** սոսրին գոգերակ

նային շրթանց տեղի տալերնուն՝ իրենց կազմած դռնախներուն կուսարեան կը կոչուի. այս դռնախներու շուրջերն դէպ

ի փորոքս խոնարհելով՝ արեան թվակէ ի փորոքս անցքը կը թոյլատին, բայց հակառակ անցքն չեն ներեր :

Զախակողմեան փորոքն մայր չնչերակի՞ իսկ աշա-
կողմեանն՝ թռքային չնչերակի հետ կը հաղորդակցին.
սրտի ներքնաթաղանթն այս հաղորդակցութեան տեղե-
րուն վրայ եւս ծալքերով գոնակներ կը կազմէ, նման



Ձև 28. — Սրտի դռնակաց վերէն տեսքն

- 1.** եռաստեղի դուռակ, **2.** բազմեւ կամ երկաստեղի դուռակ, **3.** **4.** սիկմայած դուռակներ, **5.** փորոց - մայրչելերակային դուռակ, **6.** փորոց - բուժաշելերակային դուռակ

եռասարեան դռնակաց, զորս սիկմայական դռնակներ
կ'անուանեն, որք փորոքաց արհան՝ չնչերակաց մէջ
անցքն կը թոյլատրեն, բայց չնչերակներէ փորոքաց մէջ
դարձն չեն ներեր:

Վերին և ստորին գոգերակներն աջակողմեան ըլթակի
մէջ կը թափին : Բլթակաց հետ հազորդակցող խողովակաց՝
միայն ստորին գոգերակն եւստակեան անուանեալ դռնակ
մ'ունի՝ դէպ ի սիրտն գոգեալ երկու շրթներով, որ սրտի
արեան դէպ ստորին գոգերակ վերադարձն կ'արդելու :

Սիրտն ի ներքուստ պատող հուզաթաղանթն՝ որ

դռնակները կը կազմէ՝ սրտի ներքնարադանիք կ'անուանի . իսկ սիրտն ընդգրկող շճային պարկն սրտակրանիք կը կոչուի :
Խողովառաւոր.— Սրտէն արիւն առնող խողովակներն՝ երակ կ'անուանին . չնչերակ, իսկ անդ արիւն բերողներն՝ երակ կ'անուանին . չնչերակաց և երակաց ամենանուրբ ստորաբաժանումներն հերափողիկ կ'անուանին . այս երեքին վրայ պարտինք բարդել նաև աւշերակներն՝ որք երակաց օդականներ են և անոնց պաշտօնին կ'օժանդակեն :

Շնչերակներն և երակներն երեք խաւերէ կազմուած են . ներքինն հուզաթաղանթ մ'է, միջինն առաձիգ ներդերով խառն հարթ մկնային հիւսուած մը, իսկ արտաքինն շարակցական խաւ մ'է :

Շնչերակաց միջին խաւն խիստ դօրաւոր է և անոր մեծ առաձգականութիւն կուտայ . եթէ կտրուին՝ իրենց մկնային խաւի առաձգականութեամբ կտրուած բերանը դոցելն խիստ դժուար է, և արիւնն անդաղար կը հոսի . իսկ երակներն նոյն խաւի նրբութեան աղագաւ՝ եթէ կտրուին խոկ՝ դիւրութեամբ կրնան գոցուիլ : Սմինիմաստ նախախնամութիւնն կենդանիները շնչերակաց բեկմամբ վտանգաւոր հետեւութիւններէ զերծ պահելու համար՝ այս խողովակներն աւելի մարմնոյ խորերը զետեղած է, և որք 4 զոյգ կէտերու վրայ միայն մարմնոյ մակերեւոյթին կը մօտենան . 1. դաստակէն մի քիչ վեր, 2. սրունքներու վարփ կողմն, 3. պարանոցի երկու կողմերն, 4. ձակատի խրաքանչւր կողմերն : Այս չորս զոյգ կէտերն և մանաւանդ ասոնց առաջին զոյգն արեան ընթացքի քննութեան կը ծառային :

Երակներն կազմական երկրորդ տարբերութիւն մ'ալ ունին, իրենց ներքին հուզաթաղանթն ծալքերով՝ բաղմաթիւ գոգեր կը կազմէ զոյգ առ զոյգ (Ճ. 29), որք արեան դէպ ի սիրտ վերադարձն կը դիւրացնեն :

Հերափողիկներն շնչերակաց և երակաց ամենանուրբ


վերջաւորութիւններն են, այնչափ նուրբ՝ որոց մէջէն արեան գնդակներն առանց երկարելու չեն կարող անցնիլ . իրենց այս նրբութիւնն մազերու հետ բազդատելով հերափողիկ անուանած են, որոցմէ շատ աւելի նուրբ են : Հերափողիկներն իրարու հետ բերանակցելով՝ ամենանուրբ ցանցակերպ դրութիւն մը կը կազմեն . լոկ ասեղի մը մխումն բազմաթիւ հերափողիկներ կը պատառէ . չնչերակաց և երակաց հերափողիկներն իրարութիւններն են :

Աւշերակաց կազմն երակաց շատ կը մօտենայ, ներքին հուզաթաղանթն անոնց նման ծալքերով զոյգ զոյգ բաղմաթիւ գոգեր կը կազմէ :

Այս խողովակներն արեան մեծ շրջանի և վորֆ շրջանի դրութիւններն կը կազմմն :

Մեծ շրջանի նպատակն է, շնչերակային կամ կենդանի արիւնն սրտէն տանիլ մարմնոյ ամէն մասանց մէջ զայնս մնուցան համար, որ անդ երակային կամ անմաքուր արեան կը վերածուի և ապա զայն կրկին դէպ սիրտ կը վերադարձնէ :


Շնչերակային արիւնն մայր շնչերակի ձեռօք կը մեկնի՝ որ ձախակողմեան փորոքի յետնակողմեան վերին մասէն ծնունդ կ'առնէ, նախ 4 հրթի չափ վեր կ'ենէ, ապա դէպ ձախ կէս շրջանակ մը գծելով (Ճ. 26, 27, 30) սրտին ետեւէն ուղղակի վար կ'իջնէ, ստոծանիէն կ'անցնի, 8րդ կողն համելով՝ անդ երկու մասի կը բաժնուի, որոց մին աջ, իսկ մինս ձախ սառին անդամոց մէջ կ'երթան : Այս շնչերակի ծնունդ առնելէն մինչ իր



Ճ. 29. — Բացուած շնչերակային կամ կենդանի արիւնն սրտէն տանիլ մարմնոյ ամէն մասանց մէջ

զայնս մնուցան համար, որ անդ երակային կամ անմաքուր արեան կը վերածուի և ապա զայն կրկին դէպ սիրտ կը վերադարձնէ :

այս վերջնական բաժանումն մայր շնչերակ կը կոչուի .
անկէ աջ ու ձախ և ընդհանրապէս զոյգ առ զոյգ մեկ-



Ձև 30. — Ծնչերակային դրութիւն

նող խողովակներն երկրորդական շնչերակ կ'անուանին :

որք իրենց մատակարարած մասանց անուններն կ'առնեն :
Այս շնչերակաց ամբողջութիւնն մեծ շրջանի շնչերա-
կային դրութիւն կ'անուանի (Ձև 30), որ շնչերակային
արիւն միայն կը պարունակէ :

Ծնչերակներն իրենց մատակարարած գործեաց մէջ
մտնելնուն՝ յանհունս կը բաժնուին, կը ստորաբաժնուին,
և հերափողկաց կը վերածուին, որոց կազմած ցանցա-
կերպ դրութիւնն հերափողկային դրութիւն կ'անուանի :

Երակք նպատակ ունին հերափողկաց մէջ հասած
արիւնները վերստին դէպ ի սիրտ վերադարձնել, ասոնց
նուրբ ծայրերը հերափողկաց հաղորդ են, և կամ որ նոյն
է ըսել՝ հերափողիկներն երակաց և շնչերակաց միանգա-
մայն վերջաւորութիւններն են, և կամ երկուքին միջնեւ
ձգուած են. ընդհանրապէս ամէն շնչերակ իր բերած
արիւնը տանող երկու երակներ ունի: Երակային դրու-
թիւնն բնականաբար շնչերակայինի մեծ նմանութիւն
ունի: Գլխի ու վերին անդամոց երակներն իրարու հետ
միանալով՝ վերին գոգերակն կը կազմնին, որ աշակող-
մեան բլթակի մէջ կը թափի. այս վերջինն եւստաթեան
դռնակով բաժնուած է բլթակէն: Մեծ շրջանի երակային
դրութիւնն միայն երակային արիւն կը պարունակէ:

Փոյր շրջանի նպատակն է սիրտն հասնող երակային
արիւնը թոքերը տանիլ՝ անդ թթուածնի ազդեցութեամբ
զայն շնչերակայինի փոխելու համար, և զոր ապա կրկին
դէպ ի սիրտ կը բերէ:

Սրաի երակային արիւնն թոքալին շնչերակի միջոցաւ
աջակողմեան փորոքէն մեկնելով՝ դէպ ի թոքերը կ'ընթա-
նայ. անդ երկու մասի կը բաժնուի, որոց մին աջ և միւսը
ձախ թոքի մէջ կը մտնեն, ուր օդային խողովակաց զու-
գահեռաբար կը բաժնուին ու կը ստորաբաժնուին և հերա-
փողիկներով՝ կը վերջանան թոքից օդային բլթակաց արտա-
քին մակերեսոյթին վրայ. անդ շնչառութեամբ շնչերակային

արեան վերածուելով՝ իւրաքանչիւր թռքի արիւնն թռքա-
յին երկու երակաց միջոցաւ դէպ սրտի ձախակողմնան բըլ-
թակին գալով՝ անդ կը թափին երկու առ երկու (ձև 26, 27) :

Աւշերակային դրութիւն մէէ, և անոր հաւաքել չկարողա-
ցածն՝ իր յատուկ հերափողկաց միջոցաւ կը ժողվէ :
Ստոծանւոյ վերին աջակողմեան գործարանաց աւշային
խողովակներն՝ իրարու հետ միանալով՝ կը կազմեն մեծ
աւշերակին, որ աջակողմնան ենթաներակային երակին մէջ
կը թափի . իսկ մնացեալ մասանց աւշերակներն իրարու-
հետ խառնուելով՝ կը կազմեն շանչային խողովակն, որ
մամացն եւս ստանալով՝ կը թափի ձախակողմնան են-
թանբակային երակին մէջ :

Բ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

Նկարագրենք նախ արեան շրջաններն և ապա բա-
ցատրենք այս երեւոյթն յառաջ բերելու համար արեան
շրջանի իւրաքանչիւր գործեաց կատարած դերերն :

ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՆ . — Զախսակողմեան փորոքի կը ծի-
մամբ անոր մէջ պարունակեալ չնչերակային արիւնն
մայր չնչերակի մէջ մեղուելով՝ անկէ մեկնող երկրորդա-
կան չնչերակներու միջոցաւ կը հասնի մարմնոյ բոլոր
գործարանաց ու դրութեանց՝ գործիներու հիւսուածոց մէջ ,
ուր հերափողիկներու բաժնուելով՝ կը նույցանէ և կեանք
կուտայ անոնց հիւսուածոց . ասով կ'աղքատանայ իր
սենեկան տարրերէն և թրուածնեն, կը հարստանայ թնած-
խային թրուով և ցրի շոգիով . ի մի բան՝ կը կորանցնէ իր
անդարար յատկութիւնն և երակային արեան կը վե-
րածուի : Երակներն ու աւշերակներն այս հեղուկն հերա-
փողիկներէն քաղելով՝ կը տանին դէպ ի սիրտ, վերջն-
ներն իրենց ճամբուն վրայ կը ստանան մննդոց մարտ-
դութեամբ արտադրուած մամացն, և երակաց հետ

խառնուելով՝ երակային արիւնն մննդական տարրերով կը
հարստացնեն . վերջապէս երակային արիւնն երկու գո-
գերակներով սրտի աջակողմնան բլթակին մէջ կը թափի ,
որոյ կծկմամբ կ'անցնի նոյն կողման փորոքին մէջ . այս
վերջնոյն կծկմամբ թռքային չնչերակաց միջոցաւ թռ-
քերը կ'երթայ, ուր թռքային չնչերակներն օդային խո-
ղովակաց նման և անոնց զուգահեռաբար բաժնուելով՝
օդային բլթակներու արտաքին մակերեւոյթին վրայ հե-
րափողիկներով կը վերջանան : Թռքերն հասած արիւնն
ինչպէս տեսանք՝ չնչառեւարութեան միջոցաւ անդ թող
կուտայ հիւսուածներէն իր հետ բերած թնածխային
թրուն և ցրի շոգին, որք արտաչութեամբ յօդս կը
ցնդին, արեան գնդակները կը ծծեն չնչեալ օդի թրուա-
ծին . այսպէսով երակային արիւնն կը վերակենդանանայ
և կենասու կամ չնչերակային արեան կը վերածուի , և
թռքային երակաց միջոցաւ կը վերադառնայ սրտի ձախ
բլթակին , որոյ կծկմամբ իրեն համապատասխանող փորոքի
մէջ կ'անցնի , այս վերջնոյն ճնշմամբ ի մայր չնչերակն և
այսպէս շարունակաբար :

Մից . — Միբան իր պարբերական կծկմամբն արեան
շարժում ու շրջան կուտայ : Երկու բլթակներն ի միասին
կը կծկուին, ապա անմիջապէս երկու փորոքներն . փոքր
հանգիստէ մը վերջ բլթակները կրկին կը կծկուին՝ անտի
փորոքներն և այսպէս շարունակաբար : Բլթակաց կծկման
սկսելէն մինչ մը երկրորդ կծկումն՝ բախում կ'անուանի .
սիրան մէկ վայրկեանի մէջ չափահասաց համար 70 ան-
գամ կը բարախէ , մանկանցն աւելի է , երախայիցն ա՛լ
աւելի , իսկ ծերերունը 60-65 անգամ է միայն : Հի-
ւանդութիւնք կարող են այս թիւերը փոխել :


Մեծ շրջան . — Արեան մնած շրջանը կատարողն
գրեթէ միայն ձախակողմեան փորոքն է . սա իւրաքան-
չիւր կծկման 180-200 կրամ արիւնն կը մղէ $\frac{1}{4}$ մինու-

լորտի ճնշմամբ, ուժ որ բաւական կ'ըլլայ ոչ միայն զայն մինչ հերափողիկներն, այլև անսախ երակաց մէջ մզելով՝ մինչ սիրան հասցնելու։ Արեան երակաց մէջ ընթացքին

կը նպաստեն նաև՝ իր ներքին դռնակ-ներն, որք գէպ ի սիրան ընթացող ար-եան յառաջացումն կը թոյլատրեն, բայց յետո դարձն չեն ներեր։

Սիրաը թէպէտ պարբերաբար միայն արիւն կը մղէ չնչերակաց մէջ, բայց ասնք արիւն ընդունած պահուն ընդ-լայնելով և ասպա հետզհետէ նեղնալով՝ այդ պարբերական հոսանքն շարունակա-կանի կը վերածուի։ Շնչերակաց այս ընդլայնումն թնրիւն կտոմ զարկ կ'անուա-նի, զոր 4 զոյդ կէտերու վրայ միայն կը զգանք՝ ինչպէս տեսանք, որոց քննու-շանի գործարանի տե-թիւնն մեզ կը ծանօթացնէ՝ սրտի մէկ սական պատկերն վայրկեանի մէջ քանի անգամ բարա-խումն և արեան հոսանքի որպիսութիւնն։

Ս. շերակային դրութիւնն երակային դրութեան օգնա-կան դրութիւն մ'է. աւշերակային հերափողիկներն կը ծծեն երակային արիւնն, ի բաց առեալ անոնց գնդակներն՝ որք հերափողկաց թաղանթէն դուրս չեն կրնար ելնել և որոց թթուածինն ծծելով կը բաւակա-նանան։ Հիւսուածք այդ ընդունած հիւթն իրենց աճման կը գործածեն. մարմնոյ որեւէ մի անդամն որչափ որ գործէ՝ այնչափ արիւն կը ստանայ և համեմատաբար աւելի կ'ածի, ինչպէս երկաթագործաց բազուկներն, սկարողաց սրունքներն, ևայլն։ Հերափողկաց արիւններն սեննշարաց տարրեր և բրուածնէ աղքատանալով՝ կը կրանցնեն իրենց սննդարար յատկութիւնն և կ'անուանին երակային արիւն։ Գնդակներէ ծծուած թթուածինն՝ թէ կը ծա-ռայէ զայն ընդունող հիւսուածոց սննդեան և թէ անոնց այրման. այո՛, հիւսուածք կ'այրին ինչպէս ածուխն կրա-կարանի մէջ և անօր նման թնածխային թրու, ցրի շողի



Զե 31.—Արեան շըր-թիւնն մեզ կը ծանօթացնէ՝ սրտի մէկ սական պատկերն վայրկեանի մէջ քանի անգամ բարա-խումն և արեան հոսանքի որպիսութիւնն։

Փոքր բազան։ — Արիւնն երկու ուժերու միջոցաւ թոքային չնչերակաց մէջ կը հոսի. մին աջակողմեան փո-րոքի կծկման մզմամբ և երկրորդ՝ չնչառութեամբ լան-ջաց և թոքերու ծաւալմամբ, որոց ճնշման նուազու-թիւնն արիւնն առ ինքն կը ծգէ։

Արտաշնչմամբ յառաջ եկած թոքերու կծկումն է որ արիւնն թոքերէն դէպ ի սիրտ կը մղէ թոքային երակաց միջոցաւ։

ԳԼՈՒԽ Դ.

Ս Ն Ա Ն Ո Ւ Մ Ն

Տեսանք թէ ինչպէս մնունդք մամացի և անտի արեան կը ձեւափոխին, թէ ինչպէս թթուածնի բարդ-մամբ չնչերակային կամ մնուցիչ հեղուկի կը վերածուին, և վերջապէս բայցատրեցինք՝ թէ այս կենսատու հեղուկն ինչպէս կը չըջի և այց կ'ենէ մարմնոյ ամէն մասանց մէջ, և ըսինք թէ այդ արիւնը հերափողկաց մէջ չըջելու պահուն կը մնուցանէ և կեանք կուտայ կենդանային մեքենային. սական չքննեցինք այս երեւոյթն զոր ներ-կայիւս գամ պարզել։ Այս հարցի քննութիւնն դիւ-րութեան համար երեքի կը բաժնենք. սնանումն, ջեր-մուրիւն և շարժում։

Սնանումն. — Ամէն կարգի հիւսուածք իրենց մէջէ անցնող հերափողկաց արիւնը կը ծծեն, ի բաց առեալ անոնց գնդակներն՝ որք հերափողկաց թաղանթէն դուրս չեն կրնար ելնել և որոց թթուածինն ծծելով կը բաւակա-նանան։ Հիւսուածք այդ ընդունած հիւթն իրենց աճման կը գործածեն. մարմնոյ որեւէ մի անդամն որչափ որ գործէ՝ այնչափ արիւն կը ստանայ և համեմատաբար աւելի կ'ածի, ինչպէս երկաթագործաց բազուկներն, սկարողաց սրունքներն, ևայլն։ Հերափողկաց արիւններն սեննշարաց տարրեր և բրուածնէ աղքատանալով՝ կը կրանցնեն իրենց սննդարար յատկութիւնն և կ'անուանին երակային արիւն։ Գնդակներէ ծծուած թթուածինն՝ թէ կը ծա-ռայէ զայն ընդունող հիւսուածոց սննդեան և թէ անոնց այրման. այո՛, հիւսուածք կ'այրին ինչպէս ածուխն կրա-կարանի մէջ և անօր նման թնածխային թրու, ցրի շողի

և մոխիր (հիւսուածոց մաշած մասերն) յառաջ կը բերեն. ասոնք հերափողկաց մէջ կ'անցնին և երակաց ու աւշերակաց միջոցաւ դէպ ի սիրտ կ'ընթանան. աւշերակք ի ճանապարհի մամացն ընդունելով՝ երակային արեան կը խառնուին և անոր կը մատակարարեն մննդարար տարրերն: Երակային արիւնն վերջապէս՝ սրտէն անցնելէ ետք՝ թոքերն դիմելով անդ կը թոթափէ իր հետ բեռնաւորեալ կրած թնածխային բրուն ու ջուրի շողին, կ'ընդունի օդի բրուածինն և կը վերածուի կրկին սնընդարաց արեան. այս մնուցիչ հեղուկն սրտէն անցնելով՝ անոր կծկման ուժովը այց կ'ենչ մարմոյ ամէն հիւսուածոց մէջ, զայնս կը մնուցանէ ըստ վերոգրելոյն, և այսպէս շարունակաբար: Զմոռնանք ըսել թէ՝ արեան մէջ անցած հիւսուածոց մաշած մասերն՝ արեան աւելորդ ցրոյն հետ կը ծծուին երիկամունքներէն, և մզային փամփուշտի մէջ ամբարուելով պարբերաբար դուրս կ'արտաքսուին մարմնէն:

Զերմաւրիւն. — Հիւսուածոց այրումն ջերմութիւն յառաջ կը բերէ. ջերմութիւնը մարդոց համար միշտ 37,5° է ի ներքուստ, իսկ արտաքուստ անութից տակն 37°, զոր կը քննեն բժիշկք առ ի դիւրութիւն: Այս ջերմութիւնն ամէն երկիր, կլիմայի և պարագայի համար նոյնն է, մի քիչ նուազում կամ յաւելում կը վնասէ մարդկային կազմածին:

Մարդկեղէն մեքենան գործելու համար 37,5° ներքին ջերմութիւն ունենալու է, արդ՝ մեղ շրջապատող օդն 37°էն որչափ որ նուազ է՝ բնականաբար մեր մարմոյ ջերմութիւնը նուազեցնելու այնչափ աւելի պիտի ձգտի, որոյ դէմ երկու միջոցներով կրնանք մրցիլ սնունդներով և զգեսներով: Սննդեամբ մարմոյ աւելի մնունդ կամ այլելի նիւթ տալու է, որպէս զի արտադրեալ ջերմութեան գոնէ 37,5°ն իրեն մնայ. այս պատ-

ճառաւ ձմեռ ատեն աւելի կը ճաշակենք քան ամառն, և նա մանաւանդ փորձառութենէ ուսեալ աւելի նախամեծար կը համարենք ճարպային և անուշեղէն մնունդներն՝ որք մեծ քանակութեամբ ջերմութիւն յառաջ կը բերեն: Սառուցեալ գոտիներու բնակիչներն՝ չնորհիւ իրենց ջուրի նման խմած իւղերու և ճաշակած մեծաքանակ ճարպի միայն կրնան տոկալ և պահել իրենց ներքին 37,5°ի ջերմութիւնն:

Զգեստեղէնք եւս մեծ ծառայութիւն կը մատուցանեն ոչ թէ մեր մարմինը տաքցնելով՝ զոր կատարելու անկարող են, ալ զայն պատելով անոր շառաւղացումն կ'արգիլեն ցուրտ ատեն և ներքին ջերմութիւնն միօրինակ կը պահնեն:

Մարդիկ ներքնաբար սնունդի և յարտաքուստ՝ գէշ հաղորդիչ զգեստեղինաց միջոցաւ նոյնիսկ կրնան դիմագրել — 70°ի, անշուշտ միշտ 37,5° ներքին ջերմութիւնն ունենալով, զի մեջ ջերմութիւնն 2°-3° նուազի՝ մարդկային մեքենան կը դադրի, մարդն կը սառի:

Ինչպէս ցրտութիւնն՝ նոյնպէս և ջերմութիւնն կը վնասէ մեղ, և կրկին մննդոց ու զգեստեղինաց միջոցաւ կը մրցինք անոր դէմ. արդարե մենք ամառն՝ իսկ տաք երկիրներու բնակիչք միշտ՝ կը խորշին ճարպային և անուշ մնունդներէ ու աւելի խոտեղէնները կ'ընտրեն և քիչ քանակութեամբ, զի փոքր քանակութեամբ ջերմութիւն հարկ է, Զգեստեղէններն և նամանաւանդ գէշ հաղորդիչներն՝ արտաքին ջերմութեան մարմոյ վրայ ազդեցութիւնն կ'արգիլեն:

Երբ ներքին ջերմութիւնն աւելնայ՝ քրտնարտադրիչ գեղեցերն մեծ քանակութեամբ յրտինից կ'արտադրեն. մարմոյ մակերեւոյթն պատող ջրի խաւ մը յառաջ կուգայ, որ զմեզ կը զովացնէ և հաւասարակշուռութիւնն յառաջ կը բերէ:

Աշխատութիւն և շարժում ջերմութիւնը կ'աւելցնեն՝
զոր քրափնքն կը մեղմէ : Մարդոց ներքին ջերմութիւնն
42°-43° ելնելուն՝ անմիջապէս ջղային դրութեան պաշ-
տօնավարութիւնն կը դադրի և մահը կը հասնի :

Ուժ եւ շարժում : — Այս արտադրեալ ջերմութիւնն
է որ մկանաց մէջ ամբարուելով՝ ի հարկին կը գործած-
ուի զայնս կծկելով շարժումներ յառաջ բերելու համար :

Եթէ մեծ աշխատութիւն մը կատարենք՝ բնականա-
բար աւելի մեծ քանակութեամբ ջերմութիւն կը գոր-
ծածուի . որչափ որ արագ աշխատինք՝ այնչափ ջերմու-
թիւն երեւան կ'ելնէ և տաք կը զգանք, և եթէ ջեր-
մութիւնն 38°ն անցնի՝ կը frsնինի, որոց չափաւորիչ յատ-
կութիւննն արդէն ծանուցինք : Երբ մկանաց մէջ ամ-
բարեալ ջերմութիւնն աշխատութեամբ սպառելու մօտ
ըլլայ՝ յոզնուրիւն կը զգանք :

Շարժում, աշխատուրիւն ու ցուց կը սպառեն մեր
հիւսուածներն, և այս առթիւ մեր կորուստն անոնց հա-
մեմատական է . այս սպառումն վերանորոգելու համար
սնունդ ստանալու ենք և այդ սնունդը վառելու համար
չնչելու ենք . սովու հարկ եղած ջերմութեան արտա-
դրմամբ և հիւսուածոց վերանորոգմամբ հաւասարակրշ-
ուուրիւնն կը հաստատուի . աւասիկ սննդեան նպատակն :

ԳԼՈՒԽ Ե.

ԶԱՏՈՒՑՈՒՄՆԵ

ՃԻՒԹԱՐՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՎ ՃԻՒԹԱԶԱԽԱԹԻՒՆ

Մարդային մարմնոյ որպէս ամէն կինդանեաց մէջ՝
զեղձ անուանեալ կարգ մը գործիներ կան, որոց ոմանք
իրենց ստացած արիւնով մասնաւոր հիւթեր կը պատրաս-
տեն, այլք անոնց մէջէ իրենց պաշտօնի յատուկ մասնաւոր
մարմիններն միայն կը զատեն : Այս գործանութիւն-
ներն ընդհանուր առմամբ զատուցումն կը կոչուին, բայց
աւելի յարմար կը գատեմ առաջններն հիւրարտարու-
թիւն, իսկ երկրորդներն հիւրագատուրիւն անուանել :

Սրաադրմամբ կամ զատուցմամբ հաւաքեալ հիւթերն
կամ կը ծառայեն մարմնոյ դրութեանց և գործարանաց
բարւոք գործառնութեանց՝ որպէս մարսողական գեղձե-
րունն, կամ մի երկրորդ նմանօրինակ էակի արտադրու-
թեան և սնուցման, որպէս սերմն ու կաթն, և կամ
մարմնոյ մաշած ու անպէտ մասերն լինելով՝ գուրս կ'ար-
տաքսին մարմնէն որպէս մէզն :

Գեղձերու ոմանց միայն հիւթագատիչ կամ հիւ-
թարտադրիչ ըլլալն որոշապէս յայտնի է, կան որ միջան-
կեալ յատկութիւններ կը ցուցնեն, և կան այլք՝ որոց ո՞ր
դասին վերաբերիլն անորոշ է : Ուստի աստ' ոչ թէ իրենց
բնախօսական յատկութեանց կարգաւն՝ այլ ըստ իրենց
պաշտօնին և գրաւած տեղեաց հինգ կարգի դասակարգե-
ցինք, և զորս ըստ այնմ պիտի քննենք :

1. Մարսողական գեղձեր, 2. կեարգ, 3. Մորթա-

յին գեղձեր, 4. Ամորձիք կամ սերմնային գեղձեր և ձուարան, 5. Երիկամունք կամ միզային գեղձեր : Ասոնց ամէն մէկուն ի մասնաւորի քննութիւնն սկսելէ յառաջ գեղձերու ընդհանուր կազմախօսութիւնն և բնախօսութիւնն պիտի ընենք աստ համառօտակի :

ԳԵՂՁԵՐՈՒ ԿԱՇՏՆ. — Գեղձերն թէպէտ իրենց կազմութեամբ շատ կը տարբերին իրարմէ, բայց եթէ ուշի ուշով քննենք՝ զանոնք 4 գլխաւոր ձեւերու կրնանք վերածել :

Ա. Պարզ գեղձեր . — Հուզաթաղանթից մէջ թաղուած գլանաձեւ փոքրիկ խորութիւններ են (Ճ. 8), ներքնաբար բջիջներով պատեալ :

Բ. Ողկուզաձեւ գեղձեր . — Ճիշտ խաղողի մը ողկոյզին կը նմանին (Ճ. 32), որոյ իրաքանչիւր հատերն



Ճ. 32. — Ողկուզային գեղձ մը (յարականքային)



Ճ. 33. — Քրտնարտադրիչ գեղձ մը
Ճ. 35 անզամ մեծցած


ներքնաբար բջիջներով ծածկուած են, որպէս նաև կոթունն և իր ստորաբաժանումներն :

Գ. Խողովակալին գեղձեր . — Երկար խողովակներ են (Ճ. 33) որոց մարմնոյ աւելի ներքին կողմն գտնուող մասերն ներքնաբար բջիջներով ծածկուած են. ասոնք

երբեմն առանձինն են՝ ինչպէս քրտնային գեղձերն, սրբեմն խմբեալ՝ ինչպէս միզային և սերմնային գեղձերն :

Դ. Բջջային գեղձեր . — Պարզ բջիջներ են, որոց իւրաքանչիւրն իրբեւ մի գեղձ կը գործէ, որպէս լեարդային բջիջներն :

ԳԵՂՁԵՐՈՒ ՌԵՍԱՆՍՈՒԹԻՒՆՆ. — Ամէն գեղձերու ալ բջիջներն են գործողներն, որք զիրենք այցելող արեամբ կը պատրաստեն իրենց մասնաւոր հիւթերն և կամ անտի կը զտեն իրենց պաշտօնին պէտք եղած նիւթերն : Այս արտադրեալ հիւթերն իրարու խառնուելով՝ իրենց խողովակաց միջոցաւ դուրս կը հոսին. գեղձերու ծերացեալ բջիջներն իրենց արտադրած հիւթոց մէջ հալելով՝ անոնց հետ դուրս կ'ելնեն և անոնց տեղ ուրիշ բջիջներ կը յաջորդեն :



Ճ. 34. — Քրտնարտադրիչ գեղձից մորթի վերաբացւող բերաններն

Ա. ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳԵՂՁԵՐ

ԼՈՐՉԱՅԱՅԻՆ ԳԵՂՁԵՐ. — Լորձնային գեղձերն երկու տեսակ են. պարզ և ողկուզաձեւ : Պարզերն բերնի հուզաթաղանթի մէջ ցիրուցան թաղուած են և անթիւ, իսկ ողկուզայիններն երեք դոյգ են.

1. Յարականցայիններն որք լսելեաց վարի կողմն կը դանուին, ընկուզի մը մեծութիւնն ունին և վերին ծնօտի երկրորդ լենսատամանց դիմացը կը բացուին :

2. Ենթակալայիններն ստորին ծնօտի վարն և յենակողմն գրաւած են, իւրաքանչիւրն նուշի մը մեծութիւնն ունի . լեզուակապի առաջակողմն կը բացուին :

3. Ենթալեզուեամեներն լեզուի տակն կը գըտնուին, լուրփայի մը մեծութիւնն ունին և լեզուին տակը կը բացուին :

Մարդ մը 24 ժամու մէջ միջին հաշուով 1,5 քիլոմետր լորձունք կ'արտադրէ . ասոր արտադրութիւնն շարունական է, բայց ծամելու ատեն արտադրութիւնն ու արտադրութիւնն կ'աւելնայ : Զղային գրութիւնն ալ մեծ ազդեցութիւն ունի լորձունքի արտադրման վրայ, զի երբ ճաշակելի սնունդէ մը ախորժինք՝ նոյն խակ զայն տեմնելով՝ լորձունքնիս կը սկսի վագել :

Լորձունքի գրեթէ ամբողջութիւնը ջուր է, 0/0 1-2 կարծր մարմիններ կը պարունակէ որոց մեծամասութիւնն զանազան աղեր են և գլխաւորն հասարակ աղը : Լորձնի գործօն տարրն լորձնիսն է, խմորային մարմին մը՝ որոյ միջոցաւ ալիւրային մարմիններն քաղցրանիւթի կը վերածուին, ինչպէս տեսանք մարսողութեան առթիւ :

Կոսորու եւ ստուգու ԳԵՂ.ՁԵՐ.— Ասոնք պարզ գեղձեր են՝ որք սննդական գնդակի կլանումն ու սահումն դիւրացնելու կը ծառայեն : Նշյկն պարզ գեղձերու խումբ մ'է :

Ուսոր ԳԵՂ.ՁԵՐ.— Որկորի հուզաթաղամնթի մէջ թաղուած կամ պարզ և ողկուզային գեղձեր՝ որք որոկուրանոյզն կամ խախացանոյզն կ'արտադրեն . սա թթու հեղուկ մ'է, կը պարունակէ խախացիս, խմորային մարմին մը՝ որ բորակածնային մարմիններն խախացի կը վերածէ . սա աղիքներէն ծծուելու հանգամանքն ունի :

ԽՍԱՆ. — Խոանն (Pancréas) առաջնաղեաց ծալից մէջ հորիզոնաբար պառկած ողկուզային գեղձ մ'է (ձև 18), որոյ արտադրած հիւթն առաջնաղեաց մէջ կը թափի երկու անցքերով :

ԽՍԱՆԻ արտադրած հեղուկն լորձունքի կը նմանի, փոքր ինչ աւելի թանձր է . մասնիս անուանեալ խմորային մարմին մը կը պարունակէ, որոյ միջոցաւ թէ

լորձնիսի և խախացիսի պաշտօններն կը կատարէ և թէ ճարպային մարմիններն մանր գնդակաց վերածելով անոնց մարսողութեան կը նպաստէ :

ԿԱՐԵԴ. — Իր լեզուին մարսողութեան կը ծառայէ, ուրիշ պաշտօն ալ ունի . ուստի և զայն առանձինն պիտի ուսանինք :

ԱՌ.ԽԱՑ ԳԵՂ.ՁԵՐ.— Սղեաց գեղձից հոյզն՝ ըստ բազմաց՝ մասնաւոր խմորային մարմինն մը կը պարունակէ, որոյ միջոցաւ լորձնիսի, խախացիսի և մասնիսի գերերն միանդամայն կը կատարէ :

Բ. ԼԵԱՐԴ

ԼԵԱՐԴՆ որկորի աջակողմն գտնուող և ընդ երկարութիւն հատեալ կէս հաւկթի ձեւն ունեցող գեղձ մ'է, որոյ կոր երեսն վեր՝ խակ տափարակն դէպ ի վար դարձած է : Ծանրութիւնն շուրջ 2 քիլո է :

ԼԵԱՐԴՆ իրարու մէջ անցած երկու տարբեր գեղձեր կը ներկայացնէ : Ասոնց մին ողկուզաձև է, որոյ հատերն վիրենք մատակարարող լեարդային չնչերակի արեան սննդեամբ կը պատրաստեն մաղձն կամ լեզին . այս արտադրեալ հիւթերն իրարու հետ միանալով՝ մաղձային խողովակը կը կազմեն, որ լեարդի ստորին մակերեւոյթէն դուրս ելնելով մաղձային փամիուշտի մէջ կը հաւաքուի : Այս փամիուշտը տանձի մը ձեւն ունի և խողովակաւ մը առաջնաղեաց մէջ կը բացուի (ձև 18) :

Այս ողկուզաձեւ մեծ գեղձի հիւթերուն և հատկաց ձգած պարապութիւններն լեարդային անուանեալ բջիջներով լեցուած են, որոց իւրաքանչիւրն բջջային գեղձ մը կը ներկայացնէ . ասոնք աղիքներէն վերադարձող երակէն մատակարարուելով՝ քաղցրանիւթ կը պատրաստեն, զոր

լեարդալին երակն ծծելով՝ կը տանի արեան մէջ կը խառնէ, ուստի այս բջիջք շահարային գեղձեր են:

Մաղձն ինքնին գեղին հեղուկ մ'է, բայց մեզ կանաչ կ'երեւի: Զափահաս մարդու մը լեարդն՝ օրն 1200-1500 կրամ լեզի կ'արտադրէ: Մաղձի ս/թ 85ը ջուր է և 15ն զանազան մարմիններ, որպէս՝ մաղձային թթուներ, գունաւորիչ մարմիններ, մաղձիտ և զանազան աղեր:

Մաղձը կը նպաստէ ճարպային մարմնոց մարտութեան, և աղեաց բարւոք գործառնութեան. լեզին մարմնոյ մէջ արտադրեալ մի քանի. աւելորդ մարմնոց արտաթորիչն է միանդամայն. արդարե երբ լեարդի մաղձարտադրութիւնն զաղըի, մարմնոյ զանազան մասանց մէջ արտադրեալ գունաւորիչ հիւրեւն և մաղձին արեան մէջ մնալով՝ մորթին դեղնութիւն կը պատճառեն: Ս.յդ հիւանդութիւնն դեղնութիւն կը կոչուի:

Լեարդի պատրաստած քաղցրանիւթն արեան մէջ անցնելով՝ հիւառածոց մանդեան կը ծառայէ. եթէ ջղային դրութեան ազդեցութեամբ և կամ մի այլ պատճառաւ լեարդի գործառնութիւնն արագանայ և լեարդէն մեկնող արիւնն ս/թ 2էն աւելի քաղցրանիւթ պարունակէ՝ աւելորդն մարմնոյ մէջ չկրնալով սպառիլ, երիկամունք զայն մէզին հետ գուրս կը հանեն մարմնէն: Ս.յս հիւանդութիւնն շահարայիս կամ շահարամիզութիւն կը կոչուի, որոյ ենթարկեալք մինչև օրն 3-400 կրամ քաղցրանիւթ կ'արտաքսեն իրենց մարմնէն. բնականաբար առօրեայ այսպիսի մեծ կորուստ մը մարմինն հիւծելով մահ կը պատճառէ:

Ուղեղի 4րդ փորոքի վիրաւորումն լեարդի այս գործառնութիւնն կը գրգռէ և կենդանին շաքարախտի կ'ենթարկէ:

Յուղումներն կրնան շաքարամիզութիւնն պատճառել, որք ընդհանրապէս տեւական չեն ըլլար:

Գ. ՄՈՐԹԱՅԻՆ ԳԵՂՁԵՐ

Քրտնային գեղձեր. — Ասոնք մաշկի թանձրութեան մէջ ուղղահայեացաբար հաստատուած գլանաձև գեղձեր են, որոց թիւն 2-3 միլիոնի կը հասնի. այս գեղձերն ընդհանրապէս իրարմէ հաւասար հեռաւորութեամբ կը գանուին համայն մորթային գրութեան մէջ (ձև 33, 34):

Քրտնային գեղձերն միշտ կը գործեն և իրենց արտադրած հիւթն մարմնոյ մակերեւոյթին վրայ կը թափեն, սակայն սա խիստ աննշտն է և անմիջապէս չողիանալով ոչինչ կը զգանք և որ անզգայ յրտնում կ'անուանի. բայց մինային սաստիկ աշխատութեամբ և այլ եղանակաւ եթէ տաքնանք՝ այն ատեն այս գեղձերն գրգռուելով մէկ ժամուան մէջ մինչեւ 400 կրամ կամ աւելի յրտինել կրնան արտադրել, ինչ որ միայն հասարակօրէն յրտնում կ'անուանեն. այս հեղուկն մարմնոյ մակերեւոյթն հասնելով կը պատէ զայն ու կը չողիանայ մարմնոյ ջերմութեան միջոցաւ, և այսպէս կը զովացնէ մարմինն, որոյ համար և մենք արդէն զայն ջերմութեան չափաւորիչ անուանեցինք:


Զղային դրութիւնն մեծ ազդեցութիւն ունի քըրտնային գեղձերու վրայ. շատ ատեն բարկութիւնն, վախն, կամ սարսափի գաղտափար մը կարող է մեծ քանակութեամբ քրտինք յառաջ բերել:

Սրտաքին ականջի ներքին կողմի քրտնային գեղձերն խիստ խիտ են և ասոնց ներքին բջիջներն առանց հալելու գուրս կ'ելնեն, որով արտադրութիւնն դեղին և ճարպային մարմնոյ մը գոյնն կ'առնու՝ որ զիջ կ'անուանի և գեղձերն զիջային կը կոչուին:

Քրտինքն աղի հեղուկ մ'է, կը պարունակէ ս/թ 22 հասարակ աղ, ճարպային մարմիններ, քրտնային թթու,

միզիտ ելն . իր մասնաւոր համն՝ պարունակեալ ճարպային մարմնոց և քրտանային ցնդական թթուի կը պարտի . իր հոտն ըստ ցեղից կը փոխուի :

Ճարպային գեղձեր . — Մորթային դրութիւնն ծած-
կող իւրաքանչիւր մազ՝ իր արմատին կից երկու ճար-



Ձե 35. — Մորթն իր մէջ թայլուած մա-
զերու արմատներով , իրենց միներովն և
ճարպային գեղձերովն
մ. մաշկ, վ. վերևամաշն, ի. մազ, Բ.
մազերու գեղձերն, մ'. մազային մկներ

Արտասուային գեղձեր . — Արտասուային գեղձերն
ակնակապիճի փոսին վերին և արտաքին կողմն գտնուող
խորի մը մէջ զետեղեալ ողկուղածեւ գեղձեր են , որոց
արտադրած հեղուկն 6-7 խողովակներով աչաց արտաքին
անկիւնին մօտ և քիչ մը աւելի վերօք կը թափի . ամէն
անգամ որ աչքերնուս կոպերը գոցենք՝ այդ հեղուկը կը
տարածենք մեր աչաց մակերեւոյթին վրայ . բայց Մէյ-
պօմէիւսի գեղձից արտադրած ճարպային հեղուկէն . ար-
գիւեալ դուրս չկրնար ելնել և կը հաւաքուի աչաց ներ-
քին անկիւնն՝ ուր արտասուական փամփուշտի մը մէջ
կը լեցուի (Ձեւ 36) և անկէ մասնաւոր խողովակաւ քթին
մէջ կը հոսի :

Արտասուաց արտադրութիւնն շարունակական է ,


պային գեղձեր ունի (Ձե 35) : Թարթչի մա-
զերու ընկերացող ճար-
պային գեղձերն՝ զի-
րենք առաջին անգամ
գտնողին անուամբ Մէյ-
պօմէիւսի գեղձեր կ'ան-
ուանին :

Այս ճարպը մազերն
իւղուելով անոնց բե-
կումն կ'արգելու, զայնս
կը պաշտպանէ և մոր-
թի անթափանցկութիւ-
նը կ'աւելցնէ :

Արտասուային գեղձերն
ակնակապիճի փոսին վերին և արտաքին կողմն գտնուող
խորի մը մէջ զետեղեալ ողկուղածեւ գեղձեր են , որոց
արտադրած հեղուկն 6-7 խողովակներով աչաց արտաքին
անկիւնին մօտ և քիչ մը աւելի վերօք կը թափի . ամէն
անգամ որ աչքերնուս կոպերը գոցենք՝ այդ հեղուկը կը
տարածենք մեր աչաց մակերեւոյթին վրայ . բայց Մէյ-
պօմէիւսի գեղձից արտադրած ճարպային հեղուկէն . ար-
գիւեալ դուրս չկրնար ելնել և կը հաւաքուի աչաց ներ-
քին անկիւնն՝ ուր արտասուական փամփուշտի մը մէջ
կը լեցուի (Ձեւ 36) և անկէ մասնաւոր խողովակաւ քթին
մէջ կը հոսի :

Արտասուաց արտադրութիւնն շարունակական է ,

բայց քիչ լինելուն զայն չենք զգար , սակայն երբ բա-
րոյական զգացումներ չլային դրութիւնն զրգուեն՝ այն
ատեն մեծ քանակութեամբ կ'արտադրուի և քթին մէջ



Ձե 36 . — Արտասուաց զործիքի
մի տեսական պատկերն

1. աչաց գունդի շրջանակն,
2. ակնակապիճի շրջանակն,
3. արտասուական գեղձակն, 4. ար-
տասուական մասիկ (caroncule),
5. արտասուական վերին լո-
ղակն, 6. արտասուական
փամփուշտ, 7. ֆրային խողո-
վակն, 8. ֆրային խողովակի
վարի ծայրն, 9. ֆրային խողո-
վակի վարի մասն

կը հոսի , և երբ արտասուական խողովակներն զայն ամ-
բողջովին տանելու անկարող ըլլալով՝ աչքէն դուրս վա-
գել սկսի , մենք արտասուել կ'անուանենք :

Դ. ՍՏԻՆՔ ԿԱՄ ԿԱԹՆԱՅԻՆ ԳԵՂՉԵՐ

Իւրաքանչիւր ստինք բազմաթիւ ողկուղային գեղ-
ձերէ կը բազկանայ՝ որոց կոթունին վերին ծայրերն իրա-
րու հետ խուրց մը կը կազմեն և ստինքի պտուկին մէջ
կը բացուին (Ձեւ 37) :

Կաթի 0/0 12ն կարծր մարմին է և մնացեալն ջուր ,
այս կարծր մարմիններն չորս կարգի կը վերաբերին : 1.
Կաթնային շաբաթ 0/0 4,5. 2. Ճարպային զնդակներ 0/0 3
յորմէ կը կազմուի կարագն . 3. Պանրիս 0/0 4 յորմէ կը

կաղմուի պահին . 4. Հանգային աղեր $\% 0,5$ գլխա-
որապէս լուսածնային ա-
ղեր են, որք չառ կարեւոր
են մանկանց՝ իրենց կմախ-
քի կաղմութեան համար :

Կաթն երախայից դար-
գացման և կմախքի կաղ-
մութեան նպաստաւոր բա-
ղադրութիւն մ'ունի, հե-
տեւարար մանուկը իրենց
մատաղ հասակին կաթ
միայն ուտելու են և աւելի
կանանցն :

Սերմեային եւ ձուային
գեղձեր . — Ասոնց մասին
տես մեր «Ծննդական գոր-
ծարանք» անուն գործը :

Ձև 37. — Սալինքի կազմն մեծցած


Ե. ՄԻԶԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱԱԶՄԱՆՕՍՈՒԹԻՒՆ . — Միզային գործարանն 4 գոր-
ծիներէ կը բաղկանայ : Երիկամունի՛ միզարտադրիչ գեղ-
ձեր են, արտադրած մէջն միզանցից խողովակաց միշոցաւ
միզային փամփուշչի մէջ կը հաւաքուի, ուկէ պարբերա-
բար դուրս կ'արտաքսենք միզուկի միջոցաւ, (ձև 38) :

Երիկամունք երկու նմանօրինակ գործիներ են և
որովայնի վերին կողմը զետեղեալ, մին՝ ողնայարի սիւ-
նակին աջ, իսկ միւսը՝ ձախ կողմը : Ասոնց ձեւը լու-
րիայի նման է, որոց պորտերն իրարու կը նային (ձև 38) .
այս պորտերէն կը մնենին՝ զիրենք միզային փամփուշտի
հետ հաղորդող միզանցից խողովակներն և կրկին այս


կէտէն ներս կը մանեն և դուրս կ'ելնեն զիրենք մատա-
կարարող արեան խողովակներն ու ջիզերն :

Երիկամ՝ մը իր երկարութեամբ կէտէն կտրելով պիտի
նշմարենք արտաքին խաւ մը, զոր երիկամային կեղեւ
կ'անուանեն, միջին մասն՝ իր կեղրոնն և աւելի դէպ ի
պորտին կողմը պարապութիւն մ'ունի զոր սլահակ կը



Ձև 38. — Միզային գործարան

ի. Երիկամունի՛,
մ. միզանցի,
փ. միզային փամ-
փուշ, մ'. միզուկ



Ձև 39. — Ընդ երկարութիւն հասաւարածին հասեալ երիկամ մը կ.
կ. կեղեւային խաւ, բ. բ. Մալիկիկի բուրգեր, Վ. սկանակ, մ.
միզանցի

կոչեն (ձև 39), և որ դէպ ի միջին մասն ներս մտած
բաժակ անուանեալ ծոցեր ունի : Իւրաքանչիւր բաժակ՝
երկու բրդածեւ խուրձերու միջեւ կը զանուի՛ որք արդէն
պարզ աչօք իսկ կը տեսնուին . մանրացոյցն մեղ պիտի
ուսուցանէ թէ խուրձերէ մէն մին 8-18 խողովակներէ բազ-
կացեալ է՝ որք բաժակէն դէպ ի կեղեւն երթալով իրարմէ

կը զատուին, կը բաժնուին ու կը սառարաժնուին և այսպէս բուրգեր կը կազմն՝ որք առաջին անգամ նկարագրողին անուամբ Մալիխիի բուրգեր (ձեւ 39) կը հոչուին. ասոնց միութիւնն կը ներկայացնէ այս միջին խաւն. այս ուղիղ խողովակներն կեղեւալին խաւնն հասնելով անդ խել մը դարձուածներ կ'ընեն ու գնդակներով կը վերջանան : Այս գնդակներն որք Մալիխիի պատճա աւ կ'անուանին, առատ արիւն կը ստանան՝ որոց միջէն կը ծծեն մէզն :

Միզանց.— Սկահակի մէջ հասած մէզն փամփուշտի մէջ տանող խողովակն միզանց կ'անուանի, որ 25-30 հրմ երկարութիւն ունի :

Միզային փամփուտ.— Միզային փամփուշտն ձուաձեւ պարկ մ'է ուր կը հաւաքուի մէզն . սովորական ծաւալն 5-600 կրամ հեղուկ կրնայ պարունակել, բայց ընդլայնմամբ աւելի կրնայ ընդունիլ :

Փամփուշտի և միզուկի հաղորդակցութեան տեղ ուժեղ շրջանակաձեւ մ'կան մի կայ՝ որ իր ընդլայնմամբ միայն կը թոյլաարէ մէզի անցքն :

Միզուկ . — Միզուկն խողովակ մ'է որոյ միջոցաւ մէզն դուրս կ'ելնէ :

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ . — Երիկամունք կենդանային մեքենայի մաշած մասերն, աղերն և արեան աւելորդ ջուրը կ'ընդունին և առ այս բնախօսք զայնս աւելի մասնաւոր պարզուաներ կը համարեն քան գեղձեր :

Մարդ մը 24 ժամուան մէջ միջին հաշուով 1200-1300 կրամ մէզ կ'արտադրէ : Մէկ օրուան մէջ արտաքսուած կարծր մարմիններու քանակութիւնն ընդհանրապէս մարդոց ծանրութեան $\frac{1}{1000}$ է, հետեւաբար 60 հազարամբ ծանրութիւն ունեցող մարդունն 60 կրամ է : Այս կարծր մարմնոց բաղադրութիւնն է $\frac{1}{50}$ միզիտ, 5 միզիտային աղեր, 20 հասարակ աղ, 25 զանազան աղեր :

Եթէ լեարդն հարկ եղածէն աւելի քաղցրանիւթմատակարարէ և կամ արիւնն իր մէջ $\frac{1}{100}$ 2էն աւելի պարունակէ՞ զայն, աւելորդն մարմնոյ մէջ չկրնալով սպասիլ երիկամունքներէն կը ծծուի և մէզին հետ դուրս կ'ելնէ : Այս հիւանդութիւնն Շաբարամիզուրիւն կ'անուանի :

Երբ երիկամային գործին խանգարի, արեան սպիտնթէպէտ սոմնձակերպ՝ բայց կ'անցնի երիկամանց մէջ և այսպէսով երբեմն առօրեայ մեծ քանակութեամբ սպիտի կորուստ մը տեղի կ'ունենայ, որ բնականաբար հիւծում կը պատճառէ : Այս հիւանդութիւնն սպիտակիզուրիւն կ'անուանի :

Միզային կարծր մարմիններ եւ բարեր .— Եթէ մէզն մեծ քանակութեամբ կարծր մարմիններ ունենայ՝ չկրնալով զայնս հալել իր մէջ, թոյլ կուտայ անոնց աւազի նման հաւաքուելու, որք մզային խողովակաց մէջէ անցնելով խիթ կը պատճառեն : Այս աւազանման մարմիններն երբեմն միանալով միզային քարեր կը կազմն :

Մակերիկամային պատին .— Երիկամանց իւրաքանչիւրի վերին կողմնկը գանուու բրգաձեւ գեղձանման մարմին մը, զոր մակերիկամային պատճա կ'անուաննեն : Այս գործիներու պաշտօնն անծանօթ է :

— 78 —

ՄԱՍՆ Բ.

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԻՒԽՆԵՐ

Յարաբերական կամ առնչական կ'անուանին, ըսինք, այն ամէն գործառնութիւններն՝ որք զմեղ յարաբերութեան մէջ կը դնեն մեղ շրջապատող էակաց, իրերու կամ աշխարհի հետ, ասոնք երեք կարգի կը բաժնուին.

1. Զգայական գործառնութիւնն. — Զգայարանք անուաննեալ գործեաց միջոցաւ մեղ կը ծանօթայնեն զմեղ շրջապատող էակաց կամ մարմոց ձեւն, զոյնն, դիրքն, մեծութիւնն, հեռաւորութիւնն (տեսանելիք), արտադրած ձայներն, անոնց ուղղութիւնն (լսելիք), համեն (ճաշակելիք), հուն (հոտոտելիք), իրենց կարծութեան աստիճանն, մնչմամբ մեղ ազդած ցաւն, ծանրութիւնն, չերմութիւնն (շոշափելիք) ևայլն:

2. Շարժական գործառնութիւնն. — Մկնային դրութեան միջոցաւ և անոնց կծկմամբ կը կատարուին կենդանային ամէն կարգի շարժումներն, որոց գործակից են ընդհանրապէս ոսկրերն կամ ոսկրային դրութիւնն և երբեմն ալ մորթն:

3. Զայնային գործառնութիւնն. — Խոչակի միջոցաւ ձայներ արտադրելով և զայնս իրեն օգնական մասանց միջոցաւ ձեւափոխելով մարդիկ իրենց գաղափարներն այլոց կ'արտայայտեն:

Այս երեք կարգի գործառնութիւններն ունին իրենց յատուկ գործարաններն, դրութիւններն և գործիններն՝ որք ամէնն ալ ջղային դրութեան միջոցաւ կը գործեն և առանց անոր ոչինչ կարող են ընել. զգայարանքներն

անոր կը հազորդեն իրենց վրայ եղած աղդեցութիւններն և նա կը զգայ, կը դատէ. ջղային դրութիւնն է որ կը հրամայէ մկանանց որպէս զի կծկմամբ շարժում յառաջ բերեն. և վերջապէս նա է որ խոչափողի մկներն կծկելով և բերնի օժանդակ զանազան մասանց շարժմամբ՝ յառաջ բերել կուտայ ամէն կարգի ձայներն: Ջղային դրութիւնն ոչ միայն յարաբերական գործառնութեանց հրամանատարն է՝ այլ նաև մննդական և ծննդական երեւոյթից՝ ինչպէս պիտի հաստատենք. ուրեմն ջղային դրութիւնն կենդանային մարմնոյ տերն ու դեկալարն է և առնչական գործառնութեանց մասնաւոր հրամանատարն. ուստի նախ այս դրութիւնն պարտինք ուսումնափոխենէն առաջ:



ԳԼՈՒԽ Ա.

ԶՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Կենդանիք ջղային երկու դրութիւն ունին, զանկողնայարային և կծկային: Նախ պիտի քննենք ասոնց կազմութիւնն ու նկարագիրն և ապա իրենց մասնաւոր պաշտօններն:

ԿԱԶՄԱԿՈՍՈՒԹԻՒՆ


Ա. ԳԱՆԿՈՂՆԱՑԱՎՐԱՅԻՆ ԶՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Գանկողնայարային ջղային դրութիւնն կը բաղկանայ կեղրնայական մասէ մը՝ որ գանկին և ողնայարի միւնին

ներքին պարապութիւնն զբաւած ու հետեւաբար այս
ոսկրային տուփին ձեւն առած է, և այս կեդրոնական
մասէն մեկնող ջիղերկ՝ որք կ'երթան մատակարարել
մարմնոյ ամէն գործիներն և հիւսուածներն (ձեւ 40):
Գանկողնայարային դրութեան կեդրոնի՝ գանկի մէջ գըտ-
նուած գնդաձեւ մասն գանկուղեղ և ողնասիւնի մէջ երկար-
եալ մասն ողնուղեղ կը կոչուին, իրենց գրաւած տեղեաց
անուամբ: Այս կեդրոնական մասերն երկու ջղային հիւս-
ուածներէ կը բաղկանամ, սպիտակ և գորշագոյն տարր,
որոց առաջինն գրեթէ ամբողջովին ջղային խողովակ-
ներէ բաղկացեալ է, ունենանալով հանդերձ քիչ քանա-
կութեամբ ջղային բջիջներ, իսկ գորշագոյն տարրն ամ-
բողջովին ջղային բջիջներէ կազմնալ է: Գանկուղեղի
մակերեւոյթն գորշագոյն տարրով պատեալ է, իսկ կեդ-
րոնական մասն սպիտակ տարր է. ընդհակառակն ողնու-
ղեղի կեդրոնը գորշագոյն, իսկ արտաքինն սպիտակ
տարր կը ներկայացնէ: Իսկ գալով ջղերու՝ որք կեդրո-
նական մասէն կը մեկնին՝ ջղային խողովակաց տրցակ-
ներ կը ներկայացնեն:

Գանկողնայարային դրութեան կեդրոններն, գանկ-
ուղեղ և ողնուղեղ՝ իրենց ոսկրային տուփին մէջ խե-
ղապատակ անուանեալ երեք թաղանթներով պատեալ են,
որոց ներքինն՝ զորովենի, միջինն՝ պարուտակ, իսկ ար-
տաքինն՝ խատենի կ'անուանի. այս վերջինն ամէնէն
թանձրն է և մասնաւոր կէտերու վրայ ոսկրային տուփի
ներքին մակերեւոյթին հետ կցուած է:

Գանկուղեղն 4 մասերէ կը բաղկանայ (ձեւ 40, 41),
ուղեղ, ուղեղիկ, վառօղի կամուրց ու յառորեակեան զըն-
դակեներ և ողնուղեղի կոնդեզ՝ որ գանկուղեղն ողնուղեղի
կը մրացնէ և որոյ շարունակութիւնն է ողնուղեղն: Այս
երկու վերջին մասերն գանկուղեղի պարանց կամ եր-
կարեալ ողնուղեղ ալ կ'անուանին: Գանկուղեղէն մեկնող



Ձեւ 40. — Ջղային դրութիւն

Ա. ուղեղ, Ա', ուղեղիկ, ԱՊ. ողնուղեղ, Ե. երեսաց չիղմ, Վ. վերիմ
անդամոց չիղերն, Մ. միջնակողային չիղեր, Ա. սուրին անդամոց չիղեր


ջիղերն՝ զանկային, իսկ ողնուղեղէն մեկնողներն՝ ողնայրային շիդեր կը կոչուին:

ՈՒՂԵՂ. — Ուղեղը գանկի վերին կողմը գրաւածէ և անոր մեծ մասը կը լցնէ, ընդ երկարութիւն հատեալ կէս հաւկթի ձեւն ունի, որոյ կոր մասն գանկին գագաթի կորութեան կը համապատասխանէ, իսկ տափարակ մասն դէպի ի վար դարձած է. խստենոյ թաղանթն զայն վերին կոր մասէն ընդ երկարութիւն երկուքի ձեղքելով՝ իր ծալքով զայն երկու մասերու կը բաժնէ, զորս ուղեղային կիսագունդեր կ'անուանեն, մինչդեռ աւելի քառորդ գունդեր են: Ուղեղի ծանրութիւնն 1200-1300 կրամ է, աւելի կամ նուազ ծանր ուղեղներ ալ կան որոց մասին պիտի խօսինք:

Ուղեղի վերին մակերեւոյքն շատ մը խորտուքորաւութիւններ կը ներկայացնէ, որք աղեաց գալարից տեսքն ունին, և զորս ուղեղային զաղարներ կ'անուանեն:

Ուղեղային ստորին մակերեւոյքն տափարակ է, խստենոյ ընդ լայնութիւն ծալքով՝ կիսագունդերն երկու բիլթերու բաժնուած են, առաջակողմնաններն՝ մակատային, իսկ յեանակողմնաններն՝ ծոծրակային կը կոչուին. իր զանազան մասերու անուանակոչութիւններն կը ցուցնէ ձեւ 41:

ՈՒՂԵՂԻ. — Ուղեղի տափարակ մակերեւոյքի յեանակողմեան մասին տակը կը գտնուի, և հետեւաբար ծոծրակին կը համապատասխանէ (ձեւ 40, 41). ուղեղի հետ հաղորդ գտնուող երեսն տափարակ է, և անկէ խըստենոյ թաղանթի մը ծալքով բաժնուած է. հակառակ կողմն կոր է և խստենոյ ծալքի մի լայն շերտով երկու կիսագույց բաժնուած է, որոյ միջն զետեղուած է ողնայրի կոճղեզն. այս շերտէն ուղղահայեացաբար յաջ և յահեակ մեկնող 700ի չափ անհաւասար խորութեամբ շերտեր կան (ձեւ 41): Ուղեղիկի կեղրօնական ջղային սպիտակ տարրն՝ զինքը պատող գորշագոյն տարրի մէջ թափան-



Ձեւ 41. — Գանկուղեղի ստորին մակերեւոյքն

6. մակատային բիլթ ուղեղի, ծ. ծոծրակային բիլթ ուղեղի, փոփոկումն Միջինիւսի, սփ. ուղեղի կիսագնդարաշի փեռեկման վերին մասն և պարուտակէ կազմեաց շարադարնայ կամուրջն, մ. մակատային մարմինն և իր կորունքն, պ. պտկանի զերակներ, ոց ուղեղային կորուններ, դ. դարաւանդ կամ Վալորի կամուրջ, ո. ուղեղիկի, ար. առաջակողմնան բուրգն, չ. յուանաձեւ մարմիններ, ձ. ձիքապուու, ո. որաձեւ մարմին ուղեղի փեռեկման միջն զերեալ, 1. չոտսեկաց չիղ, 2. Տէսուղակն չիղ, 3. Ալա լընիանուր շարժիչ չիղ, 4. Կրացուցիչ չիղ, 5. Եռութակ չիղ, 6. Ալաց առաջանի շարժիչ չիղ, 7. Երեսային չիղ, 8. Լսողական չիղ, 9. Լեզուակողային չիղ, 10. Թուրակուրային չիղ, 11. Ողնայրային չիղ, 12. Ենթակզուկան չիղ

ցելով՝ անդ տերեւներու նման կը բաժնուի, զոր կենաց ծառ անուանած են:

Ուղեղիկի միջին ծանրութիւնն 130-150 կրամ է.

Վ.Ս.ՈՒ.Ը. ԿԱ.ՄՈՒ.Ի.Ջ. Եւ Ք.Ս.Ո.ՊՐԵ.ԱԿԵ.ԱՆ. Գ.Ն.Ա.Կ.Ն.Ե.Բ. — Վառօլի կամուրջն՝ որ Դարաւանդ ալ կ'անուանի, ուղեղի, ուղեղիկի և ողնայարի կոճղեղի միջանկեալ սպիտակ տարրէ կազմուած քառակողմեան փոքր մաս մ'է (ձեւ 40):

Վառօլի կամուրջի ուղեղին հետ միութեան յետնակողմն յառուեակեան գնդակներ անուանեալ չորս գնդանեւ մարմիններ կը տեսնուին:

ՈՂ.Ն.Յ.Յ.Ր. ԿՈ.Ճ.Լ.Յ. . — Ողնուղեղին գանկի մէջ վերջաւորած մասն ողնայարի կոճղեղ կ'անուանի, որ գագաթը վար դարձած հատեալ կոնի մը ձեւն ունի. կը բաղկանայ յառաջոյ երկու բրդաձեւ մարմիններէ, և կողմնաբար երկու քական սպիտակ գլաններէ:


Ողնուղեղի յետնակողմեան գլաններն գանկի մէջ թափանցելով՝ իւրաքանչիւրն իր կողմը կը շեղի և այսպէս եռանկիւնաձեւ խորութիւնն մը կը թողուն՝ որոյ սուրծայրը դէպ վար դարձած է նման լատինական V զրին, զոր չորրորդ փորով կ'անուանեն: Այս երկու գլաններն յետնակողմեան բռւրգեր կը կոչուին:

ՈՂ.Ն.Յ.Խ.Յ. . — Ողնուղեղն կոճղեղի շարունակութիւնն է, որ կը գրաւէ ողնայարի խողովակն մինչ միջաց երկրորդ ողնայարի սակրն, և ուր ջղային տրցակներ կ'արձակէ՝ որք դէպ ի վար կը շարունակուին միշտ գորովին պատեալ. իսկ խստենին անդ նեարդային ժապաւէնի մը վերածուելով՝ կ'երթայ կցուիլ ողնասիւնի յատակին:

Ողնուղեղն ընդ երկարութիւն երկու խոր շերտեր կը ներկայացնէ, յետնակողմեան և յառաջնակողմեան և իրարու դիմաց. այս շերտերն զայն աջակողմեան և ձախակողմեան երկու մասերու կը բաժնեն, որոց իւրաքան-

չիւրն եւս իրենց երկարութեամբ երկու շերտերով երեւական գլաններու կը բաժնուին:

Ողնուղեղի կեդրոնն ջղային գորշագոյն, իսկ արտաքին մասն սպիտակ տարրով կազմուած են. կեդրոնական գորշագոյն տարրն դէպ ի կողմնական շերտերն ձիւղեր կ'արձակէ սպիտակ տարրին մէջ, որով ողնուղեղի աջ և ձախ մասերն գորշագոյն տարրէ յառաջնակողմեան և յետնակողմեան ձիւղեր ունին իրենց մէջ, զորս եղջիւր



Ձեւ 42. — Ողնուղեղի հորիզոնական հատածի տեսական ձեւն

կ'անուանեն ըստ նմանութեան: Այս եղջիւրներէն մեկնող ջղային թելերն գուրս ելնելով՝ իրարու հետ կը միանան և կը կազմեն ջիղերն (ձեւ 42), հետեւաբար ողնուղեղային ջիղերն երկու արմատ ունին. յառաջնակողմեան և յետնակողմեան:

Ողնայարային ջիղերն զոյգ առ զոյգ կ'ընթանան, և ընդամէնը 31 զոյգ են (ձեւ 40). վերին և ստորին անդամոց ջիղերու մեկնած տեղի ողնուղեղն փոքր ինչ աւելի հաստ է:

ԶԻՆ. — Զիղերն սպիտակ ժապաւէններ են՝ որք ջղային դրութեան կեդրոններէն մեկնելով մարմնոյ բոլոր մասերն կը մատակարարեն. ասոնք ընդհանրապէս բաղմարմատ են, բայց անոնց բուն արմատն գորշագոյն տարրէն եկած մասն կը համարուի:

Զիղերն բաղմաթիւ ջղային խողովակներու արցակներ են, նեարդային հիւսուածէ թաղանթով մը պատ-

եալ . կեդրոնէն մեկնելէ վերջ կը բաժնուին ու կը ստո-
րաբաժնուին և իրենց մատակարարելիք հիւսուածոց մէջ
համելով՝ զիրենք կազմող ջղային սկզբնական խողո-
վակաց կը վերածուին , և անդ թելանման կը վերջանան .
այս թելերն ընդհանրապէս իրարու հետ բազմիցս կը
բերանակցին , երբեմն այս սկզբնական վիճակի թելերն
ջղային պատիճներով կը վերջանան :

Գանկողնայարային դրութեան կեդրոններէն մեկնող
ջիղերն բնականարար երկու կարգի կը բաժնուին , գանկ-
ուղեղային մասէն մեկնողներն՝ գանկային , իսկ ողնու-
ղեղէն մեկնողներն ողնայարային կը կոչուին :

ԳԱՆԿԱՅԻՆ ԶԻԴՆԵՐ.— Գանկային ջիղերն 12 զոյգ են
(ՃԵ 41):

1. Հոռոտեղեաց ջիղերն կը մատակարարեն քթի վե-
րին կողմն և հոտոտելեաց կը ծառայեն :

2. Տեսողական ջիղերն իրենց ծնունդէն քիչ վերջ
զիրար խաչաձեւ կարելով իրենց ուղղութիւնն կը փո-
խեն , և այսպէս աջակողմեան բիլթէն ծնունդ առ-
նողն դէպ ի ձախակողմն կը դառնայ և նոյն կողման
աչքի տեսողութեան զգայուն թաղանթն կը մատակա-
րարէ . ձախակողմեան բիլթէն մեկնողն միեւնոյն եղա-
նակաւ աջակողմեան աչքն կը մատակարարէ :

3. Աչաց ընդհանուր շարժիչ ջիղերն կը մատակա-
րարեն աչաց գլխաւոր մկներն և զանազան մասերն :

4. Կրացուցիչ ջիղերն աչաց գունդը վար և վեր
շարժեցներու կը ծառայեն :

5. Եռորեակեան ջիղերն երեք ճիւղերու կը բաժ-
նուին , որք կը մատակարարեն աչաց և ստորին ու վերին
ծնօտի զանազան մասերն :

6. Աչաց արտային շարժիչ ջիղերն աչաց արտաքին
ուղիղ մկներու կը հրամայեն :

7. Այտային ջիղերն այտից մկներն կը մատակարա-

րին , լորձնային գեղձից , լսողական և տեսողական գոր-
ծեաց մէջ ճիւղեր կ'արձակեն :

8. Լսողական ջիղերն ներքին ականջներն կը մատա-
կարարեն և լսողութեան կը ծառայեն :

9. Լեզուակուկորդային ջիղերն կը մատակարարեն
կոկորդն , ստուգնն և լեզուի արմատական մասն :

10. Թոփորկորային ջիղերն կը մատակարարեն խըռ-
չափողն , ստուգնն , թոքերն , սիրտն , լեարդն , որկորն և
աղիքներն :

11. Ողնայարական ջիղերն կը մատակարարեն մաս-
նաւորաբար խոչակն և անոր մկներն :

12. Ենրալեզուեան ջիղերն լեզուի ստորին մասն և
անոր մկներն կը մատակարարեն :

ՈՂՆԱՅԱՐԱՅԻՆ ԶԻԴՆԵՐ.— Ասմաք ողնուղեղէն կը ճնին
զոյգ առ զոյգ և աջ ու ձախ կ'ընթանան (ՃԵ 40) . ընդա-
մէնը 31 զոյգ են , որք իրենց համապատասխանած ող-
նայարի սկերց բաժանման անուամբ կը կոչուին , և այս-
պէս առաջին 8 զոյգն՝ պարանոցային , յաջորդ 12 զոյգն՝
թիկնային , 5ն՝ միջաց և 6ն՝ սրբանային կ'անուամբն :

Պարանոցային առաջին 4 զոյգն պարանոցն կը մա-
տակարարեն մինչ ցումերն . յաջորդ 4 զոյգերն՝ թիկանց
առաջին ջիղերու հետ ի միասին կը մատակարարեն վե-
րին անդամոց զանազան մասերն :

Թիկանց միւս 11 զոյգ ջիղերն իրանն կը մատակա-
րարեն . միջաց 5 ջիղերն ի միասին կը մանեն ստորին
անդամոց մէջ և կը շարունակուին մինչ ոտից մատներն :

Բ. ԿԱՆԿԱՅԻՆ ԶԻԴՆԵՐԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ

Կծկային ջղային դրութիւնն կը բաղկանայ ջղային
բջիջներէ կազմուած ջղային կծիկներէ՝ որք այս դրու-
թեան կեդրոններն կը ներկայացնեն , և ասոնցմէ մեկ-

նող ջիղերէ՝ որք ջղային խողովակներէ կը բաղկանան :

Ողնայարի սիւնակին աջ ու ձախ կողմերն կարգաւշարուած կան այս ջղային կծիկներէն, ողնուղեղային ջղերու քանակութեամբ՝ որք ջղային ժապաւէններով իրարու կը հաղորդակցին և այսպէս համարիչի մը ձեւն կ'առնեն. այս կերտոնական ջղային կծիկներն ամենուրեք կը գտնուին, բայց ոչ այսպէս շարուած՝ այլ ցիրուցան, որպէս սրտի, թռերու, որկորի, ստոծանւոյ, աղեաց, գեղձերու, միզային փամփուշտի մէջ եալին. երբեմն խիստ փոքր են և միայն մի քանի ջղային բջիջներէ կազմեալ են: Այս կծիկներն ընդհանրապէս իրարու հետ կը հաղորդակցին, բայց կան որք գանկողնայարային ջիղերու հետ եւս կը յարաբերին: Այս ամէն մէկ ջղային կծիկներն բազմաթիւ ջիղերու ծնունդ կուտան՝ որք շատ անգամ իրարու հետ կը բերանակցին, և կը մատակարարեն մննդական գործառնութեանց գործարաններն, արեան խողովակներն, եալին:

Բ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երկու կարգի ջղային դրութեանց գործառնութիւններն մասնաւորապէս քննելէ առաջ՝ նախ ընդհանուր ակնարկ մը նետենք ջղային հիւսուածի և դրութեանց բնախօսական յատկութեանց և պաշտօնի նկատմամբ:

Հիւսուածաբանութիւնն մեզ ծանոյց թէ՝ ջղային հիւսուածն ջղային բջիջներէ և խողովակներէ կը բաղկանայ. կազմախօսութեամբ տեսանք թէ՝ ջղային կեղրոնից մեծ մասն ջղային բջջաց խմբմամբ յառաջ եկած գորշագոյն տարրէ կը բաղկանայ, և որ միայն իրապէս ջղային կեղրոն կը համարուի. իսկ ջիղերն՝ ջղային խողովակաց տրցակներ են: Արդ բնախօսութիւնն մեզ պիտի ուսուցանէ թէ՝ ջղային բջիջներն իրենցմէ մեկնող ջիղերու միջոցաւ թէ՝ կը զգան անոնց մատակարարած

մասանց վրայ տեղի ունեցած ազդեցութիւններն, թէ անոնց մատակարարած մկաններուն կծկում պատճառելով՝ ամէն կարգի շարժումներ և ձայն յառաջ կը բերեն (զի ձայնն ալ ինչպէս պիտի տեսնենք՝ խոչակի և այլ մկանանց կծկման արդիւնքն է): Թող ներուի ուրեմն որպէս զի ըսեմ թէ, ջղային բջիջներն կենդանային մարմույ զանազան մասերու և գործիներու տերերն են և ջիղերն իրենց հրամանաւար ու յրաբեր ծառաներն:

Ջղային բջիջներն երկու տարրեր պաշտօններ կը կատարեն. ազդեցութիւններ զգալ և շարժմանց հրաման տալ. բնախօսք երկու տեսակ ջղային բջիջներ կ'ընդունին, զգայական ու շարժողական. բայց մինչեւ ցարդո՛չ հիւսուածաբանութիւնն և ո՛չ կազմախօսութիւնն յաջողած է ջղային բջջաց միջեւ որևէ տարրերութիւն մը նշմարել: Ջիղերն ալ նմանապէս երկու տարրեր պաշտօններ ունին, կամ ջղային բջջաց կամքն մկանանց կը հաղորդեն և շարժումներ յառաջ բերելով շարժիչ կ'անուանին, կամ զանազան մասանց վրայ տեղի ունեցող ազդեցութիւններն ջղային կեղրոնից կը հաղորդեն և զգայական կը կոչուին. առաջնոց պաշտօնն կեղրոնէ դէպի ի դուրս լինելուն կեղրոնախոյս ալ կ'անուանին, իսկ երկրորդներունն զրսէն դէպի կեղրոնն լինելուն կեղրոնաձիգ անունն ալ ստացած են. թէպէտ կան ջիղեր՝ որք միայն զգայական են՝ այլք միայն չարժիչ և ուրիշներ թէ՝ զգայական և թէ՝ շարժիչ, բայց որպէս տարրեր պաշտօններ ունեցող բջջաց՝ նոյնպէս և ջիղերու միջեւ որևէ հիւսուածաբանական ու կազմախօսական տարրերութիւն չկայ:

Ջղային դրութիւնն կրնանք բաղդատել ելեքտրական գործիքի մը, ջղային բջիջներն իրը ելեքտրականութեան արտադրիչ բարդեր՝ իսկ ջիղերն ելեքտրական հոսանքն տանող և բերող թելեր կը ներկայացնեն.

աւելի մասնաւորելով եւս առաւել յարմար է բաղդատել
հեռագրական բարդերու , յորոց մեկնող թելերն թէ
ելեքտրական հոսանքն կը տանին և թէ կը բերեն , որ-
պէս են ջիղերու մեծ մասն :

Մեր զգայարանաց ջիղերն՝ բոլորն ալ գանկողնաւ յարային ջղային դրութեան կեղրոնէն կը մեկնին և իրենց վրայ եղած աղղեցութիւններն իրենց մեկնած կեղրոնի և անտի ուղեղի կը հաղորդուի, որ կը զգայ և կը դատէ ։ ուղեղն է կրկին որ կամք կը ծնանի և իրեն հաղորդ գանկողնայարային դանազան կեղրոնից միջոցաւ և անտի մեկնող ջիղերու ձեռօք կը հրամայէ շարժմանց ։ կեղրոնի ուրիշ մասերն ալ շարժումներ կը անօրինեն բայց միշտ եղբակացութիւնն ուղեղի կը հաղորդեն :

իսկ գալով կծկային զրութեան, ասոնց զգայական ջիղերու կրած ազդեցութիւններն իրենց կեդրոնից կը հաղորդուին, բայց ոչ մեր ուղեղին, հետեւարար մեղ անձանօթ են. Նոյնպէս և այս կեդրոններն իրենցմէ մեկշնող ջիղերու միջոցաւ անոնց մատակարարած մկանանց կծկումն ու շարժումը կը հրամայեն առանց ուղեղին կամ մեր ծանօթութեան և կամ կամքին. և նոյն իսկ կամաւ չենք կարող անոնց շարժումն արգիլել և որք առ այս կանուանին ակամայ շարժումներ, որպէս որկորի կը կումն, աղեաց գալարումն, սրտի բարախումն, ևայն:

Գանկողնայարային դրութեան կամային եւս կ'ըստ-
ուի՝ մեր կամային շարժումներն անոր միջոցաւ կատար-
ուելուն համար, իսկ կծկայինն բնականարար անկամա-
յին՝ առանց մեր գիտութեան շարժումներու հրաման
տալուն համար։ Առաջինն յարաբերական գործառնու-
թեանց գործարանաց ու դրութեանց հրամայելուն առնե-
չական շղային դրութիւն եւս կ'անուանի, իսկ երկրորդն
աւելի մնդական և ծննդական գործարանաց մասնաւո-
րապէս իշխելուն կենաւական ալ կը կոչուի և վերջապէս

յարաբերական ջղային դրութիւնն իենիդանային իենաց
ջղային դրութիւն անունն ալ առած է, զի այս գործառ-
նութիւնք միայն կենդանեաց յատուկ են, և ընդհակա-
ռակն կծկային դրութիւնն բուսային իենաց ջղային
դրութիւն ալ անուանուած է՝ զի ասոր ազդած գոր-
ծառնութիւններն բոլոսերն ալ ունին:

Ա. ԳԱՆԿՈՂՆԱՅԱՐԱՅԻՆ ՀԵՎԵԻՆ ԴՐՈՒՅԹԻՆ.

Այժմ պիտի ուսանինք գանկողնայարային ջղային դրութեան զանազան մասանց կատարած դերերն մի ըստ միոցէ, և ինչպէս սովորութիւն եղած է դիւրութեան համար՝ մենք ևս պիտի քննենք կազմախօնութեան հակադարձ կարգաւն. ջիղենն, ողնուղեղն, կռաղեցն, վառողի կամուրջն, բառուեակեան գլուխակեւն, ուղեղիկն և ուղեղն:

ՏԵՂ. — ԶԻԳԿՐՈՆ ԵՐԿՈՆ ԿԱՐԳԻ ԿԸ ԲԱԺԿՈՒՔԻ ՊԱՆ-
ԼԱՅԻՆ և ՊԵՂԱՎԱՐԱՅԻՆ:

Գանկային ջիղեր . — Գանկուղեղէն մէկնող 12 զոյգ
Ջիղերէ ոմանք զգայական են , այլք՝ շարժական և վեր-
ջապէս ուրիշներ՝ թէ՛ զգայական և թէ՛ շարժական-
կամ խտն:

Ա. Զգայական ջիղեր — Հոստելեաց, լուղեաց և
Տեսողութեան ջիղերն իրենց մասնաւոր զգայականու-
թեան միայն կը ծառային։ Լեզուակորդային ջիղն
լեզուի յեանակողմն մատակարարող ճիւղն՝ որ լեզուի
վրայ ազգող մարմնոց համը մեղ կը ծանօթացնէ, ճա-
շակելեաց ջիղ Կ'անուանի։

Բ. Ծարժողական ջիղեր.—Վեց զոյք են և ըստ մեր գանկուղեղի հրամանին՝ իրենց մատակարարած մասերու միներն կծկեցնելով՝ շարժումներ յառաջ կը բերեն, առանց որևէ զգայականութեան որք են, 1. Աչաց ընդհանուր շարժիչ ջիղերն, 2. Կրացուցիչ ջիղերն, 3. Աչաց ար-

տափին շարժիչ ջիղերն, 4. Դիմային ջիղերն, 5. Ողնայարային ջիղերն, 6. Ենթազեզուեան ջիղեր:

Դ. Խառն ջիղեր. — Երեք զոյգ են, որք ընդհանուր զգայականութեան և միանգամայն շարժման կը ծառային. որք են, 1. Եռորեակեան ջիղեր. 2. Լեզուակովորդային ջիղեր. 3. Թոփորկորային ջիղեր:

Ողնուղեղային ջիղեր. — Պատեհութիւն ունեցանք կալմախօսութիւնն ուսանելնու՝ ասոնց երկու արմատ ու նենալն ծանուցանել, որոց յառաջնակողմեաններն միայն շարժողական են, յետնակողմեաններն՝ զգայական, իսկ իրար խառնուուելով կազմուած ջիղերն թէ զգայական և թէ շարժողական են, այսինքն ամէնքն ալ խառն են:

Ողնայարային ջիղերն առանց կտրելու՝ եթէ անոնց առաջնակողմեան արմատները գրգռենք, այն ջին մատակարարած անդամներն կը սկսին ձգտիլ, բայց կնդանին որևէ ցաւ չզգար, և եթէ յետնակողմեան արմատն գրգռենք՝ միեւնոյն անդամի մկներն չեն ձգտիր, բայց կենդանին ցաւ կը զգայ. իսկ եթէ ջիղն գրգռենք՝ փորձի ենթարկեալն թէ ցաւ կը զգայ և թէ շարժումներ յառաջ կը բերէ:

ՈՂՆՈՒՂԵՂՆ. — Ողնուղեղն իր սպիտակ տարրով ջիղերու նման իր հաղորդիչ կը գործէ, իսկ գորչագոյն տարրով իր կեզրոն. քննենք այս երկու տարրեր պաշտօններն:

Ողնուղեղի հաղորդիչ յատկութիւնն. — Իրանի և վերին ու ստորին անդամոց վրայ եղած ազդեցութիւններն այդ տեղեաց ջիղերու միջոցաւ իրենց ողնուղեղէն մեկնած տեղն կը համնին, և անտի սպիտակ տարրի ձեռօք՝ որ ջղային խողովակներէ կը բազկանայ, գանկուղեղին և անտի ուղեղին կը հասնի որ միայն կարող է զգալու. և նմանապէս շարժման համար ուղեղի տրամադրած հրամաններն ողնուղեղի սպիտակ տարրին միջոցաւ իրմէն մեկնող ջիղերու կը հաղորդուի, և որք ըստ

այդ հրամանի՝ իրենց մատակարարած մկներն կը կծկեն և շարժումներ կը պատճառեն:

Ողնուղեղի կեդրոնական յատկութիւնն. — Ողնուղեղն շատ անդամ՝ իրեն հաղորդուած զգացումներն առանց նախապէս ուղեղին հաղորդելու և ըստ անոր հրամանին փոխադարձ շարժումներ հրամայելու՝ ինքնին կը անօրինէ զայնս. բայց սա անձանօթ չմնար ուղեղին կամ մեր գիտակցութեան, զի իր արարքներն կը հազորդէ ուղեղին որ կարող է ի հարկին զայնս արգելու: Զոր օրինակ, եթէ ձեռքս կսմթուի կամ ալրի, անմիջապէս կը քաշեմ. այս շարժումն առանց կամքի տեղի կ'ունենայ. այս պարագային մէջ՝ ձեռացս զգայական ջիղերն ողնուղեղիս գորշագոյն տարրի զգայական ջղային բջջաց հաղորդեցին իրողութիւնն որ իրեն դրացի շարժողական բջիշներու միջոցաւ և անտի մեկնող ջիղերու ձեռօք բազկացս մկներն կծկել տուաւ. թէպէտ վերջն այդ աղղեցութիւնն և փոխադարձ շարժումն ուղեղիս կամ իմ գիտակցութեան հաղորդուեցաւ: Այս երեւութներն անդրադարձական երեւոյթներն կ'անուանին:

ՈՂՆԱՅԱՐԻ ԿՈԾՂԵՂՆ ՈՂՆԱՅԱՐԻ Նման կը գործէ թէ իր հաղորդիչ և թէ իր ջղային կեղրոն:

Ողնայարային կոնդեղի հաղորդիչ պատօնն է ջրղերու միջոցաւ ողնուղեղի և իրեն հասած ազդեցութիւններն հաղորդել ուղեղի որ կը զգայ, և ուղեղի հրամաններն ողնուղեղի հաղորդել որպէս զի իրմէն մեկնող ջիղերու միջոցաւ շարժումներ կատարէ. ողնուղեղի և իր կատարած անդրադարձական երեւոյթներն ալ ուղեղին կը հաղորդէ:

Ողնայարային կոնդեղի պատօնն իբր կեդրոն. — Սննդական գործառնութեանց անդրադարձական երեւոյթից կեցրոնն է. արդարեւ ինչպէս կազմախօսութիւնն մեզ ուսոյց, ասկէ ձնունդ կ'առնէ թոքորկորային ջիղն

որ կը հրամայէ շնչառեւտրութեան, արեան վրջանի և մարսողական գործարանաց: Այս ջիղերն 4րդ փորոքի սրածայր գաղթաթէն կը մեկնին զոր Ֆլոռանս՝ արդար իրաւամբ՝ կենաց հանգոյց անուանած է, և որոյ խոցումն անմիջական մահ կրնայ առթել:

Բաց ասոմ՝ կոճղեղէն մեկնող ջիղերն են նաև ծամելու և կղելու հրահանգներ տուողներն: Զայնի և միմուական արտայայտութեանց ջիղերն եւս կօճղեղէն կը ծնանին:

Ա.Ա.Օ.Ն. ԿԱՄՈՒՐՅԱ. — Իբր հաղորդիչ և իբր ջղային կեղրոն կարեւոր պաշտօններ ունի. իբր հաղորդիչ՝ ուղեղի կամային շարժմանց հրամաններն՝ կոճղեղին և անոր միջոցաւ ողնուղեղի. կը հաղորդէ, և փոխադարձաբար այս վերջին մասանց հասած զգայականութիւններն՝ ուղեղին:

Իբր կեղրոն խիստ կարեւոր է. իբր խոցումն կամ զանազան մասերու կտրումն կարկամական շարժումներ, յաջ և յահեալ թաւալումն, միեւնոյն կամ հակառակ կողմի անդամոց ջլատումն կը պատճառէ. այսպէս՝ Վառօղի կամուրջն կամային շարժմանց գրգորիչ մասն կը համարուի:

ՔԱ.Ո.ՐԵ.Ա.Ա. Գ.Ա.Դ.Ա.Կ.Ա. Ա.Յ. մասերէն կը ծնանին տեսողական ջիղերն. ըստ Ֆլոռանսի՝ գնդակներէն միոյն ջնջումն միւս կողմի աչաց կուրութիւն կը պատճառէ և փոխադարձաբար աչաց միոյն բարձումն հակառակ կողմի գնդակներու ծիրութիւն յառաջ կը բերէ: Ա.Յ. կարգի փաստերով զայս տեսողութեան կեղրոն ալ կ'անուաննեն, բայց սա գեռ լաւ հասաւատուած չէ:

ՈՒՂ.Ե.Ր.Ա.Կ. — Ուղեղիկի պաշտօնն դեռ լաւ ձանչցուած չէ. անոր խոցումն և կամ բարձումն կենդանւոյն զգայականութեան, իմաստութեան և կամաց վրայ ուեէ աղեցցութիւն մը չունի, միայն շարժումներն դանդաղ և անկանոն կերպով կը կատարուին. ուղեղային և ուղեղիկային կոթուններու գրգռումն ալ ուղեղիկի նման շարժմանց անկարգութիւն կը պատճառէ. կենդանին կը

յառաջանայ, դէպ յետս կ'ընթանայ, կը գլորի, կը դառնայ, շրջանակաձեւ կ'ողորի կըն. այս պատճառաւ շատ մը բնախօսներ ստիպուած են զայն շարժմանց համակարգիչ անուանել:

ՈՒՂ.Ե.Ր. — Ուղեղին՝ գանկողնայարային դրութեան կեղրոնի ամենակարեւոր մասն է. ոչ միայն զգայականութեանց և կամային շարժմանց բուն կեղրոնն է՝ այլ բանականութեան, յիշողութեան, զաղախարի. ի մի բան սա է Տէրն կենդանային մեքենայի:

Զգայականութիւն. — Ամէն կարգի զգայական աղդեցութիւններն ուղղակի կամ անուղղակի՝ անպատճառ ուղեղին կը հաղորդուին, ուր այդ աղդեցութիւնն կը քննուի, զգացման կը վերածուի և գաղափար մը կը կազմենք:

Կամային շարժում. — Կամային շարժմանց միայն հրամանատարն ուղեղին է, թէպէտ ողնուղեղն, կոճղեղն և այլք անդրադարձական շարժումներ կրնան հրամայել, որպէս ուղեղէ զրկուած կենդանի մը կրնայ քալել, վաղել, ոսանուլ, լողալ և իրեն մարմնոյ մի մասն վնասենուած աղատելու միգեր կ'ընէ, բայց ասոնց և ոչ միոյն վրայ գաղափար մ'ունի ոչ ալ կարող է զայն չափաւորել, արագացնել կամ ի հարլին կասեցնել. զոր օրինակ՝ եթէ քալած ժամանակն առաջքը խորութիւն մը ներկայանայ, կը նայի բայց չկրնար դատել և չէ կարող կանգ առնուլ, զի սա կամքէն կախեալ է և կամքի գործին բացակայ է. ուրեմն առանց ուղեղի՝ շարժումներն անդրադարձական և մեքենական են, ոչ թէ բանական կամկամային:

Գաղափար, լիւղութիւն, բանականութիւն եւ բնազդում. — Կենդանեաց հոգեբանական այս յատկութիւններն ուղեղին կը պարտինք և բնականաբար իր գորշագոյն տարրի՝ որ բուն կեղրոնական մասն է: Ամէն աղդեցութիւններ ուղեղի հաղորդուելով անոր դատողութեամբ՝ այն աղդեցութեամց վրայ գաղափար մը կը

կազմենք որ անդ կ'ամբարի, և ի հարկին երբ կրկին
ամբարեալ գաղափարն երեւան ելնէ՝ զայն յիշողութիւն
կ'անուանենք: Ուղեղն ո՛չ միայն իր վրայ եղած աղղե-
ցութիւններն զգացման և գաղափարի կը վերածէ և
զանոնք կ'ամբարէ ի հարկին ի գործ ածելու համար,
այլ նաեւ կը դատէ, կը խորհի, կը վիճաբանի իր մէջ՝ իր
զգացմած և երեւակայած խնդրոց նկատմամբ և կ'եցրա-
կացնէ: այդ եղակացութիւնն կամ կ'անուանի, զայն
կը գործադրէ շարժումներով (կամային), բանային և մի-
մուսային արտայայտարեամբ: Վերջապէս ուղեղն կենդա-
նային մեքենայի տէրն է, ուրիշ մասերու գործերն իսկ
իրեն կը հաղորդուի և ասոնցմէ ամէն անոնք՝ որք յարա-
բերական կամ կենդանային կենաց կը ծառայեն, իր
կամաց կը հանգանդին, և վերջապէս այս ամէն յատկու-
թիւններն ի միասին բանականութիւն կ'անուանին և երբ
նուազ զարգացմած է՝ թեազդում:

Բ. ԿՄԱԿԱՆ ԶՊԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Գանկողնայարային դրութեան բոլոր արարքներն
միշտ մեզ ծանօթ են, բայց նոյնն չէ կծկային դրութեան
համար. նա ինքնագլուխ կը գործէ, կեղրոնաձիգ ջիղերն
իրենց կեղրոնից կը հաղորդեն իրենց կրած ներգործու-
թիւններն, կեղրոնախոյններն կծկային կեղրոնից հրա-
մաններն հարթ մկանանց ձեռօք կը գործադրեն. այս
ամէնն առանց մեր գիտակցութեան կը կատարուին և
ըստ անդրադասական երեւոյթից, միայն սա տարբե-
րութեամբ որ գանկողնայարային դրութեան անդրադա-
սական արարքներն ուղեղին կը հաղորդուին, բայց
կծկային դրութեանն մեզ գրեթէ անծանօթ կը մնան և
նոյն իսկ կամաւ չենք կարող անոր պատճառած շար-
ժումներն արգիլել:

ԿԵՆՐՈՆ. — Կազմակիոսութիւնն ուսոյց թէ՝ կծկային
կեղրոններն ողնաշարի երկու կողմն շարուած են կամ
սննդական գործարանաց մէջ ցիրուցան սփոռուած, որք
թէպէտ ընդհանրապէս ջղային թելերով իրարու կը հա-
ղորդակցին՝ բայց երբեմն մի քանի հատեր միայն իրա-
րու հետ թելերով կապուած են և միւսներէն անջատ
կը գտնուին. երբեմն նոյն իսկ բոլորովին առանձինն
կծկիններ ալ կան իրենց մասնաւոր ջիղերով:

ԶՊ. — Կծկային կեղրոններէն մեկնող ջիղերէ ոմանք
կեղրոննախոյս են կամ շարժիչ, այլք կասեցուցիչ շարժ-
մանց, ուրիշներ կեղրոննաձիգ, բայց չեմ համարձակիր
ըսել զգայական, զի իրենց զգացումներն իրենց կեղրո-
նին կը հաղորդեն, ու մենք գաղափար մը չենք կրնար
ունենալ. թուենք իրենց պաշտօններն:

ՇԱՐԺՈՒՄԸ. — Սննդական գործարանաց գրեթէ ամէն
շարժումներն այս դրութեան կը պարտինք. թոքորկո-
րայինն շարժմանց իրածւ չափաւորիչ կը ծառայէ. սրտի
կծկումն միայն իր կողից մէջ գտնուած ջղային կծկիննե-
րուն կը պարտինք, նոյնպէս աղեացն՝ իր մէջ սփոռուած
կծկիններուն:

ԶԱՓԱԼՈՐԻՀՔ ՇԱՐԺՄԱՆՑ. — Այս դրութեան մեծ
փորոքային ջղի (splanchnique) աղեաց ճիւղն՝ աւելի
շարժմանց չափաւորիչ է քան թէ շարժիչ:

ԶԱՏՈՒԵՄԱՅԻ ԵՐԵՎՈՂԲՆԵՐՆ անդրադասական օրինաց
համեմատ տեղի կ'ունենան. գեղձի մը կեղրոնաձիգ
ջիղերն այս գործիքի հիւթ արտադրելու պէտքն կամ
գրգռումն կը հաղորդեն իրենց համապատասխանող ջղա-
յին կծկի և որ այլ ջիղերու ձեռօք անոր զատուցումն
կը հրամայէ: Աչաց ծիածանի ընդլայնումն և արեան հե-
րափողկաց ընդլայնումն ու կծկումն ևս այս դրութեան
ջղից կը պարտինք:

ԳԼՈՒԽ Բ.

ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գանկողնայարային դրութեան զգայական ջիղերն՝ զգայարան անուանեալ գործեաց մէջ վերջանալով, արտաքին մարմնոց այդ գործեաց վրայ ըրած ազդեցութիւններն՝ իրենց մեկնած կեղրոնական մասանց կը հաղորդեն, և որք ուղեղի կամ մեր գիտակցութեան կը ներկայացնեն։ Այս երեւոյթն զգայականութիւն կ'անուանի։

Ի հնուց անտի 5 զգայարաններ և նոյնչափ զգայականութիւններ ընդունուած են։ 1. Տեսանելիի՛ որոյ գործիներն, աչերն, մարմնոց լոյսն ընդունելով՝ տեսողական ջղերու միջոցաւ կը ծանօթացնեն մեզ անոնց ձեւն, գոյն, մնձութիւնն, լոյսն, ևյլն։ 2. Լսելիի՛ ականջներն, մարմնոց յառաջ բերած ձայներն հաւաքելով լսողական ջղերու միջոցաւ ուղեղին կը հաղորդեն։ 3. Հոտոնելիի՛ մարմնոց մասնիկներն ասոր գործիքին՝ քթի զգայուն թաղանթի վրայ աղղելով, զայն (թաղանթն) մատակարարող հոտոտելեաց ջիղերն՝ այդ մարմնոց հոտն մեզ կը ծանուցանեն։ 4. Ճաշակելիի՛ որոյ գործին, լեզուն, իր մէջն համոնող ճաշակելեաց ջղի միջոցաւ մարմնոց համն մեզ կը հաղորդէ։ 5. Շօշափելիի՛ որ մեր ամբողջ մորթային դրութիւնն կը ներկայացնէ, ուր համոնող ջղերն, մորթի հաղորդ գտնուող մարմնոց դրութիւնն և անոնց կարծրութեան ու հարթութեան աստիճաններն, ճնշումն, ջերմութեան չափն ևայլն մեր գիտակցութեան կը ներկայացնեն։

Ոմանք կ'ընդունին նաեւ ծանրութեան և չերմութեան զգայականութիւններ։ Վերջապէս այս զգայակա-

նութեանց վրայ պարտինք յաւելուլ նաեւ խումբ մը զգացողութիւններ եւս որպէս նօրութիւն, ծարաւ, մասնաւոր հաճոյիններ ևայլն, որք ոչ սահման ունին և ոչ յատուկ զգայարաններ՝ և որք ընդհանուր զգայականութիւնն անուան տակ կը ճանչուին։

ՏԵՍԱՆԵԼԻՔ


ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Աչքերն ճակատային և այտային ոսկրերէ կաղմուած ակնակապին անուանեալ խորութեանց մէջ զետեղուած գունդեր են, և յառաջոյ՝ աչաց կորերով, ու յետուստ՝ ճարպային խաւով մը պաշտպանուած են։ այս գունդերու իրաքանչիւրն վեց մկներու ձեռօք ամէն կողմ կը շարժի և վերջապէս յետուստ տեսողական ջիղն կ'ընդունի։

Աչաց գունդն . — Աչաց գունդն միջին հաշւով 23-24 հզմ՝ արամագծով գունդ մը կրնանք ենթադրել, որոյ ծանրութիւնն 7 կրամ է։

Աչաց գունդն հեղուկով մը լեցուած է և երեք թաղանթային խաւեր կը պատեն զայն (ձեւ 43)։ Արտաքին խաւն եղջերային պատեան կ'անուանի՝ որ նեարդարջային առածիդ թաղանթ մ'է և որ ուամկարար այժի ձերմկուց կը կողուի, սա աչաց գունդն ամբողջովին կը պատէ, ի բաց առեալ յառաջոյ կողմանէ 11 հզմ՝ արամագծով մի բոլորակ մասէ, ուր եղջերային թափանցիկ թաղանթն կը գտնուի՝ և որ առաջնոյն շարունակութիւնն կը կազմէ։ Այս երկու թափանցիկ և անթափանց եղջերային թաղանթներն միեւնոյն խաւն կը կազ-

մեն, նման մի ժամացոյցի՝ որոյ երեսի կողման կեղրունական մասն ապակի մը կը կրէ և հետեւաբար թափանցիկ է. իսկ մեացեալ մասն անոր շարունակութեամբ մետաղեայ պատեանով մը ծածկուած է, և հետեւաբար



Ձև 43. — Աչաց գունդի ուղղանայեացաբար կտրուածքը
1. եղջերային անբափանց պատեան, 2. սերեկենոյ թաղամբն, 3. զգայուն թաղամբ, 4. լանակ, 5. պատեան ապակային հեղուկ, 6. եղջերային թափանցիկ թաղամբ, 7. ծխածան, 8. ապակային հեղուկ, 9. բիբ, 10. արտաշին սենեակ, 11. արտեւանային մուկն, 12. տեսողական ջիղ

անթափանց : Այս արտաքին պատեանին կը յաջորդէ Սերեկենի անուանեալ մի նուրբ թաղամբ՝ որ միայն եղջերային անթափանցիկ խաւի ներքին կողմն կը պատճ, որոյ ներքին երեսն սեւ բջիջներով պատուած է : Սերեկենոյ յառաջոյ կողմանէ իր վերջաւորութեան շրջանակն՝ երկու թերթեր կը ներկայացնէ, մին եղջերային պատեանի վրայ կը յանդի և արտեւանային մկան անուանեալ մի շրջանակածեւ մկանով կը վերջանայ, իսկ ներքին թերթն որ 70-72ի չափ ծալքեր կ'ընէ, վանա-

կայիին մկան կ'անուանի և վանակն կը շրջապատէ : Սերեկենուոյ կը յաջորդէ ցանցակերպ զգայուն թաղամբն՝ որ տեսողական զղի փթթմամբ կազմուած է : Այս երեք պատեաններու ներքին կողմն հեղուկով մը լեցուած է :


Քննենք այժմ յառաջոյ յեսս զանազան մասերն : Եղջերային թափանցիկ խաւի արդէն ծանուցի որ եղջերային անթափանց խաւի շարունակութիւնն կը կազմէ : ասոր ետեւն աչաց ծխածան անուանեալ բոլորակածեւ թաղամբ՝ մը՝ սերեկենոյ շրջանակային եղրերու միջեւ ձգուած է . այս թաղամբն յետուստ սեւ բջիջներով ծածկուած է և որոյ կեղրոնի շրջանակածեւ ծակն թիբ կը կոչուի : Ծխածանն ունի շրջանակածեւ և շառաւղային մկներ . առաջնոց կծկմամբ բիբի անցքն կը փոքրնայ, իսկ երկրորդից միջոցաւ կ'ընդլայնի . այս ընդլայնմամբ և կծկմամբ լոյսի ճառագայթից մուտքն կը չափաւորի : Ծխածանն խիստ տարբեր գոյներ կ'ունենայ, ըստ որում կ'ըսեն, սեւ, կանաչ, կապոյտ, գորշագոյն ևն . աչեր :

Ծխածանի և եղջերային թափանցիկ թաղամբի մէջ գտնուած 2 զգ/մ հեռաւորութեամբ անջրպեան՝ յառաջակողմեան սենեակ կ'անուանի, ուր 8 կաթիլի չափ հեղուկ մը կը գտնուի որ պարզ ջուր է և լուծեալ ունի իր մէջ մի քանի տեսակ աղեր :

Ծխածանի ետեւն կը գտնուի աչաց ոսպնածեւ վանակն՝ 8-9 զգ/մ թանձրութեամբ, որոյ ետեւի կողմն առջեւի կողմէն աւելի կոր է : Վանակն շրջապատող վանակային մկանանց կծկմամբ՝ վանակի կորութիւնը կ'աւելնայ, իսկ ընդլայնմամբ՝ կը նուազի : Վերջապէս աչաց վանակի յետնակողմեան անջրպեան՝ որ աչաց գունդի $\frac{3}{4}$ մասն կը ներկայացնէ, ապակային հիւր անուանեալ մի մածանող հեղուկով լի է . այս միջոցն ներին սենեակ կ'անուանի :

Աչաց օգնական եւ պատճան մասերն . — Աչաց

օքնական և պաշտպան մասերն են, աչաց շարժիչ մըկ-ներն, կոպերն, յոնքերն և արտեւանային գեղձերն:



Ձև 44. — Աչաց գունդի շարժիչ միներն

1. արտային ուղիղ, 2. վերին ուղիղ մկան (այս մկանն ներկայ պահերին մեջ ծածկած է տեսողական շիղն և վարին ուղիղ մկանն), 3. ներին ուղիղ, 4. մեծ խոտռ մկան մասն, 5. մեծ խոտռ մկան դարձած մասն, 6. փոքր խոտռ, 7. լարային օղակ (որոյ կցուած են աչաց մկներն), 8. տեսողական շիղ, 9. ձախարակ մեծ խոտռ մկան դարձածն, ա. ա. վերին կամ ստրին ուղիղ մկանանց կծկմամբ աչաց գունդի բաւարձան առանցքն, բ. բ. խոտռ մկանանց կծկմամբ աչաց գունդի բաւարձան առանցքն

Աչաց շարժիչ մկներն վեց հատ են, որաց չորսն ուղիղ և երկու քառ խոտռ կ'անուանին (ձեւ 44). ուղիղ մկանաց մի ծայրերն աչաց խորն օղակամեր լարի մը վրայ հաստատուած են, իսկ միւս ծայրերն աչաց գունդի վրայ, միոյն վերին կողմն, միւսին վարն, երրորդինն աջակողմն և չորրորդինն ձախակողմն, որով և կ'ան-

ուանին վերին, սուրին, ներին և արտային ուղիղ միներ։ Մեծ խոտռի մի ծայրն ակնակապիճի խորն հաստատուած է, որ ակնակապիճի վերին կողմէն դէպ յառաջ ընթանալով՝ երբ ակնակապիճի եղբերն համնի, ձախարակի մը մէջէ կ'անցնի և դէպ աչաց գնդակն դառնալով՝ վերին կողմն կը հաստատուի. իսկ փոքր խոտռի մի ծայրն՝ մեծ խոտռի աչաց գունդի վրայ հաստատուած տեղն կցուած է, և միւս ծայրն ակնակապիճի ներքին եղբերն վրայ և որ արտասուական պարկի մօտ կը գտնուի։

Սյս միներն գանկային երեք զոյդ ջիղերէ կը մատակարարուին. 4րդ զոյդի կրացուցիչ ջիղ անուանեալն՝ մեծ խոտռը մուկն կը մատակարարէ. 6րդ զոյդի արտային շարժիչ անուանեալն՝ աչաց արտաքին ուղիղ մկան կը հրամայէ. իսկ 3րդ զոյդի աչաց լնդինանուր շարժիչ կոչուածն՝ բոլոր մնացեալներն կը մատակարարէ, որպէս նաեւ աչաց կոպերն և ծիածանի մկներն :

Աչաց կոպերն երկու կորածեւ վարագոյրներ են, որոց մին վարէն և միւսն վերէն աչքը կը գոցեն. վերինն վարինին կրկին լայնութիւնն ունին: Կոպերը բանալու և գոցելու յատուկ մկներ կան՝ որք աչաց ընդհանուր շարժիչ ջղի միջոցաւ կը գործեն:

Կոպերու եղբերն շարուած մազերն արտեւանուն կ'անուանին: Կոպերու եղբերն թաղուած կան 25-35ի չափ ձարպային գեղձեր՝ (Մհովումեկիւսի գեղձեր), որոց բորբոքմամբ առատորդէն ձարպային գեղին հիւթ մը կը հոսի և արտեւանունքն իրարու կը փակցունէ:

Յոներն. — Աչաց վերին կողմն աղեղի մը վրայ շարուած մազերու խումբերն յոնի կ'անուանին, որք աչքն կը պաշտպանեն քրտինքի, փոշիներու և արեգական ձառագայթից ջերմութիւն դէմ:

Արտասուական գեղձեր. — Աչաց ակնակապիճի խորութեան դէպ վերն և կողմնակի խորչից մէջ զետեղեալ

են արտասուաց ողկուզային գեղձերն (ձեւ 36). ասոնց արտադրութիւնն 6-7 խողովակաց միջոցաւ աչաց գրսի անկեան վերին կողմն կը թափի. ամէն անգամ որ մեր աչքը գոցենք՝ այս արտադրութիւնն մեր աչաց մակերեւոյթն կ'ողողէ, բայց կոպերու եղերաց ճարպային արտադրութիւնն կ'արգելու ասոնց գուրս հեղուլն, և որ կը ստիպուի աչաց ներքին անկեւնն գտնուող երկու ծակերու միջոցաւ՝ արտասուաց փամփուշտին մէջ ամրարիլ, ուսկից և մասնաւոր խողովակներ գայն քթին մէջ կը հոսեցնեն՝ որ քթից հուղաթաղանթի հոյզին հետ խղին կը կազմէ:

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՅՍՅ ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ. — Աչքն՝ մեր զդայարանաց առաջինն և ամենակարեւորն՝ մեղ կը ծանօթացնէ մեր չուրջն պատող իրերն և անոնց ձեւն, գոյնն, մեծուրիւնն, հեռաւորուրիւնն, շարժումն, լոյն և այլն: Որպէս զի մարմին մը կարողանանք տեսնել, ողէտք է որ կամ այդ մարմինն լուսաւոր լինի՝ որպէս արեգակն, ճրագն և այլն, և կամ լուսաւոր մարմինէ մը լուսաւորեալ ըլլայ՝ որպէս լուսինն, մեղ շրջապատող իրերն, որք Արեգակն կամ ճրագէ մը լուսաւորեալ են:


Երբ լուսաւոր և կամ լուսաւորեալ մարմիններէ արձակեալ ճառագայթներն՝ աչաց եղջերային թափանցիկ թաղանթին վրայ աղդեն, ճառագայթից մի մասն կամդրագառնայ, իսկ մնացեալն ներս կը թափանցէ. աչաց ծիածանն՝ դէպ իներս թափանցող ճառագայթից իրը չափաւորիչ մեծ դեր կը կատարէ. եթէ ճառագայթներն առատ են՝ այսինքն մարմինն շատ լուսաւոր է՝ իր շրջանակային մկանաց կծկմամբ աչաց բիրի տրամագիծը կը նեղցնէ, որպէս զի քիչ քանակութեամբ ճառագայթ

ներս մտնէ. իսկ եթէ մարմնոյ լուսոյ ճառագայթներն քիչ են՝ որպէս զիշերն, ծիածանի շառաւղային մկանաց կծկմամբ բիրն կ'ընդլայնի, աւելի մեծ քանակութեամբ ճառագայթը ընդունելու համար: Լուսոյ ճառագայթներն բիրէն ներս թափանցելով և աջակողմեան սենեկի հեղուկէն, վանակէն ու ներքին սենեկի մածուցիկ հիւթէն անցնելով՝ զգայուն թաղանթի վրայ կը հասնին: Այս հեղուկ և կարծր երեք մասերն ոսպնեակներ կը ներկայացնեն, առաջինն՝ կորնթագողաւոր, երկրորդն՝ երկկորնթարդ, իսկ երրորդն՝ գոգակորնթարդ:

Արդ՝ աչաց բիրէն թափանցած ճառագայթներն՝ ըստ լուսաբանական օրինաց, այս երեք ոսպնեակներու մէջէ անցնելով կը բեկերին և կ'երթան նկարել զիտուած մարմինն իր յատկութիւններով ցանցակերպ զգայուն թաղանթին վրայ, բայց բնականաբար աւելի փոքր և յեղաշրջեալ, այսինքն վարի մասն՝ վեր և վերին՝ վար դարձած, որպէս լուսոյ օրէնքն և փորձն կը ցուցնէ (ձեւ 45): Լուսոյ ճառագայթներն զգայուն թաղանթի վրայ իրենց նկարն կամ գերն կատարելէ վերջ՝ սերեկենւոյ թաղանթի սեւ թիջներէն կը ծծուին: Այս նկարեալ պատկերն իր յատկութիւններով տեսողական ջիղերու միջոցաւ մեր ուղեղի գիտակցութեան կը հաղորդուի: Մեր աչաց զգայուն թաղանթի վրայ յեղաշրջեալ պատկերներն ուղեղ կը տեսնենք հաւասնականաբար, զի տեսողական ջիղերն իրենց ընթացից մէջ զիրար խաչած կտրելով՝ վարի մասն՝ վեր և վերին՝ վար կը թափանցեն ուղեղին մէջ:

Պատճանումն Տեսանելեաց. — Քանի որ աչքն ըստ իր կազմութեան լոկ մի ոսպնեակ կրնանք ենթագրել, ըստ լուսաբանական օրինաց՝ տեսանելի մարմիններն ոսպնեակէն մի որոշ հեռաւորութիւն ունենալու են՝ որպէս զի իրենց նկարն տեսանելեաց զգայուն թաղանթին վրայ որոշ կերպով նկարուի. ուստի ուրեմն ինչո՞ւ

ամէն հեռաւորութեամբ մարմիններն կրնանք տեսնել .
զի աչաց վանակն՝ զինքն շրջապատող միներու կծկմամբ
կամ ընդլայնմամբ՝ իր կորութիւնն մարմնոց հեռաւո-
րութեան համեմատ փոխելով , անոնց տեսութիւնն կը
պատշաճի : Ծնորհիւ աչաց վանակի պատշաճման՝ անհուն




Զև 45 . — Դիտուած առարկայի մը աչաց խորն շրջեալ նկարումն


հեռաւորութեամբ մարմիններէն , աստղերէն , մինչ 25
հր/մ հեռաւորութեամբ մարմիններն կրնանք յստակ տես-
նել , բայց անկէց աւելի մօտերն յստակօրէն չենք կարող
տեսնել , զի հաւանականաբար վանակին 25 հր/մէ մօտ
մարմիններն տեսնելու չափ չենք կրնար կորութիւն տալ :
Մարմիններն 25էն 35 հր/մ հեռաւորութեամբ աւելի
յստակ կրնանք տեսնել , զի այս հեռաւորութեամբ աւելի
լոյս կը ատանանք դիտելի մարմինէն , և լաւ տեսողու-
թեան համար՝ որպէս կարդալու , գրելու , նուրբ աշխա-
տութեանց ատեն , այս հեռաւորութիւնն կը գործածուի ,
որ յստակ տեսողութեան հեռաւորութիւն կ'անուանի :

Կարհաւեսութիւն եւ հեռաւեսութիւն . — կամ ան-
ձեր՝ որոց վանակի չափազանց կորնթարթութեան համար՝
իրենց դիտած մարմնոց պատկերներն զգայուն թաղան-
թէն յառաջ կը նկարուին (ձեւ 46) , որով և մարմիններն
մօտէն աւելի կրնան տեսնել . իրենց յստակ տեսողու-
թեան հեռաւորութիւնն 25 հր/մէն նուազ է և որք կար-

դալու համար գրուածքն իրենց աչաց խիստ մօտ ունե-
նալ պարտին . այս կարգի անձերն կարնատես կ'անուա-
նին . սա աւելի երիտասարդաց յատուկ է : Կարճատես-
ներն երկգոգաւոր ապակիէ ակնոցներ գործածելու են՝



Ձև 46. — Կարճատես աչաց երկգո-
գաւոր ապակիէ ակնոցներու ազդե-
նութիւնն



Ձև 47. — Հեռատես աչաց երկակո-
գաւոր ապակիէ ակնոցներու ազդե-
նութիւնն

իրենց աչաց վանակի չափազանց կորութիւնն չափաւո-
րելու համար (ձեւ 46) : Վանակի կորութիւնն տարիքի
աւելնալովն կը չափաւորի :

Ուրիշներու աչաց վանակն ընդհակառակն բաւական
կորնթարդ չըլլալովն և կամ պատշաճնցուցիչ միներն
բաւական զօրաւոր չըլլալովն՝ իրենց դիտած մարմիններն
յայնկոյս զգայուն թաղանթի կը նկարուին (ձեւ 47) , և
որոց յստակ տեսողութեան հեռաւորութիւնն 35 հր/մէն
աւելի է , և որք կարդալու համար գիրքն խիստ հեռու
կը բանեն . ասոնք նեռատես կ'անուանուին : Հեռատեսու-
թիւնն ծերերու յատուկ է . տարիքն աւելնալով վանակի
կորութիւնն կամ անոր վրայ ազդող մկանի զօրութիւնն
կը նուազի , որով և հեռաւեսութիւնն հետզհետէ կ'ա-
ւելնայ . ասոր համար երկակորնթի ապակիէ ակնոցներ
կը գործածեն՝ վանակի անբաւ կորնթարդութիւնն չա-
փաւորելու համար (ձեւ 47) :

ՏԵՍԱՆԵԼԱՑ ՕԳՆԱԿԱՆ ՄԱՍՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՆԱՆՔՆ . — Աչաց
շարժիչ մկներն աչաց գունդն ակնակապիճի մէջ դարձնե-
լու կը ծառայեն , որոց դիրքն կը ցուցնէ արդէն թէ՝

կծկմամբ զայն դէպ ո՞ր կողմ կը դարձնեն։ Զորս ուղիղ մկներն կծկմամբ իրենց կողմը կը քաշեն գնդակն, որով աչքն վեր, վար, աջ և ձախ կը դառնայ։ մեծ խոտորի կծկմամբ աչաց գունդն դէպ ի վար և դուրս կը ձգուի, իսկ փոքր խոտորի կծկմամբ՝ աչաց գնդակն դէպ ի վեր և դուրս կը դառնայ։

Աչաց շարժիչ մկանանց ոմանց կարճութեամբ կամ զօրաւորութեամբ աչաց գունդն այն կողմը կը ձգուի, զոր շիլուրին կ'անուանեն։ Շիլերու աչաց կարծ կամ խիստ զօրաւոր մկներն կտրելով՝ աչքը հաւասարակշռութեան մէջ կը դնեն։

Աչաց կոպերն աչքի մէջ մտնող լուսոյ ճառագայթ-ներն կը չափաւորեն, աչքն արտաքին դիպուածներէ կը պաշտպանեն, քունի ատեն լուսոյ աչաց մէջ մտնելն կ'արգիլեն, ինչպէս նաեւ հողմի և փոշիներու մուտքը։

Կոպերուներքին հուզաթաղանթի հոյզն՝ աչաց արտաքին երեսն խոնաւ կը պահէ և անոր չորնալն կ'արգելու։

Արտեւանունքն կոպերու փակման կը նպաստեն և աչքն արեւանոցի մը պէս կը պաշտպանեն լուսոյ ճառագայթից դէմ։

Յօներն ճակատի քրտանց աչաց մէջ հոսիլն կ'արգելուն և արեգակի ճառագայթից ջերմութիւնն կը չափաւորեն։

Արտասուէը կ'ողողէ աչքն, կը դիւրացնէ կոպերուներքին հուզաթաղանթի իր վրայ ըրած շփումն, փայլ կուտայ աչքին, կ'արգիլէ աչաց մէջ գտնուած հեղուկ-ներու շոգիացումն և եղջերային թաղանթի չորնալն։

Սաստիկ տրտմութեան և ուրախութեան ատեն, արտասուաց գեղձերն գրգռուելով առատօրէն արտասուք կ'արտադրեն և արտասուքն քթին մէջ տանող անցքն զայնս ամբողջովին ընդունելու չբաւականանլով՝ աւելորդ հեղուկն աչքէն դուրս կը հեղու, զոր արտա-

ուել կ'անուանենք։ մինչդեռ արտասուելն շարունակա-կան է և այդ պահուն ծայրայեղութիւն մը կայ։ Ար-տասուած ատեն միշտ քթերնիս ալ կը խնչենք որ ապա-ցոյց մ'է արտասուքի քիթն երթալուն։

Ա Ս Ե Լ Ի Ւ Թ

Կ Ա Զ Մ Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Լսելեաց գործարան՝ ականջն՝ երեք մասերէ կը բաղ-կանայ. արտաքին, միջին և ներքին ականջներ (Ճ. 48)։


Արտաքին ականջն կը բաղկանայ վրանէն և ասոր ու միջին ականջի արտաքին սահմանն կազմող թմբկան թաղանթի միջեւ ձգուած շաելեաց խողովակէն։

Խորանն ամբողջովին նեարդաճառային է և քիչ քանակութեամբ արիւն կը ստանայ. խորանի ձեւն ամէ-նուն ծանօթ է, ասոր վարի մասն գտնուող մկնային կակուղ մասն՝ բլրակ կ'անուանի։

Լսելեաց խողովակն՝ որ խորանի և թմբկաթաղանթի միջեւ կը գտնուի, 20-22 չորս երկարութիւն ունի։ Այս խողովակի խորն պատող մորթն՝ իր թանձրութեան մէջ զիջային անուանեալ քրտնարտադրիչ գեղձերու խումբեր կը պարունակէ, որոց դեղին արտադրութիւնն զիջ կ'ան-ուանի։ Գէջն՝ այս խողովակի մէջն մտնող օդի փոշիներն և օտար մարմիններն իր մէջ առնելով՝ թմբկան թա-ղանթն անոնց վնասուց դէմ կը պաշտպանէ։

Միջին ականջն՝ որ թմբուկ ալ կ'անուանի, արտաքին և միջին ականջներու միջեւ կը գտնուի, և գանկի մօրուարձակաց ոսկեր ապառած անուանեալ կարծր մասի մէջ փորուած անջրպետ մ'է։ Այս անջրպետն իր շուրջն 4 ծակեր ունի, որոց երեքն թաղանթներով փակուած

են, իսկ մինչ բաց։ Այս ծակերէն մին լսելեաց խողովակի շարունակութեամբ կը գտնուի, ուրկէ թմբկան քաղանթով բաժնուած է։ Այս անցքի դիմացն երկու փոքրիկ ծակեր կան, մին ձուածեւ և միւսն կլոր, զորս



Ձև 48. — Լսելեաց զործարանի տեսական պատկերն

ձուածեւ և կլոր պատուհաններ կ'անուանեն. երկուքն ալ թաղանթներով փակուած են. ասոնց ետեւը կը գտնուի ներքին ականջն. և վերջապէս այս անջրպետն՝ վարի կողմէն Եւստաֆեան անուանեալ մի խողովակաւ կը յարաբերի կոկորդի հետ, ուր քմաց վարագոյրի յետնակողմն կը բացուի։ Մի մինային սքանչելի կարգադրութեամբ՝ ամէն կլման երեւոյթ կատարելնուս՝ այս կոկորդային անցքն բացուելով՝ միջին ականջի օդն կը վերանորոգուի։

Չուածեւ պատուհանի և թմբկային թաղանթի միջև ուկրեայ շղթայ մը ձգուած է. այս շղթայն 4 փոքր ուկորներէ կը բաղկանայ, որք իրենց նմանութեամբ կ'անուանին, մուրճ, սալ, ոսկ և ասպատան (ձեւ 48). մուրճի կոթն թմբուկի թաղանթին կեղրոնական խորու-

թեան մէջ զետեղեալ է. իսկ գլուխն սալին վրայ կը հանգչի. սալի ծայրն կը գտնուի ոսպնաձեւ փոքրիկ ուկորն և ապա՝ ասպատանն, որոյ խարիսխն ձուածե պատուհանի վրայ կը յանդի։ Այս ուկորներն նեարդային կապերով իրարու հետ կցուած են։

Ներքին ականջն ալ մօրուարձակաց ուկրի ապառաժ անուանեալ մասի մէջ փորուած է և երեք ուկրային մասերէ կը բաղկանայ, որք ըստ իրենց նմանութեան կ'անուանին բաւիդ, կիսաշրջանակեայ խողովակներ և խոնջայի։

Բաւիդն խոնջայի և կիսաշրջանակեայ խողովակաց միջեւ և ձուածեւ պատուհանի ետեւն կը գտնուի, եօթն ծակեր ունի, որոց հինգովմ կիսաշրջանակեայ խողովակաց հետ կը հաղորդակցի, մէկ հատովմ խոնջայի հետ և միովմ ձուածեւ պատուհանի, որոյ թաղանթովմ միջին ականջէն կը զատուի։

Կիսաշրջանակեայ խողովակներն երեք հատ են, մինչ հորիզոնական, երկուքն՝ ուղղահայեաց որք զիրար ուղիղ անկիւնով մը կը կարեն։ Այս խողովակներն բնականաբար 6 ծայր ունին, որոց ամէն մէկն յատուկ անցքերով բաւիդի հետ կը հաղորդակցի, ի բաց առեալ մինչ որ երկրորդի մը հետ կը միանայ և հետեւաբար ընդամէնն 5 ծակով կը հաղորդակցին, որպէս և ըսմիք։

Խոնջայն՝ որ իր անունը կրող կինդանաւոյն ձեւն ունի, երբեմն երկու և երբեմն $2\frac{1}{2}$ կամ 3 շրջան կ'ընէ. իր կազմն լաւ հասկնալու համար՝ երեւակայէ սուր ծայրն գոց կոնածեւ խողովակ մը՝ որ թաղանթով մը ընդերկարութիւն երկու մասի բաժնուած է, բայց այդ թաղանթն մինչ սուր ծայրն չի հասնիր. ոլորէ այդ կոնածեւ խողովակն իր սուր ծայրն կեղբոն ընելով և կ'ունենա ճշշդ խոնջայն. այս խոնջայի բաց բերանը որ թաղանթով մը երկուքի բաժնուած է՝ ըսմիք, մի կողմն բաւիդի իսկ միւսն կլոր պատուհանի հետ կը յարաբերի, և

քանի որ խոնջայլն բաժնող թաղանթն մինչ ցծայրն չի հասնիր, ուրեմն երկու կողմերն իրենց վարի մասէն իրարու հետ հաղորդակից են:

Խոնջայլի մէջ կան նաև 3-4 հազարի մօտ Քոռթիի գործի տնուանեալ ցցուած մասեր:

Ներքին ականջի այս բոլոր ոսկրային մասերն հետուկով մը լի են. կիսաշրջանակեայ խողովակաց հրեթն՝ կրաքարային փոքրիկ փոշիներ կը պարունակէ:

Լսելեաց ջիղն՝ որ գանկուղեղային ութերորդ զոյգն է, երկու ծիւլի կը բաժնուի, մինչ կիսաշրջանակեայ խողովակներու, իսկ միւսն՝ խոնջայլի մէջ կը թափանցէ և Քոռթիի գործիներն կը մատակարարէ:

Բ Ն Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Զայնն մարմոց շամանդաղաց ճօնման արդիւնքն է՝ որ երկու գլխաւոր պատճառներէ յառաջ կուգայ. բախմամբ և կենդանային արտայայտութեամբ. բացատրենք:

Եթէ մետաղի մը մուրճի հարուած մը տամ՝ այդ մետաղի շամանդաղներն կը սկսին շարժիլ և կը շարժեցընեն իրենց հաղորդ գտնուող օդն: Հովու, ծովուալեաց ձայներն ալ բախման արդիւնք են: Կենդանեաց ձայնն՝ իրենց թոքերէ մղեալ օդի հոսանքի, խռչափողի, կոկորդի, բերնի, լեղուի և շրթանց բախմամբ արտադրեալ ճօնումն է՝ որ բերնէն դուրսի օդի ճօնումն կուտայ: Մարմոց շամանդաղներն ճօնելով՝ իրենց շրջակայ օդին կը հաղորդեն այդ ճօնումը, ուր վէտ առ վէտ կ'ընթանայ՝ նման ջուրի ալեաց որք քարի մը ջրոյ մէջ իյնալէն կը պատճառին և այսպէս մինչ մեր լսելեաց կը համնի:

Շարժուն շամանդաղներ ունեցող, այսինքն ձայն արտադրող մարմոց և մեր լսելեաց միջեւ եթէ այլ մարմին մը չգտնուի՝ բնականաբար այդ ձայնային

ծփանքն չպիտի կրնայ մեղ համնիլ, որոյ համար կ'ըսեն թէ՝ ճայնն դատարկութեան մէջ չընթանար:

Զայնն մէկ երկվայրկեան ժամանակամիջոցին օդի մէջ 340 մէթր, ջուրի մէջ 1435 մէթր, իսկ մետաղաց մէջ աւելի արագ կ'ընթանայ:

Արտաքին ականջի պաշտօնն է խորանի միջոցաւ օդի ճօնումներն հաւաքել, լսելեաց խողովակաւն մինչ թըմրուկի թաղանթին տանիլ և այսպէսով ճօնեցնել թմրուկն:

Այս թաղանթի իւրաքանչիւր թրթռումն իր ետեւը գտնուող մուրճի կոթն հրելով՝ ամրող ոսկրային շղթային շարժում մը կուտայ, և հետեւաբար ճուածեւ պատուհանն պատող թաղանթին կը թրթռացնէ:

Չուածե պատուհանի թաղանթին թրթռմամբ իր ետեւը գտնուող բաւղի հեղուկն կը ակսի ծփալ և հետեւաբար՝ նաեւ խոնջայլի և կիսաշրջանակեան խողովակաց հեղուկներն որոց հետ հաղորդակցութեան մէջ է. այս հեղուկներու մէջ վերջացող լսողական ջղի թելերն՝ այս ծփմամբ կը ծածանին և իրենց այս ծածանման աստիճանն կը հաղորդեն ուղեղին՝ ուր լսողութեան զգացման կը վերածուի:

Ներքին ականջի երկրաշափական այս տարօրինակ մասանց պաշտօններն դեռ ճշդուած չեն. սակայն ընդհանրապէս կը կարծեն թէ կիսաշրջանակեայ խողովակներն ձայնի ուղղութիւնը կը ծանուցանեն, խոնջայլն՝ իր Քոռթիի գործիներու միջոցաւ ձայնի բարձրութիւնն չափելու կը ծառայէ:

Արդ կը տեսնուի որ արտաքին և միջին ականջներու պաշտօնն է միայն՝ արտաքին օդի ճօնումն ներքին ականջի ճուածեւ պատուհանի թաղանթին հաղորդել, իսկ բուն լսելիքն միայն ներքին ականջն է. Եթէ մեր լսելեաց արտաքին և միջին ականջներն խանդարին, կրկին կրնանք լսել՝ թէպէտ անկատար, զոր ականջի

ծանրութիւն կ'անուանեն. իսկ եթէ ներքին ականջն խանգարի, երբեք ձայն չենք կրնար լսել և զոր միայն բուն խղութիւն հարկ է անուանել:

ՀՈՏՈՏԵԼԻՔ

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Քթից վերին մասն ոսկրային, իսկ վարինն աճառային է. ոսկրային մասը կազմուած է քթից երկու կողմերը գանուող յրային անուանեալ երկու ոսկրերէ՝ որք իրարու կցուելով՝ դէպ ի դուրս ցցուած անկիւնն կը կազմին. խորիոսկր անուանեալ մի երրորդ և փոքր ոսկոր՝ այս անկեան գագաթէն քթից խորութիւնն երկու հաւասար խորշերու կը բաժնէ. այս խորշերն դէպ ի վեր կը շարունակուին մինչ գանկի մազակերպ և ճակատային ոսկրերն. Քթից այս երեք ոսկրերն նեարդաճառային հիւռածուածով կը շարունակուին մինչ ցվար և կը կազմին քթից աճառային մասն՝ ուր պինչ անուանեալ մինային եզրով մը կը վերջանան:

Քթից իւրաքանչիւր ոսկրային խորչից մէջ՝ յրից եղջիւր անուանեալ եղջերաձեւ և երեք կարեւոր ծալքեր ներկայացնող ոսկրային թիթեղներ կան (Ձև49). Վերջապէս քթային խորշերու ներքին երեսն շարժթարթենական վերնամաշկային բջջօք ծածկուած հուզաթաղանթով մը պատեալ է, որ կը պատէ քթային եղջիւրներն և կը հետեւի անոնց ամէն ծալքերուն և ոլորմանց:

Քթից հուզաթաղանթն իր թանձրութեան մէջ հոյզ արտադրող շատ մը գեղձեր ունի: Հարբուխն այս թաղանթի բորբոքման արդիւնքն է, որով հոյզն աւելի առատապէս կ'արտադրուի. այս բորբոքումն մինչ քթից


խորն շարունակուելով գլուխի ցաւ և աչաց ջերմութիւն կը պատճառէ, նոյն իսկ արտասուաց արտադրութիւն, զի ինչպէս տեսանք, քթից խորշերն մինչ գանկային ոսկրերու մէջ կը շարունակուին:

Այս հուզաթաղանթի վերին գեղին մասն հոտուելեաց մակերեւոյթ կ'անուանի, զի հուզաթաղանթի այս մասն է հոտերն զգացողը:

Քթից հուզաթաղանթի հոտուելեաց մակերեւոյթներն՝ գանկային առաջին զոյգի հոտուելեաց ջիղերովն կը մատաշուեալ կարարուին, որք անդթեւանոնց միջանեալ կը վերջանան. իսկ հուզաթաղանթի մնացեալ մասն՝ եռորեակեան ջղից մի ճիւղովն կը մատակարարուի:

ԲՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Մարմնոց ամէնափոքրիկ մասնիկներն շարունակ յօդս կը ցնդին. այդ օդն չնչենուա քթից հոտուելեաց մակերեւոյթի հուզաթաղանթն՝ չնորհիւ իր հոյզի՝ չնչեալ օդի փոշիներն հաւաքելով զինքն մատակարարող ջղին միջուցաւ ուղեղին կը հաղորդէ, այդ մարմնոց հոտի յատկութիւնն. եթէ աւելի հոտ առնել ուղենք՝ չնչառութեամբ քթից մէջ մասնող օդի հոսանքն կը սաստկացնենք:



Հոտոսելեաց զգայարանքն ոչ միայն շնչառութեան գործարանի դուռն իրը դռնապան՝ վնասակար օդի շնչառութեան անյարմարութիւնն կը ծանուցանէ, այլ նաեւ բերանի վերի կողմը հաստատուած լինելով՝ ճաշակելեաց միջոցաւ անոնց համին ծանօթանալէ առաջ սննդոց արժէքն կը դատէ, և եթէ վնասակար են, յաճախ զանոնք բերան դնելէ կը զգուշացնէ:

ՃԱՇԱԿԵԼԵԱՑ

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ճաշակելեաց զգայարան՝ լեղուն՝ խռչափողի վերին յառաջակողմեան և կողմնական եղբերն գրկող լեզուային կամ երկանի անուանեալ աղեղաձեւ ոսկրի վրայ (ձեւ 50) հաստատուած մինային գործի մ'է, որ բերանի ծաւալն ամբողջովին կը լեցնէ՝ երբ զայն (բերանն) փակենք:



Ձեւ 50. — Երկանի ոսկեր յառաջոյն կուտանքներն

կուած է որ նշանաւոր է իր ջղային պտուխներին:

1. Լեղուն երեք ջիղեր կ'ընդունի, 1. Գանկային 12րդ գոյգի մի ճիւղն լեղուի ամէն մասերն կը մատակարարէ.

2. Եռորեակեան ջղի մի ճիւղն, որ լեղուային ջիղ կ'անուանի, լեղուի առաջակողմեան $\frac{2}{3}$ մասն կը մատակարարէ, և 3. Կոկորդային ջղի մի ճիւղն՝ որ լեղուի արմատական $\frac{1}{3}$ մասն և երկու կողմերն կը համնի:

ԲՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Հեղուկ մարմիններն ուղղապէս, իսկ կարծրերն բերնի հոյզի միջոցաւ հեղուկի վերածուելով՝ կ'ազդեն լեզուի հուզաթաղանթին վրայ, որ զինքն մատակարարող ճաշակելեաց մասնաւոր զգայութեան ջղի միջոցաւ մեր ուղեղին կամ գիտակցութեան կը հաղորդէ այդ մարմնոյ համի յատկութիւնն:

Երբեմն համի հաղորդակցութեան պաշտօնն բերնի ամբողջ հուզաթաղանթին կը վերագրէին. փորձեր ապացուցին թէ՝ սա միայն լեզուի հուզաթաղանթին յատուկ է. այժմ կը ջանան իսկ ապացուցանել թէ համն լեզուի յետնակողմեան մասն միայն կը զգայ: Ուստի և դիւրին է հետեւցնել թէ կոկորդային ջղի ճիւղին կը պարտինք ճաշակելեաց զգայականութիւնն՝ որ այդ մասն կը մատակարարէ, որով և զայն նաշակելեաց ջիղ կրնանք անուանել: Իսկ լեղուային ջիղն աւելի շօշափելեաց կը ծառայէ, և արդարեւ լեղուի յառաջակողմեան մասն աւելի զգայուն է իրը շօշափելիք: Իսկ ենթալեզուեան ջղի լեղուային ճիւղն միայն շարժական է:

Լեղուն իր ճաշակելեաց և շօշափելեաց յատկութեամբ մարսողական գործարանի դռնապանն է, մարսողութեան անյարմար մարմնոց մուտքն կ'արգելու. Քիթն նոյնն կ'ընէ շնչառութեան օդին համար և շատ անգամ ալ սննդոց արժէքն ճաշակելիքէն առաջ կը ծանուցանէ:

ՏՕՇԱ.ՓԵԼԻ.Ի.Ք

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Շօշափելեաց զգայարանի դործին՝ մորթային դրութիւնն՝ կը պատէ մինային դութիւնը, որոյ հետ ենթամորթեան ճարպային շարակցական խաւով կցուած է, բայց կը շարժի անոր վրայ և դիւրութեամբ կը բաժնուի անկէ:

Մորթն երկու խաւ ունի. մաշկ և վերնամաշկ՝ որք անհարթ մի հուզաթաղանթով բաժնուած են իրարմէ (ձեւ 51). այս խաւի մէջ կը հասնին և կը վերջանան մորթի ջիղերն՝ զոր առ այս զգայական խաւ կ'անուանեն: Հիւսուածաբանութեան մէջ տեսանք մաշկն պատող բազմախաւեան վերնամաշկն (ձեւ 5 և 51):


Վերնամաշկն ալ երկու խաւի կրնանք բաժնել, ստորինն հուզային և վերինն եղջերային, որոյ մակերեւոյթի բջջաց խաւն թերթիկի նման մորթէն բաժնուելով փոշիի ձեւով կը թափի:

Մարդոց որպէս ամէն կարգի կենդանեաց մորթի գոյնն՝ իր վերնամաշկի ստորին կարգի բջջաց մէջ պարունակեալ գունաւորիչ հատիկներու կը պարտինք, որոց քանակն ու գոյնն կը տարբերի ոչ միայն ըստ կենդանեաց տեսակին՝ այլ և միեւնոյն տեսակի զանազան ցեղերու, միեւնոյն անձի մարմնոյ զանազան մասանց և նոյն խակ միեւնոյն մասանց ըստ արեգակնային լուսոյ ենթակայութեան աստիճանին, որպէս ամառ ատեն մեր երեսի մորթի գոյնն աւելի թուլս, խակ ձմեռն աւելի սպիտակ է:

Վերնամաշկի թանձրութիւնն կը տարբերի միեւնոյն անձի մորթի զանազան մասանց համեմատ. ընդհանրապէս չփանան ենթակայ մասերն աւելի հաստ են, որպէս ձեռաց ու սոից բրտութիւններն, երբեմն այս թանձրութիւնն միայն

մամնաւոր կէտերու վրայ է, որպէս ոտից կանկրուկներն ։ Կոծիծներն մորթի զգայուն խաւի առատ մննդեան հետեւանք ցցուածքներ են:

Մորթի վրայ պալարեցուցիչ մը դնելով մաշկն կը դրգուի և վերնամաշկն անտի անջատուելով զգայուն խաւն կը բացուի:



Ձև 51. — Մաշկի մը կտրուածքն (20 անգամ մեծաց) եւ եղշերային խաւ, հ. հ. հուզային խաւ, մ. մաշկ, ն. ն. եկրամորթեան խաւ որ անրպային զանգուածներ կը պատռնալիք, ք. ք. լրտային գեղաեր, լս. լս. լրտարորիչ խողովակի, թ. թ. ասոնց բերաններն

Մազ. — Մարդոց և համայն ստնաւորաց մարմինը պատող մազերն վերնամաշկային արտադրութիւններ են. զգայուն թազանթէն ծնունդ առած այս բջիջներն՝ փոխանակ տափակնալու կ'երկարին, իրարու կը փակին և կը

կաղմեն մազ անուանեալ այս երկար գլաններն որք խոտոր կերպով ցցուած են մորթին մէջ, անոր բոլոր մակերեւոյթն կը պատեն՝ ի բաց առեալ ափերու կեղրոնն և ոտից տակն:

Մազերն արմատէն կ'աճին և իրենց ծայրերէն կը մաշին: Ընդհանրապէս մեր մազերու մաշումն անման հաւասար լինելով չեն երկարիր, ի բաց առեալ մասնաւոր կեղրոններ, ուր աճումն մաշումէն աւելի լինելով կ'երկարին, որպէս գլխի, պեսի, մորուսի ու անութի մազերն:

Մազերու տրամագիծն տիոց հետ կ'աւելնայ: Մազերն պարբերաբար կը թափին, բայց իշնալէն առաջ նոր մը անոր տակէն կը սկսի ծնունդ առնուլ:

Մազերու արմատի և մորթի միջեւ ձգեալ միներ կան (ձեւ 35) որոց կծկուելովն մազերը կը ցցուին. այս միներն այլ կենդանեաց համար աւելի զօրաւոր են քան մարդոցն:

Եղունգ. — Եղունգներն ալ մազերու նման վերնամաշկային արտադրութիւններ են՝ որոց բջիջներն երկար և տափակ են: Մազերու նման մի կողմանէ կը բուսնին և միւս կողմանէ կը մաշին, բայց միշտ աճումն մաշումէն աւելի է, ուրեմն եթէ երբէք չի կտրենք՝ կ'երկարին:

Եղջիւներն ալ վերնամաշկային արտադրութիւններ են:

Սորի նարաւ սյին զեղձեր. — Զատուցմանց առթիւ ծանօթացուցինք ճարպային գեղձներն, երկու հատ իւրաքանչիւր մազի համար (ձեւ 35), որոց արտադրած ճարպային հեղուկն նպատակ ունի զայնս կակուղ պահել և կոտորին արգելուլ. իրենց այս արտադրած իւղն մորթի ամբողջ մակերեւոյթն կ'օծէ և անոր անթափանց կութիւնն կ'աւելցնէ:

Քրտնարտադրիչ զեղձեր. — Արդէն ծանօթ է ձեզ ասոնց կազմն, ձեւն ու կանոնաւոր շարքն (ձեւ 33 և 34):

Սորբային զիդեր. — Ողնայարային բոլոր ջիղերն կուգան վերջանալ մաշկի և վերնամաշկի միջեւ՝ ուր հուզաթաղանթն զգայուն խաւի մը կը վերածեն:

Մորի անթափանցկուրիւնն. — Մորթն անթափանց է և իր այս յատկութիւնն իր վերնամաշկային խաւի և արտադրած ճարպի կը պարտի, որ զինքն օծելով անթափանցկութիւնն կ'աւելցնէ:

Բժիշկներն մորթին վրայէ դեղ մը տալու համար՝ կամ այն դեղն ճարպի հետ խառնելով անդ կը քսեն, որ անոր թափանցումն կարելի կ'ընէ, և կամ այս մասին վրայ պալարեցուցիչ մը դնելով վերնամաշկն կ'անջատեն, որով դեղն այն տեղէն կրնայ թափանցիլ: Այժմ շատ անգամ նախապատիւ կը համարին դեղն ջուրի մէջ լուծելով մորթին տակն ներարկել:

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մեր մարմինն պատող մորթային դրութիւնն իրը շօչափելեաց զգայարանի գործի՝ չնորհիւ իր հուզային կամ զգայուն խաւի, մեզ կը ծանուցանէ իրեն հաղորդ գտնուող մարմնոց գոյութիւնն, անսոնց հարթութեան և կարծրութեան աստիճաններն, մեր մորթի վրայ ճնշման ու միաման ազդեցութիւններն՝ որ ցաւի զգացմամբ մեզ կը ծանուցուին. այս ամէն ծանօթութիւններն՝ մարմնոց մորթի վրայ աւելի կամ նուազ ճնշման հետեւութիւններն համարելով ի մի կրնանք վերածել:

Շատերը շօչափելեաց կը վերագրեն նաև մարմնոց ջերմութեան ու ծանրութեան յատկութեանց ծանօթութիւններն, բայց այլք զանոնք աւելի մասնաւոր զգայարաններ կը համարին:

Ծուրթերն, բերնի ներքին մակերեւոյթն, լեզուն և քթից խորշերն պատող հուզաթաղանթն եւս շօչափելեաց կը ծառայեն:

Ընդհանուր անուանեալ զգայականութեանց վրայ արդէն գաղափար մը տուինք:

ԳԼՈՒԽ Գ.

ՇԱՐԺՈՒՄ

Կենդանային շարժումներն կը կատարուին ուղարյահն և մկնային դրութեանց միջոցաւ։ Մենք նախ պիտի ուսանինք ոսկրային դրութիւնն ու անոր յօդուածներն և ապա մկնային դրութեան վրայ ակնարկ մը նետելով պիտի քննենք շարժմանց արտադրութիւնն։

Ա. ՈՍԿՐԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Ոսկրային դրութիւնն կամ կմախքը (ձեւ 52) որ մեր մարմոյ կաղապարը կը ներկայացնէ, երեք մասի կը բաժնուի. զյուխ, իրան և անդամներ։

Գլուխ. — Գլուխն երկու մասերէ կը բաղկանայ. գանձ և երես։ Գանձն գլմի վերին և յետնակողմեան մասերը դրաւող ոսկրային ձուածեւ տուփի մ'է որոյ մէջ զետեղուած է գանկուղեղն։

Գանկային տուփն 8 ոսկրերէ կազմեալ է։


1. Ճակատոսկը գանկի յառաջակողմեան վերին կողմը կը գտնուի։

2-3. Կողմնական ոսկրերն՝ գանկի գագաթն և կողմնական վերին մասերը կը կազմեն։

4-5. Մօրուարձակայինք գանկի կողմնական մասերն կը ներկայացնեն։

6. Ծոծրոսկը գանկի յետնակողմեան ստորին կողմը կը գտնուի։ Այս ոսկրի ստորին կողմն դանուող ճակէն ողնուղեղն գանկի մէջ կը թափանցէ։

7. Սեպոսկը եւ 8 մաղոսկը գանկային տուփի



Ձեւ 52. — Մօրուարձակային տուփ

յատակը կը կազմեն : Գանկի այս 8 ոսկրերն երգեք չչարժելու պայմանաւ յօդուած են :

Երեսն՝ որ գլխի յառաջակողմեան մասը դրաւած է , 14 ոսկրերէ կը բազկանայ , որք են .

1-2. Վերին ծնօթի ոսկրերն , որք առջեւի կողմէ միմեանց միացած են և վերին ծնօտն կը կազմեն :

3. Սուրին ծնօթի ոսկրն առանձինն ստորին ծնօտն կը կազմէ , կիսաշրջանակաձեւ է , որոյ երկու ծայրերն վեր դառնալով մօրուարձակաց ոսկրերու մէջ փորուած խորութեանց մէջ կը դեսեղուին , որոնցմէ կախուած կը շարժի ուղղահայեացարար վերի ծնօտից մերձենալով կամ հեռանալով . իր այս շարժմամբ կը կատարէ ծամելու երեւոյթն : Վերին և ստորին ծնօտից , եզրերը շարուած ատամներն՝ թէպէտ ոսկրանման են , բայց կմախքի ոսկրերու հետ որ և է յօդում չունենալով՝ ոսկրային դրութեան մաս չեն համարուիր :

4-5. Ալտալին ոսկրերն , բերնի իւրաքանչիւր կողմերը կը կազմեն :

6-7. Քմային ոսկրերն , քիմքն կամ բերնի ձեղունն կը կազմեն :

Այս 7 ոսկրերէ կազմուած է բերանի կմախքն :

8-9. Քրոսկրերն , քթի երկու կողմերն կը կազմեն և որք աճառային շարունակութեամբ մինչ քթից պնչերն կը շարունակուին :

10. Խոփոսկրերն , քթոսկերց կազմած՝ քթից անկիւնն երկու հաւասար խորշերու կը բաժնէ . այս ոսկրային միջնորմն աճառային մասով կը շարունակուի մինչ պինչերն :

11-12. Քիի եղջիւրներ , որք քթից խորշերու մէջ զետեղեալ եղջերածեւ և երեք կարեւոր ծալքեր ներկայացնող ոսկրային թիթեղներ են :

13-14. Արտասուալին ոսկրերն , խիստ փոքր են , ակնակապիճն քթէն կը զատեն :

Ճակատի վերին ծնօտեաց և այսային ոսկրերն՝ ակնակապիճի շրջանակն կը կազմեն . արտասուալին ոսկրերն ասոր շրջապատը կ'ամբողջացնեն . մաղակերպ և սեպաձեւ ոսկրերն ակնակապիճներու յատակն կը կազմեն :

Երեսաց 14 ոսկրերէն 13ը չչարժելու պայմանաւ իրարու հետ կցուած են , իսկ մին , ստորին ծնօտի ոսկրն , միայն կը շարժի :

Երկնիդ անուանեալ աղեղաձեւ ոսկրն , որ խոչափողի վերին եղրը կը գրկէ և որոյ վրայ հաստատուած է լեզուն , աղատ ոսկր մ'է , կմախքային ոսկրերու հետ չյարաբերիր , հետեւաբար և ոսկրային դրութեան մաս չէ : Միջին ականջի ոսկրային շղթայի 4 ոսկրերն եւս կմախքային չեն :

Իրաւ . — Իրանն կը բաղկանայ ողնայարի սիւնակէն և շանչաց վանդակէն :

Ողնայարի սիւնակն՝ իրանի յետնակողմեան միջին մասն կը կազմէ . այս սիւնակի վերին ծայրը կը գտնուի գլուխն և վերին ու ստորին կողմնական մասերէն կը մեկնին վերին ու ստորին անդամներն :


Այս սիւնակն ուղիղ չէ . թիկանց մասն դէպ դուրս կորած է , միջաց կողմն դէպ ի ներս , սրբանային մասն կրկն դուրս և տտնայինն դէպ ի ներս (ձեւ 53) :

Ողնայարն , ողնոսկը անուանեալ օղակաձեւ 33 փոքրիկ ոսկրներէ բաղկացեալ է , որոյ 7 վերիններն պարանցային , յաջորդ 12ն թիկնային , 5ն միջնային , 5ն սրբանային և 4ն ստեղային կ'անուանին :

Ողնոսկրերու ընդհանուր ձեւն ծակ գլան մ'է , մերթ բարձր և մերթ տափարակ , ունենալով մի յետնակողմեան և երկու կողմնական եղուածներ . այս օղակներն իրարու վրայ շարուելով գլանային ներքին պարապութիւն մը կը կազմեն , ուր զետեղուած է ողնուղեղն , սրբանային և տտնային ողնոսկրերն կեդրոնական ծակ չունենալով՝ ողնուղեղն անոնց մէջ չչարունակուիր :

Լիսեռներն նեարդաճառային հիւսուածով մը իրարու հետ յօդուած են:

Լանջաց վանդակն՝ ի յետուստ ողնայարի սիւնակի թիկնային մասէն և սորա աջէն ու ձախէն մելնող և ազեղաձեւ դէպ յառաջ բոլորով 12 զոյգ կողերէ, և յառաջոյ՝ աճառաց միջոցաւ ասոնց կից գանուող կրծուկրէ



Զւ 53. — Ա. ողնայար պ. պարանոցային, թ. թիկնային, մ. միջային, ս. սրբանային, ռ. տննային, թ. կողմանական մասերն Բ. ովոսկր մը կ. կողմանական եղուսէ, յ. յետնակողմանակ եղուս

բերէ կազմուած է. անրակ և ուսուկր: Անրակն լանջաց վանդակի վերին կողմը կրծուկրի և բազկի միջեւ ձբդուած գլանաձեւ ուկր մ'է:

Բազուկ. — Բազուկն բազկուկր անուանեալ գլանաձեւ ուկրէ մը կազմուած է:

Ծղի. — Ծղին իրարու գրեթէ զուգահեռական եր-

կազմեալ՝ հատեալ կոնի ձեւոք ուկրային վանդակ մ'է (ձեւ 24):
Կողերն, թիկնային ողնոս կրերու և կողմանական եղուստաներու կցուած են. այս 12 զոյգերու 7 վերիններն ուղղապէս և աճառաց միջոցաւ կուգան կցուիլ կրծուկրի վրայ և կ'անուանին կրծուկրային կողեր, իսկ միւս 5 զոյգերն կը կոչուին անկրծուկրային կողեր:

Կրծուկրն տափարակ ուկր մ'է (ձեւ 24):

ԱՆԴԱՄՆԵՐ. — Երկու զոյգ անդամներ ունինք. վերին և սուրին:

Վերին անդամներն կազմող մասերն են ուն, բազուկն, ծղին և ձեռին:

Ուն. — Ունն երկու ուկ-

րերէ կազմուած է. անրակ և ուսուկր: Անրակն լանջաց վանդակի վերին կողմը կրծուկրի և բազկի միջեւ ձբդուած գլանաձեւ ուկր մ'է:

Բազուկ. — Բազուկն բազկուկր անուանեալ գլա-

նաձեւ ուկրէ մը կազմուած է:

կու ուկրերէ կը բազկանայ. ծղուկրն՝ ներքին կողմն և մամանշուկրն՝ արտաքին կողմն. այս վերջինն առաջնոյն շուրջը կը դառնայ:

Զեռք. — Զեռքն երեք մասերէ կը բազկանայ՝ դասակ, ափ և մատեր:

Դասակն ծղիի սատրին ծայրն՝ ընդ լայնութեան երկու կարգի վրայ շարուած 7 ուկրերէ կազմուած է:

Ափն՝ 5 երկար ուկրերէ կը բազկանայ, որոց վերին ծայրերն դաստակի ուկերաց կը յօդուին, իսկ իւրաքանչիւրին վարի ծայրն մատի մը կը համապատասխանէ. այս ուկրերու 4ն գրեթէ անշարժ են, իսկ 5-ն՝ որ բթամատին կը համապատասխանէ, միւսներէն զատուած է և ազատապէս կը շարժի:

Մատերն՝ 3 փոքրիկ ուկրերէ կը բազկանան. վերինն կոճ, միջինն կոճակ և ծայրինն կոճակիկ անուանեալ: Բթամատն կոճակ չունի:

Սուրին անդամներն կազմող մասերն են. ազր, բարձ, սրունք և ոսք:

Ազր. — Ազրին երեք տափարակ և կոր ուկրերէ կը բազկանայ, որք մանկութեան ատեն իրարու հետ յօդուած են և դիւրաւ կը դատուին, սակայն ապա իրարու կը միանան: Աջակողմեան և ձախակողմեան ազդրերն իրարու հետ միանալով կոնին կը կազմեն,

Բարձ. — Բարձքն՝ բազկուկր նման՝ բարձուկր անուանեալ ուկրէ մը կազմուած է:

Սուրին. — Սուրինքն երկու ուկրերէ կը բազկանայ. խոչակ և ողոք: Խոչակն և բարձուկրն առջեւի կողմէն իրարու կապող լարի թանձրութեան մէջ կը կազմուի ծնկուկր անուանեալ մի գնդաձեւ ուկր՝ որոյ նպատակն է սրունքի բարձից վրայ դարձն արգելոււ:

Ոսք. — Ոտքն եւս երեք մասերէ կը բազկանայ. ուղն, կարք և մատեր:

Ուշի՝ երկու կարգի վրայ շարուած 7 ոսկրերէ կը
բաղկանայ:

Կարբն՝ 5 երկար և անշարժ ոսկրերէ կը բաղկանայ,
իրարու գրեթէ զուգահեռական, որոց ամէն մէկն ոտից
մէն մի մատերուն կը համապատասխանեն:

Մատերու ամէն մէկն երեքական ոսկրերէ կաղմուած
է, ի բաց առեալ բթամատն՝ որ 2 հատ ունի. ասոնց
ոսկրերն ձեռաց մատերու նման կրնանք անուանել:

Բ. ՅՕԴՈՒԱԾՔ ՈՍԿԵՐԱՑ

Ոսկրերու յօդուածներն երբեմն անշարժ են, որպէս
գանկի ոսկրերն, որոց աստամնային եղրերն իրարու մէջ
անցնելով կը կցուին և միայն իրենց յօդման տեղին գծեր
կը տեսնուին: Բայց ընդհանրապէս իրարու վրայ փոքր
ինչ կը շարժին. ասոնց իրարու կից մակերեւոյթներն
մերթ տափարակ են, մերթ մին գոգեալ և միւսն զբն-
դաձեւ՝ իրարու մէջ անցնելու համար. շարժման ենթա-
կայ յօդեալ ոսկրերու երկու ծայրերն աճառային խաւ-
մը կայ, ասոնց իրարու վրայ ունեցած մաշումն նոււ-
զեցնելու համար մէջտեղն փամփուշտ մ'ունին, որ սինո-
վական անուանեալ մածուցիկ և սահեցուցիչ հեղուկ մը
կ'արտադրէ, որ նպատակ ունի շարժումներն դիւրացնել,
որպէս իւղն մեքենայից համար: Շարժական յօդուած-
ներն ունին նաեւ կողմնական կամ միջին նեարդային
յօդակապեր՝ որք յօդեալ ոսկրերն իրարու կը կապեն և
վերջապէս մկաններով կցուած են իրարու հետ, որոց
կծկմամբ իրարու վրայ կը ծալլուին կամ կը շարժին:

Շարժուն յօդուածներն իրենց շարժմանց համեմատ
երեք կարգի կը բացնուին.

1. Յօդուածներ՝ որոց շարժումն յօդեալ մի ոսկեր՝

միւսին վրայ սահելուն մէջ կը կայանայ. որպէս դաս-
տակի, ունի, ողնայարի ոսկրերու իրարու միջեւ ունե-
ցած յօդուածներն:

2. Յօդուածներ՝ որք անկիւնային շարժումներ յառաջ
կը բերեն. որպէս ծղոսկեր՝ բազկոսկեր հետ, որն քսակեր՝
բարձոսկերի հետ և մատից ոսկրերու՝ իրարու և ափոսկ-
երու ու կարթոսկերու հետ կաղմած յօդուածներն:

3. Յօդուածներ՝ զորս կաղմող ոոկերաց մին միւսին
վրայ շրջանակածեւ շարժումներ յառաջ կը բերէ, որպէս
գլմի՝ ողնայարի հետ, բազկոսկեր՝ ուսոսկերի հետ, բարձ-
ոսկեր՝ ազդրոսկեր հետ կաղմած յօդուածներն:

Գ. ՄԿԱՆԱՅԻՆ ԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՌԺՈՒՄ


Ոսկրային դրութիւնն պատող մկանային խաւն մկա-
նային դրութիւն կ'անուանի:

Մկաններն ընդհանուր առմամբ կրնանք ենթադրել
իրը մկանային չուաններ՝ որոց երկու ծայրերն ընդհանրա-
պէս հաստատուած են կմախքի տարբեր ոսկրերու վրայ.
Երբեմն մի ծայրն ոսկրի՝ իսկ միւսն մորթի տակ և երբեմն
ալ մին մեծ մկան մը և միւսն մորթի տակ հաստատուած են:

Մկանանց երկու ծայրերն շար անուանեալ նեար-
դային կապերու միջոցաւ հաստատուած են:

Մկանային դրութիւնն կաղմող մկանանց թիւն 400էն
աւելի է (ձեւ 54), ասոնց մանրամասն նկարագիրն
դժուար և ուսումն գրեթէ անօգուտ է մեզ համար.
ուստի և աստ մկանանց բնախօսական հանգամանաց
նկատմամբ ընդհանուր ակնարկ մը նետելով, պիտի ծա-
նուցաննեանք անոնց ոսկրային և մորթային դրութեանց
շարժումներն յառաջ բերելու ընդհանուր եղանակն:

Մկանանց կծկումը. — Մկաններն զիրենք մատակա-



Ձև 54. — Մկանային դրութեան յառաջոյ տեսքը

բարող շարժիչ ջիղերու ազդեցութեամբ կը կծկուին . այսինքն կը կարձնան և կը թանձրանան , առանց իրենց ծաւալն փոխելու . ապա այդ ազդեցութեան դադար-մամբ կրկին կը թուլնան և իրենց նախորդ վիճակն կը ստանան :


Մկանանց կծկմամբ իրենց ծայրերու մասերն իրարու կը մօտենան , ուստի յառաջ կուգայ շարժումն :

Եթէ մկանը մատակարարող ջիղն կտրենք՝ այդ ջիղն կեղրոնական մասի մը հրամանը կամ ջղային հոսանքը չընդունելով՝ կենդանին չէ կարող այդ մկանի կծկումն յառաջ բերել . որով կը հաստատուի թէ՝ միայն ջղային դրութեան ազդեցութեամբ տեղի կ'ունենան մկանանց կծկումներն : Մկաներն ելեքտրական հոսանքի ազդեցու-թեամբ ալ կը կծկուին . որոյ համար ուղած են ջղային հոսանքն ելեքտրական համարիլ :

Մկանանց ջիղերն . — Մեր , կամաւ կծկուող խաւա-յին մկներն՝ որք մկնային դրութեան մեծամասնութիւնն կը կազմեն , գանկողնայարային ջղային դրութեան ջղե-րով կը մատակարարուին , իսկ առանց մեր կամաց կը-կուող հարթ մկներն՝ որք սննդական գործարանաց մկներն կը կազմեն , կծկային ջղային դրութեան ջղերօք կը մատակարարուին . ասոնցմէ ոմանք գանկողնայարային ջղերու ճիւղեր ալ կը ստանան՝ որոց միջոցաւ կամային իշխանութիւնն կրնայ անոնց շարժումն դադրեցնել փոքր ժամանակ մը , ինչպէս թոքերու համար :

Մկանանց կծկման շարժման վերածումն . — Մկա-ներն ջղային դրութեան ազդեցութեամբ կծկուելով կը կը կարձնան , որով իրենց երկու ծայրերն իրարու կը մերձենան կամ դիւրաշարժն նուռազ շարժունին կը մեր-ձենայ . աւասիկ ասկէ կը ճնանի շարժումն : Եթէ ապա այդ կծկող մկանը մատակարարող ջղային հոսանքն դա-դարի՝ բնականարար կծկումն չչարունտկուիր , մկանը կը

թուլնայ, իր նախորդ վիճակն կ'առնու և իր ծայրը գտնուող մասերն՝ առաջնոյն հակառակ կերպով շարժումն յառաջ բերող մկանանց միջոցաւ իրենց նախորդ դիրքն կը ստանան. բացատրենք՝ (ձեւ 55): Եթէ ծղիս բազկիս վրայ ծալել ուղեմ (փոյթ չէ թէ ձեռաց վրայ ծանրութիւն մը գտնուի թէ ոչ), ուղեղիս մէջ ծնունդ առած այս գաղափարս իրագործելու համար՝ ջղերու միջոցաւ



Ձև 55. — Եղւոյ բազկի վրայ շարժումն — տիպար յօդուածային շարժմանց

1. բազկուկր, 2. ծղուկր եւ ճամանչուկր, 3. ծղին խոնարհեցնող մկան՝ որոյ մի ծայրն լարով մը ծղուկեր՝ (4) իսկ միւսն բազկուկր (5) վերին կողմն հասատուած է, 6. ծղւոյ տարածիչ մկան, առոր ծղւոյ հետ միուրիւնն (7), 8. ձեռին վերցուելու ծանրուրիւն մը, 9. 10. 11. խոնարհեցոյիչ մկանի (3) կծկմամբ ծղւոյ առնելիի դիրքերն

ծղւոյ և բազկուկրի ուկրերն ներքին կողմէն իրարու կապող մկանի կծկումն կը պատճառի, որ կը կարձնայ՝ ծղիս բազկիս կը մերձնայ և հետզհետէ 8, 9, 10, 11 ևայլն դիրքերն կ'առնէ:

Երբ այս ծալիչ մկանը թուլնայ և բողուկն ու ծղին ետեւի կողմէն իրարու կապող մկանը կծկուի, բնականաբար ծղին ու ձեռքն իրենց նախկին դիրքն կ'առնեն: Այս օրինակի առաջին մկանն խոնարհեցուցիչ, իսկ երկ-

բորդն տարածիչ կ'անոււանին. աւասիկ այսպէս տեղի կ'ունենան մարմնոյ ամէն կարգի յօդուածային շարժումներն :

Այս մկաններն՝ որք ուկրի մը և մորթի, կամ մկան մը և մորթի միջեւ կը գտնուին, բնականաբար կծկմամբ մորթն դէպ ուկրն և մկանն պիտի քաշեն. իսկ ուրիշներ՝ որք երբեք ո՛չ մկնային և ոչ ուկրային դրութեամն հետ առնչութիւն ունին, ինչպէս սրտի, թոքերու, որկորի, աղեաց խողովակաց և վերջապէս ամէն մննդական գործարանաց մկաններն՝ իրենց կծկմամբն՝ իրենց կազմած գործիքի կամ գործարանի տրամագիծն կը փոքրնայ, և ապա միեւնոյն մկանանց թուլութեամբ իրենց նախորդ դիրքն կ'առնուն:


Կծկակ յն ուժ եւ յոգնութիւն մկանանց. — Սնուցման երեւոյթից քննութեան առթիւ առ այս ըսածնիս բաւ կը համարինք:

ԳԼՈՒԽ Դ.

ԶԱՅՆ

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Չայնի գործարանն խոչափողն կամ խոչակն որ չնչառեւտրական խողովակի գործի է միանդամայն, փողի յառաջակողմի կը գտնուի և երկինի ոսկրէն կախուած



Հետո 56. — Խոչակի
աճառային օղակի
կողմանակի տեսքն

Հետո 57. — Խոչակի հաստարարամին հաստածի յետուստ տեսքն
մ. մակարաղանք, վ. վերին ձայնային նեարդի հատածն, ս. ստրին
ձայնային նեարդի հատածն իր մկներովն, (մ') փ. փորով

աճառային խողովակ մ'է (ձեւ 25), որոյ սահմաններն են. վերէն՝ կողորդն և երկճիղ ոսկրն, վարէն՝ չնչա-
փողն որ իր շարունակութիւնը կը կազմէ, ետևէն՝ ստուգն և առջեւէն՝ փողի շրջապատի մաշկն:

Խոչակի երկարութիւնն է 4,5 հրմ. և լայնութիւնն 4 հրմ., իգական սեռի խոչակն բաղդատաբար միշտ աւելի փոքր է:

Խոչակն՝ երկու աճառային օղակներէ կազմուած է (ձեւ 56) որոց մին վահան կ'անուանի իր նմանութեամբ որ խոչակի յառաջակողմն կը կազմէ և դէպ ի դուրս խոտում կոչուած ցցուածք մ'ունի. ասոր վերին եզրի յառաջոյ և կողմանակի մասերն երկճիղ ոսկրով գրկուած են: Խըռ-
չակի երկրորդ աճառան որ օղակ կ'անուանի, մատանիի ձեւն ունի, որոյ ճակատն կամ լայն մասն ետ դարձած է:

Խոչակի ներքին կողմանակի կողերէն դէպ ի ներքս չորս ցցուածքներ կան, 2 վերին և 2 ստորին և ընդ-
դիմակաց (ձեւ 45 և 57), որք ձայնային նեարդեր կ'ան-
ուանին, վերին ու ստորին ձայնային նեարդից միջեւ
գտնուած անջրպեան շնչափոյիլ փորով կը կոչուի: Վերին,
որպէս և ստորին ձայնային նեարդերն իրարու հետ կո-
ճակի ծակի նման անցքեր կը կազմնին:

Խոչափողն՝ ներսէն շարժեաթերթների վերնամաշկով
ծածկուած հուզաթաղանթով մը պատեալ է, զոր վեր-
ցընելով կը հաստատենք թէ՝ վերին նեարդերն միայն
շարակցական առածիղ թելերէ կազմուած են, իսկ ստո-
րիններն մինային խուրձեր կը պարունակեն՝ որոց կծկ-
մամբ ստորին չուրթերն կը պնդանան, կը թանձրանան
ու կը կարճան և իրենց ձայնարան անուանեալ անցքն
կը նեղնայ, որով և յառաջ կուգայ ձայնի արտադրու-
թիւնն. ասոնք են հետեւաբար բուն ձայնային նեարդերն,
որք կանանց ու մանկանց համար աւելի նուրբ են:

Խոչափողի վերին յառաջակողմն և լեզուի արմատի
տակն հաստատուող և դէպ ի կողորդն երկարեալ նեար-
դաճառային լեզուակն որ մակաղեզու կ'անուանի, ի հար-
կին՝ ինչպէս կլանելու պահուն՝ խոնահելով խոչափողն
կը փակէ իրբեւ կափարիչ:

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Խոչափողն ճիշդ փչողական նուագարանի մը կը նմանի, ձայն արտադրելու համար, անոր նման երեք պայմաններ կը պահանջէ: 1. Օդային հոսանք մը՝ որ թռքերէն կուգայ, 2. մի փող՝ որոյ ձեւն ունի խոչակն և 3. շեղուակ մը զոր կը ներկայացնեն ձայնային նեարդերն:

Ձայնային նեարդերն հանգստի ատեն թոյլ են. շնչառութեան պահուն իրարմէ կը հեռանան. իսկ արտաշնչութեան ժամուն կը մերձենան: Ձայն արտադրելու համար զօրաւոր տրտաշնչութեամբ օդի հոսանք մը թռքերէն դուրս կը մղենք, միեւնոյն ատեն ձայնային նեարդերն իրենց մկներու միջոցաւ ջղերու կծկմամբ կը պընդանան և շուրթերն իրարու մօտենալով անցքն կը փոքրնայ, օդային հոսանքն այս շուրթերուն բաղխուելով զայնս կը ճօնեցնէ, ուրկէ յառաջ կուգայ ձայնն: (*)

Վ Ե Ր Ջ

(*) Մարդկային կազմախօսական և բնախօսական զործի մը մէջ հարկ էր և խօսիլ ծննդական զործառնութեանց մասին, սակայն ներկայս նախակրթանաց յատուկ դասագիրք մըլլալուն զանց կ'ընեմք. արդէն առ այդ ունիմբ մանմաւոր զործ մը ՄՆԿԴԱԿԱՆ ԴՈՐԾԱՐԱՆՔ կազմախօսութեան, Բնախօսութեան և Առողջապահութիւն անուամբ:

Ց Ա. Ն Կ Ն Ի Ւ Թ Ո Յ

ՅԱՌԱԶԱՐԱՆ

ՀԵԽՍՈՒԱՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՆՈՅՈՒԹԻՒՆՔ	Եջ
Վերսամաշկային հիւսուած	8
Շարակցական	»
Ածառային	12
Ուկրային	12
Մկնային	14
Զղային	16
Արիւն	17
Աւիշ	19

ՄԱՐԴԿԱՑԻՆ ԿԱԶՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐՍՈՒԹԻՒՆՔ

Մ Ա Մ Ն Ա.

ՍՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա. ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

Կազմախօսութիւն	21
Բնախօսութիւն	30

ԳԼՈՒԽ Բ. ՇՆԱՍՈՒՏԻՏՐՈՒԹԻՒՆ

Կազմախօսութիւն	35
Բնախօսութիւն	38

ԳԼՈՒԽ Գ. ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

Կազմախօսութիւն	41
Բնախօսութիւն	48

ԳԼՈՒԽ Դ. ՄՆԱԿՈՒՄՆ


ԳԼՈՒԽ Ե. ԶԱՏՈՒՅՈՒՆ

ՀԱԽԹԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱԽԹԱԶԱՏՈՒԹԻՒՆ	
Գեղձերու կազմին	56
Գեղձերու բնախօսութիւնն	57

		Եջ
Ա.	Մարտողական գեղձեր	57
Բ.	Լեարդ	59
Գ.	Մորթային գեղձեր	61
Դ.	Ստինք կամ կաթնային գեղձեր	63
Ե.	Միզային գործարան	64

Մ Ա Ս Ն Բ .

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ		
ԳԼՈՒԽ Ա.	ԶԴԱՅԻՆ ԴՐՈՒՅԹԻՒՆ	
	Կաղմախօսութիւն	69
Ա.	Գանկողնայարային դրութիւն	69
Բ.	Կծկային ջղային դրութիւն	77
	Բնախօսութիւն	78
Ա.	Գանկողնայարային ջղային դրութիւն	81
Բ.	Կծկային ջղային դրութիւն	86
ԳԼՈՒԽ Բ.	ԶԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ	
	Տեսանելիք	88
	Լսելիք	99
	Հոսոտելիք	104
	Ճաշակելիք	106
	Շօշափելիք	108
ԳԼՈՒԽ Գ.	ՇԱՐԺՈՒՄ	
Ա.	Ոսկրային դրութիւն	112
Բ.	Յօդուած ոսկերաց	118
Գ.	Մկնային դրութիւն և չարժում	119
ԳԼՈՒԽ Դ.	ԶԱՅԻՆ	
	Կաղմախօսութիւն	124
	Բնախօսութիւն	126



Ա
թ

2617-2620

«Ազգային գրադարան»



NL0066406

«Ազգային գրադարան»



NL0066405

«Ազգային գրադարան»



NL0066404

2013

«Ազգային գրադարան»



NL0066403

